

Հ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ
ՊԱՅՔԱՐԻ
ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ
1895-1898 թթ.**

**ԵՐԵՎԱՆ
2002**

ՀՐԵՎԱՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅ ԱՋԼՏԱԳՐԱԿԱՆ
ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ
1895-1898 թթ.

ԵՐԵՎԱՆ 2002
ՆՈՅՅԱՆ ՏԱՊԱՆ

ՀՏԳ 941(479.25
ԳՄԴ 63.3 (2Հ) 5
Գ 888

Տպագրվում է ԵՊՀ Հայոց պատմության
ամբիոնի եւ պատմության ֆակուլտետի
գիտական խորհրդի երաշխավորությամբ

Գրքի պատասխանատու խմբագիր՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Էդ. Գանիեյան**
Գրքի գրախոս՝
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ **Յու. Հովսեփյան**

Գ 888 **Գրիգորյան Հ. Բ.**

Հայ ազատագրական պայքարի
մարտավարությունը 1895-1898թթ.- Եր.,
«Նոյյան տապան», 2002, 96 էջ:

19-րդ դարի վերջի 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական պայքարի շատ կողմեր այսօր էլ գիտական հետաքրքրություն են ներկայացնում: Մասնավորապես, ազատագրական պայքարի մարտավարության հարցերը նորովի մեկնաբանության կարիք են գգում: Գրքում, սկզբնաղբյուրային հարուստ նյութի, պարբերական մամուլի եւ հիմնախնդրի վերաբերյալ հրապարակի վրա առկա ուսումնասիրությունների բազայի վրա լուսաբանվում են 19-րդ դարի վերջի հայոց ազատամարտի մի շարք հարցեր, փորձ է արվում նորովի գնահատել հայ ազատագրական պայքարի առանձին դրվագներ:

Գիրքը նախատեսված է պատմաբանների, ուսանողների եւ ընթերցող լայն հասարակայնության համար:

0503020913

Գ _____ 2002
804(01)-2002

ԳՄԴ 63.3 (2Հ) 5

ISBN 99930-51-43-8

© Գրիգորյան Հ.
© Նոյյան տապան

Ներածություն

19-րդ դարի վերջի - 20-րդ դարի սկզբի հայ ազատագրական պայքարի նկատմամբ չի խամրել գիտական հետաքրքրությունը: Դա միանգամայն բնական է, քանզի Հայաստանում եւ սփյուռքում հարուստ պատմագիտական գրականության առկայությամբ հանդերձ, հիմնախնդրի որոշ կողմեր այսօր էլ սպառիչ լուսաբանված չեն, իսկ մի մասն էլ վերագնահատության կարիք են գգում: Օրինաչափ էր այդ պայքարը, արեւմտահայությունն այլընտրանքի հնարավորություն ունե՞ր, պայքարի ընթացքում գործադրված միջոցներն որքանո՞վ էին ընդունելի եւ արդյունավետ, արդյո՞ք իրատեսական էին պայքարի ռազմավարությունն ու մարտավարությունը, ազգային-քաղաքական ուժերը բավականաչափ ճկու՞ն էին պայքարի ընթացքում համապատասխան մարտավարական շտկումներ կատարելիս, որքանո՞վ էր Հայկական հարցի լուծումը կախված արտաքին քաղաքական գործոններից...

Այս եւ նմանատիպ հարցադրումներն, անշուշտ, սոսկ հռետորական չեն, իսկ պատմագիտական ոչ աղքատ ժառանգության առկայության պայմաններում դրանց տրվող պատասխաններն էլ՝ ոչ միանշանակ: Կարծում ենք այսօր բոլոր հիմքերը կան, որպեսզի պատմագիտությունը հիմնախնդրի ուսումնասիրման գործում նախորդ շրջանին բնորոշ փաստական նյութի կուտակումից ու շատ դեպքերում էմպիրիկ շարադրանքից, քաղաքական ու գաղափարախոսական կաշկանդումներից որակական անցում կատարի դեպի փաստերի համակողմանի եւ օբյեկտիվ վերլուծություն՝ պատասխան տալով վերը նշված հարցադրումներին: Ըստ որում, այդ ուղղությամբ յուրաքանչյուր փորձ կանխավ դատապարտված կլինի ստույգ ձախողման, եթե ուսումնասիրողը հիմնախնդրին

չմոտենա պատմականության դիրքերից՝ դեպքերն ու գործընթացները չքննարկի ժամանակի որոշակի՝ անկրկնելի պայմանների մեջ, այլ հետին թվով՝ մարգարեանալու ձգտումով: Յավոք, ոչ վաղ անցյալում պատմագիտությունն այդ հարցում ունեցել է որոշակի. եւ ամենեւին էլ ոչ եզակի. օրինակներ:

Մեկ գրքի շրջանակներում, անշուշտ, անհնարին է եւ մնան հավակնություն էլ չունենք տալ վերը շարադրված հարցադրումների սպառիչ եւ հիմնավորված պատասխանը: Պարզապես կփորձենք անդրադառնալ հայոց ազատամարտի համար սկզբունքային նշանակություն եւ կարևորություն ունեցող պայքարի մարտավարության հարցին եւ ներկայացնել այն էվոլյուցիան, որն ապրել է հայոց ազատամարտը 1895-1898թթ.՝ մեր ժողովրդի արեւմտահայ հատվածի համար ստեղծված չափազանց ծանր պայմաններում:

Հայկական հարցի միջազգայնացված եւ 1890-ական թվականների կեսերին վերաբացված լինելն այն գործոններն են, որոնցից վերացարկվելը պարզապես անհնար է դարձնում այդ տարիների հայ ազատագրական պայքարի մարտավարության որեւէ ընկալում: Հետեաբար, վերջինիս հետ առնչվող հարցերը կարող են քննարկվել միայն Հայկական հարցի, եւ ընդհանրապես մերձավորարեւելյան խնդիրների, շուրջ տերությունների միջեւ ծավալված դիվանագիտական սուր պայքարի ու նրանց հակամարտ շահերի բախման համապատկերի վրա: Ըստ որում հիմնականում ուշադրության կենտրոնում կպահենք 1896-1897թթ. իրադարձությունները, երբ Հայկական հարցը դարձել էր մերձավորարեւելյան ճգնաժամի առանցքային խնդիրներից մեկը՝ դրանով իսկ էապես ազդելով ազատագրական պայքարի մարտավարության վրա:

1. «Ձուգակցված հարվածների» մարտավարությունը

1895-1898թթ. ընդգրկող համեմատաբար կարճ ժամանակահատվածում հայ ազատագրական շարժման գլուխկանգնած ուժերի կողմից կիրառված պայքարի մարտավարությունն ուսումնասիրության օբյեկտ դարձնելը թեւադրված է այն հանգամանքով, որ այդ տարիները յուրատեսակ անցումային փուլ են ազատագրական զինված պայքարի գործընթացում: Դրանում մի կողմից պահպանվում են նախորդ փուլի մարտավարության որոշակի տարրեր, մյուս կողմից ուրվագծվում պայքարի հետագա ընթացքի վերաբերյալ քաղաքական ուժերի կողմից որդեգրված նոր մոտեցումներ. դրսևորվում նախորդ շրջանի իրադարձություններն արժեւորելու եւ ավելի արդյունավետ միջոցներ կիրառելու փորձեր: Ի տարբերություն նախորդ տարիներին բնորոշ ակնհայտ ռոմանտիզմին, ինչը դրսևորվում էր քաղաքական ուժերի շրջանում հայդուկային կամ պարտիզանական պատերազմի դերի գերազնահատմամբ, այն արագորեն ընդհանուր ապստամբության վերածելու մտայնության գերակայությամբ եւ ինչն արտացոլվել էր քաղաքական կուսակցությունների ծրագրերում ու նրանց կողմից հրատարակված առաջին փաստաթղթերում՝ Սասունի 1894թ. եւ, հատկապես, Ձեյթունի 1895թ. ապստամբություններից հետո պայքարի հետագա մարտավարության հարցում սկսում են դրսևորվել սկզբունքորեն նոր մոտեցումներ:

Ընդունելի չէ պատմագիտական գրականության մեջ որոշակի նկատառումներով շրջանառության մեջ դրված այն թեզը, համաձայն որի հայոց զինյալ ազատամարտի ողջ ընթացքում այն ղեկավարող ուժերը չեն հրաժարվել պայքարի սկզբնական մեթոդներից, չեն փորձել գտնել ավելի արդյունավետ միջոցներ: Այդ առումով հատկանշական է Լեոյի տեսակետը. «Կարելի էր... հույս դնել, որ

1 Տես Ծրագիր հնչակեան կուսակցութեան, Լոնթոն, 1897, էջ 10-11, նաեւ «Դրօշակ», 1891, N 2, սեպտեմբեր:

ժամանակի ընթացքում հայ կազմակերպությունները կը զգաստանան, կը բուժվեն ռոմանտիզմից, կը սկսեն բազմաթիվ փորձերով, խրատված մտքի լրջությամբ ըմբռնել քաղաքական դասավորումների ույժերի փոխհարաբերությունների թեալ պահանջները եւ դրանց համեմատ էլ գործողության այս կամ այն յեղանակի փոփոխումներ կը կատարեն: Բայց ի դժբախտություն հայ ժողովրդի այդպիսի հույսերը չարդարացան: Ինչպիսի սկզբնական մեղքերի մեջ ծնվեցին այդ կազմակերպությունները, նույնպիսի մեղքերով էլ գնացին մինչեւ իրենց կատարյալ կործանումը»²:

Հայոց ազատամարտին տրված իր գնահատականներում Լեոյից շատ հեռու չի գնում Լ. Չորմիսյանը. «Կուսակցութիւններու գործունեութեան ամենէն անհասկանալի եւ անբացատրելի իրողութիւնը կը կազմէ վատահար անոնց ղեկավարներուն անխորտակելի համառութիւնը գործնական կեանքի փորձերէն որեւէ խրատ չառնելու: Քաղաքական գործունեութեան միջոցներէն իբրեւ մեկը յեղափոխական պայքարի մեթոտը ընդունելու որոշումը շատ հասկանալի է արեւմտահայութեան ընդհանուր պայմաններուն մեջ: Այդ մեթոտին առաջին փորձերը, երիտասարդական խանդավառ տրամադրութիւնով պատրաստուած, հասկանալի են նույնպէս իրենց ձախող արդիւնքներով: Ինչ որ անհասկանալի եւ մութ կը մնայ այդ փորձերուն մնայուն եւ տեվական կրկնութիւնն է»³:

Տալով նմանատիպ գնահատականներ եւ անվանապես ընդունելով հայ ազգային հեղափոխության օրինաչափությունը, վերը հիշատակված հեղինակները, սակայն, չեն առաջարկում գործելակերպի այն այլընտրանքը, որը կարող էր հանգեցնել Հայկական հարցի դրական լուծմանը: Նրանք երկչոտ փորձ են անում գրել սուլթանի հետ համաձայնության ինչ-ինչ եզրեր որոնելու, ծայրահեղ եւ ոչ ծայրահեղ միջոցներով ինչ-որ զիջումներ կոր-

գելու մասին⁴, ինչն առնվազն անհասկանալի է, քանի որ իրենք էլ ընդունում են Բեռլինի վեհաժողովից հետո հայերի բնաջնջման թուրքական քաղաքական ծրագրի գոյության փաստը⁵:

Անշուշտ, չի կարելի բացարձակացնել քաղաքական կուսակցությունների գործունեությունը եւ ժխտել հայոց ազատամարտը գլխավորող գործիչների կողմից հատկապես պայքարի առաջին տարիներին վարած ոչ իրատեսական քաղաքականությունն ու թույլ տրված սխալները: Կյանքն արագորեն ցույց տվեց զինյալ պայքարին արեւմտահայության պատրաստ լինելու մտայնության անհրատեսական լինելը: Չարդարացան նաեւ հայդուկային-պարտիզանական կռիվներն ընդհանուր ապստամբության վերաճելու հույսերը: Անգամ Սասունի 1894թ. եւ Չեյրունի 1895թ. ապստամբությունները, որոնք 1890-ականների առաջին կեսին Երկրում ծավալված զինված պայքարի ամենահզոր դրսեւորումներն էին, ակնհայտորեն ցույց տվեցին ընդհանուր ապստամբությանն արեւմտահայության անպատրաստ լինելը: Հայկական հարցի գործնականին դրանց ներդրումը սոսկ մերձավորարեւելյան ճգնաժամի նոր փուլի սկզբնավորումը եւ դրանում Հայկական հարցի առաջին պլան մղվել էր:

Սասունի 1894թ. իրադարձությունների շուրջ ամիսներ շարունակ ծավալված դիվանագիտական պայքարի հանրագումարը դարձավ 1895թ. մայիսի 11-ին սուլթանին ներկայացված հայկական բարենորոգումների անգլո-ֆրանս-ռուսական համատեղ նախագիծը⁶, որի շուրջ հետագա ամիսներին ծավալվեց իսկական դիվանագիտական պատերազմ: Թեեւ այդ նախագիծը խիստ չափավոր էր՝ հայերի կողմից ընդունելի լինելու համար, բայց ընդունելի չէր նաեւ Աբդուլ Համիդ 2-րդի համար:

4 Տե՛ս նույն տեղում, էջ 421:

5 Տե՛ս նույն տեղում, էջ 122-124: Լեո, նշված աշխատ., էջ 39:

6 Տե՛ս Հայաստանը միջազգային դիվանագիտության եւ սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). Ջ.Ս.Կիրակոսյանի խմբ., Երևան, 1972, էջ 130-147:

2 Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 78-79:

3 Լ. Չորմիսյան, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմութեան, Բ հատոր, Պէրոտ, 1974, էջ 420:

Չնայած կեղծավոր հայտարարություններին, վերջինս միանշանակ բացասական դիրքորոշում ուներ բարենորոգումների խնդրում: «Այն ինչ որ անվանում են Բարենորոգումներ՝ փտափորեն կարելի է ասել, մեր կործանումն է, – գրում է սուլթանն իր հուշերում, – Ինչու՞ են ցանկանում մեզ հետ ժառանգական թշնամութեան մեջ գտնվող պետությունները Բարենորոգումները մեր գլխին կապել, որովհետև նրանք լավ գիտեն որ այդ Բարենորոգումները պարունակում են իրենց մեջ մեր պետութեան կործանման պացիլները»: Նման համոզմունքների տեր անձնավորությունը, բնականաբար, ամեն ինչ պետք է ամեր հայկական բարենորոգումների ծրագիրը թաղելու համար: Այդ հարցում նա վարպետորեն օգտագործում էր մեծ տերությունների շահերի հակամարտությունը Մերձավոր Արևելքում: Հայկական հարցում գնալով որոշակի քայլերի, Անգլիան, Ֆրանսիան, Ռուսաստանը եւ մյուս տերությունները, բնականաբար, չէին կարող վերացարկվել իրենց մերձավորարեւելյան ընդհանուր քաղաքական շահերից: Դա գործնականում բացառում էր նրանց կատարյալ համերաշխությունը: Եթե հետագա ամիսներին Սուլթերիի գլխավորած անգլիական կառավարությունն աստիճանաբար ուժեղացնում էր ճնշումը սուլթանի վրա՝ վերջինիս պարտադրելով ձեռնամուխ լինել բարենորոգումների իրականացմանը*, եւ առաջարկում տերություններին կտրուկ ու համատեղ քայլերի դիմել՝ անգամ դնելով Օսմանյան կայսրության բաժանման հարցը, ապա այդ տարիներին իր արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը Հեռավոր Արեւելք փոխադրած Ռուսաստանը՝ ի դեմս արտագործնախարար, իշխան Ա.Լոբանով-Ռոստովսկու, ամեն կերպ հակադրվում էր դրան եւ, բացառելով Անգլիայի միայնակ հանդես գալու հնարավորությունը, փորձում սառեցնել Արեւելյան հարցը, ձախողել Եգիպտոսի ու սեւծովյան նեղուցների

7 Գուրգեն Եսազընեան, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Պէյրոս, 1980, էջ 819:

8 Տե՛ս Գ. Լազնան, Հայաստան եւ հայ դատը. հայ եւ ռուս յարաբերություններու լոյսին տակ, Երևան, 1991, էջ 76-86:

հարցում անգլիական ծրագրերը, պահպանել Օսմանյան կայսրության «ամբողջականությունն ու ինքնուրույնությունը», «բույլ շտալ իր սահմանների մոտ Անգլիայի ազդեցության տակ գտնվող հայկական պետական կազմավորման ստեղծումը»: Ավելին, երբ Ավստրո-Հունգարիայի արտգործնախարար Ա.Գոլուխովսկին առաջարկեց, որ Բեռլինի դաշնագիրը ստորագրած տերություններն «անկարգությունները» դադարեցնելու նպատակով Մեծովյան նեղուցներ մտցնեն իրենց ռազմաճակատը, Ռուսաստանը հանդես եկավ նաեւ դրա դեմ՝ փոխարենն ընդամենն առաջարկելով եվրոպացիներին պաշտպանելու նպատակով կրկնապատկել Կ.Պոլսում տերությունների ունեցած ռազմաճակատի թիվը՝ դրանք դարձնելով երկուական¹⁰:

Օգտվելով անգլո-ռուսական հակամարտությունից, սուլթանը ոչ միայն ձախողում է բարենորոգումների իրականացումը, այլեւ 1895թ. աշնանը Արեւմտյան Հայաստանում եւ կայսրության հայաբնակ այլ վայրերում իրականացնում հայկական զանգվածային ջարդեր: Այդ հանգամանքը փաստորեն նաեւ Ռուսաստանի այն ժամանակվա իշխանությունների վրա է դնում ոչ միայն հայկական բարենորոգումների ձախողման, այլեւ 1895թ. աշնանը եւ հետագայում կատարված ջարդերի մեղքի ու պատասխանատվության մի որոշակի բաժին: Հանգամանք, որը չեն ժխտում նաեւ առանձին ռուս հեղինակներ:

Այս ամենից հետո, թեւ 1895թ. հոկտեմբերին սուլթանը ձեւականորեն հայտարարում է բարենորոգումները գործադրելու իր որոշման մասին, բայց իրականում այն հայերի բնաջնջման որոշում էր: Անգլիացի գրող եւ թուրքական պատմության գիտակ Լորդ Կինրոսը (Պատրիկ Բալֆուր), անդրադառնալով այդ հարցին, շատ դիպուկ է գնահատում Պետերբուրգում Թուրքիայի նախկին դես-

9 Տե՛ս В. А. Емел, А. В. Игнатев и др., История внешней политики России. Конец XIX начало XX века, Москва, 1999, стр. 101-103.

10 Տե՛ս նույն տեղում, էջ 104:

պան Շաքիր փաշայի դերը, որի վրա էր դրված բարենորոգումների իրականացման պարտականությունը. «Իրականում նրա (Շաքիր փաշայի՝ չ. Գ.) դերը յուրաքանչյուր առանձին վերցրած շրջանում զանգվածային սպանությունների ծրագրավորումն ու իրագործումն էր: Շաքիր փաշայի նպատակը լիակատար ոչնչացման հեռանկարով հայ բրիտանացիների թվաքանակի անխնա կրճատումն էր եւ հոգուտ թուրք-մահմեդականների նրանց հողերի բռնագրավումը»¹¹:

Այսպիսով, ազատագրական պայքարի առաջին տարիների հաշվեկշիռը դրական չէր արեւմտահայության համար: Հսկայական զոհերի հանդեպ ակնհայտորեն չնչին կամ ոչինչ էին ձեռքբերումները: Դա, բնականաբար, առաջին պլան պետք է մղեր հետագա գործելակերպը ճշգրտելու հարցադրումը: Հայությունը կամ պետք է դարեցներ զինված պայքարը, որն իրականացվող ցեղասպանության քաղաքականության պայմաններում հավասարագոր էր անձնատվության՝ դրանից բխող գուցե շատ ավելի ծանր հետեւանքներով, կամ պետք է շարունակեր այն՝ ընտրելով ավելի արդյունավետ միջոցներ, միաժամանակ, առաջնահերթ խնդիր ունենալով նոր, զանգվածային ջարդերի կանխումն ու բացառումը:

Բնականաբար, առաջին հերթին այդ ընտրության առաջ պետք է կանգներ 1890-ականների առաջին կեսին զինյալ պայքարի գլուխ կանգնած քաղաքական ուժը՝ հնչակյան կուսակցությունը, որի ուսերին էին ծանրացած ոչ միայն գործնական պայքարի կազմակերպման դժվարությունները, այլեւ դրանց անմիջական հետեւանքների համար քաղաքական պատասխանատվությունը: Հայոց ազատամարտի առաջին շրջանի բնավ էլ ոչ միսիթարական արդյունքների համապատկերի վրա միանգամայն բնական էր այդ կուսակցության պառակտումը Ջեյթունի ապստամբության ավարտից անմիջապես հետո: Եթե կուսակցության Ա. Նազարբեկյանի գլխավորած ու հիմնականում կովկասահայերից կազմված թեւը հետագա

տարիներին, ըստ էության, գրեթե դուրս մղվեց արեւմտահայ ազատագրական պայքարից, ապա վերակազմյալ հնչակյան անվանումը ստացած թեւը, որը գերազանցապես համարված էր զինյալ պայքարին անմիջականորեն մասնակցած եւ ծագումով արեւմտահայ գործիչներով, որոնք համեմատաբար ազդեցիկ դիրքեր ունեին հատկապես Կիլիկիայում ու Կ. Պոլսում, 1896թ. հրավիրված իր առաջին համագումարում առաջիկա մարտավարության վերաբերյալ ընդունեց միանգամայն իրատեսական որոշում. «...Նկատի ունենալով, որ մասնակի ցոյցերու գործունեութիւնը այսուհետեւ չի կարող օգտակար ըլլալ ապստամբական գործին, նկատելով, որ՝ բարթիզանական կռիւը, հրոսակային խումբերու գործունեութիւնը եւ մասնակի ապստամբութիւնները լոկ միջոցներ են՝ քաղաքական կեանքից զրկուած ժողովուրդներին մարտական ոգի ներշնչելու. կռուի եւ քաղաքական կեանքի պատրաստութեան համար եւ տեսնելով որ՝ Հնչակեան կուսակցութեան ինը տարուան այդ ուղղութեամբ գործադրած աշխատանքները արդէն իրենց նպատակին հասել են, եւ այսուհետեւ այդ միջոցների գործադրումը վնասակար կը լինի, ուժերը կը ջլատեւ եւ կը վատնեւ, նկատելով որ՝ սոցիալիզմը աւելորդ եւ վնասակար է հայոց դատին համար, ժողովը որոշում է՝ դադարեցնել այդ գործունեութիւնը եւ պատրաստուիլ ընդհանուր ապստամբութեան»¹²:

Այսպիսով, նախորդ տարիներին պայքարը ղեկավարող ուժը ճշգրտում է իր գործելակերպը: Այն մի կողմից որոշակիորեն սահմանազատվում է սոցիալիզմից, որպես տվյալ փուլում Հայկական հարցի համար ոչ պիտանի ու վնասակար գաղափարից, մյուս կողմից՝ որդեգրում ընդհանուր ապստամբության համար ուժերի նախապատրաստության քաղաքական ուղեգիծ, որն, անշուշտ, ամենացանկալին եւ արդյունավետը կարող էր լինել հայոց ազատամարտի համար: Մինչդեռ նույն թվականից ազա-

¹¹ Лорд Китрос, *Ростет и упадок Османской империи*, Москва, 1999, стр. 607.

¹² Պատմություն Ա. Գ. Հնչակեան կուսակցութեան 1887-1962. Ա. հատոր. Պէյրոս, 1962. էջ 268-269:

տագրական պայքարի դեկը ստանձնած դաշնակցությանը նույն գաղափարին հանգելու համար դեռես որոշակի ժամանակ էր պետք:

Դրանով հանդերձ, արդարությունը պահանջում է արձանագրել, որ Հայկական հարցի ու ընդհանուր ապստամբության հեռանկարների հարցում դաշնակցությունն ավելի վաղ էր հստակեցրել իր տեսակետը: Դեռես 1895թ. սկզբին տեղի ունեցավ ՀՅԴ «ընդհանուր» ժողով, որն ինչ-ինչ հանգամանքներում հետագայում ստացավ «առյուծական» կամ «շրջանային» ժողովի կարգավիճակ, բայց որի որոշումները խիստ կարեւոր էին հետագա անելիքների ճշգրտման առումով: Անդրադառնալով ազատագրական պայքարի հեռանկարների հարցին. այն արձանագրեց, որ «ազատութիւնը պահանջում է... ծանր եւ վտանգալի ձիգ տարիների անխոնջ գործունեութիւն... Ժողովրդական ապստամբութիւնը երկնքից չէ իջնում եւ ոչ էլ գետնից սունկի պէս բուսնում, այլ նախապատրաստում, կնքում, սրբագործում է նոյն ազգի բոլոր մաքուր զաւակների տասնեակ տարիների ընթացքում գործ դրած անընդհատ դառնագին աշխատանքով... Հայկական յեղափոխական դրամայի առաջին գործողութիւնն է միայն, որը, անշուշտ, տեղի կը տայ շուտով միւս գործողութիւններին... Պետք է պատրաստ լինել, պետք է զինուել... Ծակատագրական կռիւը յայտնուած է, յետ դառնալը կամ դանդաղկոտութիւնը ամօթալի, մահաբեր, նոյնիսկ անկարելի է...»¹³: Ըստ որում, նույն ժողովն իր կարեւոր խնդիրն էր համարում «...գալ համաձայնութեան այն ընթացքի վերաբերմամբ, որ հարկավոր է բռնել ներկայ բարդ հանգամանքներում, որպէսզի բոլոր խմբերի գործողութիւնների մեջ լինի ներքին համերաշխութիւն Տաճկահայաստանի ազատութեանը աւելի կատարելութեամբ հասնելու համար»¹⁴:

Այսպիսով, գիտակցվում էր նոր մարտավարության

13 Նիսիեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Ի. հատոր, Պէյրոս, 1985, էջ 19-20:
14 Նույն տեղում, էջ 18:

անցնելու անհրաժեշտությունը: Սակայն, 1895թ. վերջին ամիսներին Արեւմտյան Հայաստանում եւ Օսմանյան կայսրության հայաբնակ վայրերում ծավալված իրարարժությունները կանխորոշում են ՀՅԴ գործունեության միանգամայն այլ ընթացք: Հետագա երկու տարիներին թե՛ բուն Երկրում, թե՛ Կ. Պոլսում ՀՅԴ կողմից ակնհայտորեն դրսևորվում են հարձակողական գործելակերպի միտումներ, ինչը հիմք է տալիս այդ տարիներին դաշնակցության որդեգրած մարտավարությունը պայմանականորեն անվանել «անցումային» կամ «զուգակցված հարվածների» մարտավարություն:

Այն «անցումային» կարելի է անվանել, քանի որ այդ տարիներին ՀՅԴ գործունեության մեջ մի կողմից շարունակում են կիրառվել նախորդ տարիներին բնորոշ գործելակերպի որոշակի տարրեր, մյուս կողմից զինյալ պայքարի գործընթացում դրսևորվում են նոր միտումներ, որոնք ավելի տիպական էին հետագայում՝ 1898թ. որդեգրված նոր մարտավարությանը:

Այդ տարիներին ՀՅԴ որդեգրած քաղաքական գիծը կարող է բնութագրվել նաեւ որպէս «զուգակցված հարվածների» մարտավարություն, քանի որ դրան բնորոշ էր Երկրում, Կ. Պոլսում ու կայսրության ծովեզրյա խոշոր քաղաքներում միաժամանակյա կամ ժամանակի առումով մեկը մյուսին անմիջապէս հաջորդող երկու եւ ավելի զուգակցված ու մասշտաբային հարվածներ հասցնելու գործելաոճը:

Քանի որ այդ տարիներին դաշնակցությունն արդեն հայոց ազատամարտի առաջատար ուժն էր, ուստի նրա կողմից կիրառվող վերը նշված մարտավարությունն էլ տիրապետող է դառնում հայ ազատագրական շարժման համար: Այդ մարտավարության գլխավոր քաղաքական խնդիրն է դառնում Հայկական հարցի օգտին միջազգային միջամտության ապահովումը: Դրա վրա եական ազդեցություն են բողնում մի կողմից Հայկական հարցի շուրջը ծավալված դիվանագիտական գործընթացները, երկրորդ դեպքում՝ զանգվածային ջարդերն ու դրանց ար-

դյունքում ստեղծված բարոյա-հոգեբանական ծանր իրավիճակը եւ վերջապես՝ պայքարի նախորդ շրջանից քաղած որոշ դասեր:

Նախ, զանգվածային ջարդերից հետո հայության միջավայրում ձեւավորված բարոյա-հոգեբանական մթնոլորտը, բնականաբար, օրակարգում դնում է վրեժխնդրության հարցը: Օսմանյան կայսրությանը հասցվելիք հուժկու հարվածները մի կողմից բարոյական մասնակի բավարարվածություն կտային հայությանը, կբարձրացնեին նրա կորովը, կամրապնդեին ինչ-որ տեղ սասանված վստահությունը սեփական ուժերի նկատմամբ, մյուս կողմից՝ կսաստեին թուրք-քրդական մոլեռանդ զանգվածին եւ, ի վերջո, թուրքական պետությանը ցույց կտային հայոց ազատամարտի կենսունակությունն ու շարունակականությունը՝ ստիպելով նրա հետ հաշվի նստել որպես ռազմա-քաղաքական լուրջ գործոնի: Ըստ որում, այդ խնդիրը հնարավոր կլինեք իրականացնել միայն այն դեպքում, եթե հայոց ազատամարտը դուրս գար ինքնապաշտպանական շրջանակներից եւ ընդունեք հարձակողական երանգներ:

Թեեւ Հայկական հարցի գլխավոր ճակատը մնում էր բուն Երկիրը, որտեղ շարունակվում էր ազատագրական պայքարը, այնուհանդերձ, այնտեղ ուժերի հաշվեկշիռը հայության օգտին չէր եւ վերջինս ի վիճակի չէր սեփական ուժերով ապահովելու հարցի բնականոն լուծումը: Այդ առումով կարետոր նշանակություն ուներ միջազգային հանրության ուշադրության պահպանումը, քանի որ ստեղծված իրավիճակում հարցի դրական լուծման գործում վճռորոշ դերը պատկանում էր միջազգային դիվանագիտությանը: Ճիշտ է, նախորդ ամիսներին ռուս-ֆրանսիական ջանքերով որոշակիորեն չեզոքացվել էր Հայկական հարցում անգլիական ակտիվությունը, սակայն հարցը շարունակվում էր մնալ օրակարգում եւ ալեկոծել եվրոպական հասարակական կարծիքը: Դա հույս էր ներշնչում, որ Օսմանյան կայսրությունում իրավիճակի նոր անկայունացումը կրկին առաջին պլան կնդի Հայկա-

կան հարցը եւ հայությանը կրեքի ցանկալի լուծումներ:

Հայկական հարցի նոր ակտիվացման պահանջն անհրաժեշտաբար դնում էր գինյալ պայքարը բուն Երկրի սահմաններից դուրս բերելու խնդիրը: Արեւմտյան Հայաստանը շատ հեռու էր Եվրոպայից եւ այնտեղ ծավալված անգամ ամենաբուռն իրադարձությունները հարկ եղած միջազգային արձագանքը չէին ստանում, քանի որ դրանց վերաբերյալ տեղեկատվությունը տեղ էր հասնում կցկտուր եւ մեծ ուշացումով: Հետեւաբար՝ պետք էր լրացուցիչ ազդակ, շնորհիվ որի հայոց ազատամարտի մասին լուրերը ժամանակին կհասնեին Եվրոպա: Աշխարհագրական հարմար դիրքի, տնտեսական ու ռազմաքաղաքական մի շարք հանգամանքների պատճառով նման ազդակ կարող էին հանդիսանալ Օսմանյան կայսրության մայրաքաղաքում եւ ծովեզրյա խոշոր քաղաքներում կազմակերպվող գործողությունները:

Խիստ յուրահատուկ էր Կ.Պոլսի դերը հայ ազատագրական շարժման համար: Օսմանյան կայսրության դեմ ազատագրական պայքարի դուրս եկած ժողովուրդներից ոչ մեկը մինչ այդ չէր փորձել Կ.Պոլիսը վերածել պայքարի լուրջ թատերաբեմի: Բալկանյան ժողովուրդների պարագայում դա միանգամայն հասկանալի էր: Մշտապես գտնվելով եվրոպական դիվանագիտության տեսադաշտում, նրանք իրենց վրա ուշադրություն հրավիրելու համար Կ. Պոլսում ծայրահեղ քայլերի դիմելու անհրաժեշտությունը չէին զգում: Մյուս կողմից, հույներից բացի, Բալկանյան մյուս ազգությունները չնչին բաժին ունեին Կ.Պոլսի բնակչության մեջ եւ չէին կարող այնտեղ շատ ակտիվ լինել: Միանգամայն այլ էր իրավիճակը հայերի համար: Առաջին աշխարհամարտի նախօրյակին Կ.Պոլսի շուրջ 1,2 մլն. բնակչության 18%-ը (թուրքերից հետո ամենամեծաքանակը)՝ հայեր էին¹⁵: Անշուշտ, պոլսահայությունը քաղաքական ու մարդկային վիթխարի կապիտալ էր, որը մտավոր ու տնտեսական առումով ավելի

15 Տես Գորգեն Եազըճեան, նշված աշխատ., էջ 442: Նաեւ՝ Թեոդիկ, «Ամենուն տարեցույց», ԺՁ տարի, 1922, էջ 261-263:

բարձր լինելով բուն Երկրի հայութունից, բնականաբար չէր կարող դուրս մնալ հայ քաղաքական ուժերի տեսադաշտից: Բայց եթե հնչակյանները 1890-ականների առաջին կեսին հիմնականում բավարարվում են այստեղ խաղաղ ցույցեր կազմակերպելով, ապա դաշնակցությունը հետագա տարիներին այն դարձնում է զինյալ պայքարի ասպարեզ՝ փորձելով կայսրության սրտում հասցված շոշափելի հարվածներով դրական լուծում ապահովել Հայկական հարցին: Այդ առումով Կ. Պոլսի դերը հատկապես աճեց, երբ սկզբնավորվեց եւ իրական դարձավ հայ-մակեդոնական դաշինքը, որը հնարավորություն ստեղծեց սուլթանական բռնապետության դեմ առաջին անգամ օգտագործել պայքարի սկզբունքորեն նոր, բայց ազդեցիկ այնպիսի զինամիջոցներ, ինչպիսիք էին դինամիտը, ուժանակն ու ռումբերը:

Հայ-մակեդոնական քաղաքական շփումները սկսվել էին Եվրոպայում՝ «Դրոշակի» խմբագրության միջոցով: 1895թ. կեսերին նման շփումներ տեղի են ունենում նաև Կ. Պոլսում եւ մի քանի ամսվա բանակցությունների արդյունքում վերածվում հայ-մակեդոնական դաշինքի:



Հովհաննես Յուսուֆյան (Մելիք)

Դեռես 1895թ. հունիսի 8-ին ՀՅԴ Կ. Պոլսի կազմակերպության ղեկավար Հ. Յուսուֆյանը (Մելիք) «Դրոշակի» խմբագրությանն ուղղված նամակում հայտնում է հայ-մակեդոնական շփումների մասին: «Բուլգարներու (մակեդոնացիների)՝ Հ. Գ.) ներկայացուցիչը երկու օր է հոս եկած է յատկապես մեզ հետ բանակցելու համար. գրում է Յուսուֆյանը. Անոնք կ'ուզեն գործել դինամիտով եւ մեր գործակցութիւնը կ'ուզեն: Մենք տակաւին... վերջնական համաձայնութիւն չտուինք: Եթէ համաձայնինք, պէտք է միաժամանակ գործենք Պոլիս եւ Մակեդոնիա: Կարծես թէ պիտի համաձայնինք...»¹⁶: Նույն տարվա հուլիսի 25-ին գրված

նամակում, հայտնելով մակեդոնացիների հետ պաշտոնական բանակցություններն ավարտելու մասին, Յուսուֆյանը ներկայացնում է կնքվելիք պայմանագրի բովանդակությունը, մասնավորապես նշելով, թե. «Հոս կ'ուզեն մեզի ձգել, իրենք կը խոստանան ինչքան պետք է մեզի հայքայթել (խոսքը դինամիտի մասին է՝ Հ. Գ.) եւ կը փափաքին, որ շուտով սկսինք... Հոս ինչ-որ ընենք այդ ուղղութեամբ, երկուքիս անունով պիտի ըլլայ, իսկ իրենցը՝ իրենց անունով, բայց արդեօք մի այսպիսի միացեալ գործունէութիւն մը մեր դատին արդի պայմաններու մեջ օգտակար թէ վնասակար կրնայ ըլլալ: Մենք սկզբունքով համաձայնած ենք, բայց միայն կը վախճանք թէ վնասենք, փոխանակ օգնելու ...»¹⁷: Հետագա շաբաթների ընթացքում, սակայն, փարատվում են համագործակցության նպատակահարմարության վերաբերյալ կասկածները: Ստացվում է նաև ՀՅԴ ղեկավար մարմինների համաձայնությունը: Մեպտեմբերի 9-ին Յուսուֆյանն արդեն հայտնում է դինամիտի առաջին խմբաքանակի ստացման եւ պայմանագրի շուրջ վերջնական համաձայնության գալու մասին¹⁸: Մեպտեմբերի 21-ի նամակում, որը գրվել է հնչակյանների կազմակերպած Բար Ալիի ցույցից հետո՝ Կ. Պոլսում ստեղծված ժանր իրադրության պայմաններում, Յուսուֆյանը հայտնում է, թե. «Վճռած ենք մակեդոնացիներու հետ ռումբ տինամիտի դիմել...»¹⁹: Մի քանի օր անց՝ սեպտեմբերի 26-ին նա ոչ միայն հայտնում է մեծ քանակությամբ ուժանակ եւ ռումբեր ստանալու մասին, այլև, ըստ էության, առաջին անգամ առաջ է քաշում Կ. Պոլսում ռումբային կռիվներ սկսելու գաղափարը, դա համարելով օրհասական վիճակում գտնվող հայության փրկության ելքը: Նա առաջարկում է «...ուլտիմատում մը ներկայացնել թուրք կառավարութեան ու վեց պետութեանց, եթէ չտրուին մեր պահանջները, սկսել-կամ ապրիլ կամ մեռնիլ վճռել: Ինչ անելու էք շուտ ըրեք, ալ սպասելու, դանդաղելու ժամանա-

17 Նույն տեղում, էջ 240:
18 Նույն տեղում, էջ 242:
19 Նույն տեղում, էջ 246:

16 Դիան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, Պոսթրն, 1934, էջ 238:

կը չէ... հակառակ պարագային մենք կը ջնջուինք բոլորովին այս ընթացքով 1-2 տարուայ մէջ, եթէ այս վիճակը շարունակուի...»²⁰:

ՀՅԴ ղեկավարության մեջ Կ. Պոլսի յուրահատուկ դերի հարցում այդ ժամանակ որեւէ տարակարծություն չկար: Դեռեւս 1895թ. նախատեսվում էր այնտեղ մեծ ցույց կազմակերպել մայիսյան բարենորոգումների ծրագրի իրականացման պահանջով: Բայց Ալիի ցույցը եւ դրան հաջորդած դեպքերը բենի ձախողեցին այդ մտահղացման իրականացումը, բայց ավելի ակնառու դարձրին Կ. Պոլսի դերն ու նշանակությունը:



Սիանտ Չախարյան

Այդ հարցում արտահայտելով ՀՅԴ բյուրոյի կարծիքը՝ Ս. Չավարյանը 1895թ. հոկտեմբերի 3(15)-ին «Դրոշակի» խմբագրությանը գրում է. «Պոլիսը առաջնակարգ դեր է խաղալու դեռ շատ օրեր, գուցէ տարիներ: ...ամենաքիչ վտանգը այստեղ ու ամենամեծ արդիւնատուութիւնը որեւէ գործի (հազար ուրբին Պոլիս արեւի մեծ գործ կը կատարէ, քանց 10 հազարը Խնուս, Վան, մի ոյժը անուան, գործի առաջանալու տեսակետից արեւի արդիւնք կը տայ Պոլսում, քանց 10 ոյժ Վան, Խնուս)... Մեզանից մէկը պիտի գնայ այնտեղ:

Այստեղից օգտակար կարող էինք լինել Թոփալն (Քրիստափոր Միքայելյանը՝ Հ. Գ.) ու ես»²¹:

Նույն օրերին Կ. Պոլիս՝ Հովհաննես Յուսուֆյանին ուղղված նամակում Ս. Չավարյանը զարգացնում է իր նախորդ գաղափարը. «Ի նկատի ունենալով երկրի հեռու լինելը, թղթակիցների բացակայութիւնը, Բարձր Դրան Պոլիս լինելը, ի նկատի ունենալով, որ այդտեղ 100 հազար գաղթական կայ եւ հայերը մի տեղ են, որ դա քաղաք է, ինձ թուում է, որ այդտեղի 10 ոյժի, 10 ուրբու գործը արեւի արծազանք կը ստանայ, քան 100 ոյժը եւ 100

20 Նույն տեղում:

21 Նույն տեղում, էջ 201:

ուրբուներ խուլ տեղերում: Ահա ինչու Պոլսի վրայ մեծ ուշադրութիւն պիտի դարձնել: Մանավանդ հիմա, երբ իսկական փոփոխութիւնները նոր են սկսուելու, հարկատր է ահագին հմտութիւն... Գուցէ ես ինքս կարողանամ մի քանի ամսից ձեզ մոտ անցնել»²²: Նոյեմբերի 6-ին Կ. Պոլիս ուղարկված նամակում Ս. Չավարյանն արդեն առաջարկում է որոշակի գործողություններ. «Այդտեղ աշխատեցեք, յարմարութիւնները բոլոր այդտեղ են. **քիսկը** համատարաբար քիչ, որովհետեւ տերութիւնները մօտ են, հասարակութիւնը արեւի շուտ ու արեւի ճիշդ գաղափար է կազմում, իսկ ներքին նահանգներից, գուցէ, ձայնը բոլորովին չի էլ հասնում: Մի խօսքով, այդտեղի արածը թէ՛ արեւի շուտ ուշադրութեան առարկայ կը դառնայ եւ թէ՛ պակաս **գոհ** կը պահանջի, գործ, գործ եւ էլի գործ, թէ կարող էք **մի բան քցրէք օդը** ...»²³:

Այսպիսով, 1895թ. վերջերին Կ. Պոլիսը հայտնվում է ՀՅԴ ուշադրության կենտրոնում: Անգամ շոշափվում է վերջինիս ղեկավարների Կ. Պոլիս փոխադրվելու հարցը: Օսմանյան դրամատան գրավմանը նախորդած ամիսներին մասնավորապէս առարկայորեն դրվում է Ռոստոմի (Ստ. Չորյան) Կ. Պոլսում հաստատվելու հարցը, որը չի իրականանում միայն վերջինիս անսպասելի հիվանդության պատճառով²⁴: Այնուհանդերձ, դա չի խանգարում, որ դրսից Կ. Պոլիս մտնեն մի շարք գործիչներ, որոնց վիճակված էր կարելու դերակատարություն ունենալ ծրագրված ձեռնարկների իրականացման գործում:

Նույն ամիսներին ուրվագծվում են նաեւ Կ. Պոլսում եւ Երկրում կիրառվելիք մարտավարության հիմնական սկզբունքները, հստակեցվում նպատակները, որոշակիացվում դրանց իրականացման մեխանիզմները:

Հայկական զանգվածային ջարդերն առաջացրել էին վրեժխնդրության բնական զգացողություն, հարվածներին պետք էր պատասխանել հարվածներով: Այդ մասին նույնիսկ բարձրաձայն հայտարարում էին ազատամարտի ո-

22 Նույն տեղում, էջ 205:

23 Նույն տեղում, էջ 213-214:

24 Տե՛ս, նույն տեղում, էջ 351, 391, հ. 2, Պոսթըն, 1935, էջ 253:

րոշ դեկավար՝ գործիչներ։ Անդրադառնալով Տրապիզոնի հայության 1895թ. ջարդերին, Ս. Չավարյանը գրում է. «Եթե նույնիսկ ռեֆորմները մտցնեն, այդ բարբարոսությունը այդպես չպիտի թողնել։ Արեժ է հարկատու, ոչ միայն վրեժի համար, այլ իբրև նախագուշտություն այդպիսի բարբարոսությունների... Իմ կարծիքս է. մի-երկու ամսից յետոյ եթե հանդարտություն լինի, **օղ ցնդեցնել** մի քանի տաճկաց **դեսպանատներ**, օրինակ, Պետերբուրգ, Փարիզ, Վիեննա... Նույնը կ'անենք եւ Պոլիս եւ կը յայտարարենք։ Ես բոլորովին լուրջ եմ խօսում սրա մասին»²⁵։

Մի քանի օր անց՝ հոկտեմբերի 9 (22)-ին գրած նամակում Ս. Չավարյանը շարունակում է նույն գաղափարը։ «Ինձ համար քանի գնում, այնքան ատելի է պարզում, որ ոյժ պիտի տալ **սեռօրին**։ Ինչպես գրած էի եւ ամսիս սկիզբի նամակի մեջ, այս բոլոր կանիբալական գործերից յետ անհրաժեշտ է դրանց պատասխանել նույնատեսակ կանիբալական միջոցներով»²⁶։ Թեեւ Ս. Չավարյանի կողմից դեսպանատները պայթեցնելու վերաբերյալ արված առաջարկները չափից ավելի ծայրահեղ էին թվում ընդունելի լինելու համար, այնուհանդերձ, պետական ահաբեկչությանը նույն կերպ պատասխանելու եւ Երկրում ակտիվ հարվածների դիմելու գաղափարները խիստ կենսունակ էին եւ ունեին ոչ սակավաթիվ կողմնակիցներ։ Դրանք պաշտպանություն են գտնում նաեւ «Դրոշակի» խմբագրության կողմից՝ ի դեմս Հոնան Դավթյանի եւ այդ ժամանակ Կ. Պոլսից հեռացած ու Ժնևում հաստատված Հովհաննես Յուսուֆյանի։

Հոնան Դավթյանի գրչով այդ օրերի տրամադրությունն էր արտահայտում «Դրոշակը»՝ գրելով հետևյալ տողերը. «Տմարդ թշնամին պիտի՝ պատժուի, պէտք է վրեժխնդիր լինել կոտորածների, սարսափների իսկական հեղինակից ու նրա հերոսներից։ Եւ մի՞թե կարող է պատահել, որ հայի... ընտանիքը բռնաբարողը ու անպատուողը, նրա տունը եւ ինչքը ատերողը, նրա արեան

մեջ լողացողը անպատիժ մնա՞յ, ո՞չ, նա պիտի պատժուի, պիտի՝ վրեժխնդիր լինել... այլևս յապաղելու չէ, տատանման թույլն վաղուց պիտի անցած համարել։

Եւ դաւաճան, ոճրագործ է նա՛, որ ձեռները ծալած հանդիսատեսի դերը կը կատարի...

Կոի՛ւ է, մորթու՛մ են, կռուենք»²⁷։

Թավրիզի գործիչներին 1896թ. փետրվարին ուղղված նամակում Հ. Դավթյանը տվյալ փուլում գործունեության գլխավոր միջոցներ է համարում «...տերրօրը եւ հայդուկային գործունեությունը եւ այն էլ կատաղի ձեռով»։ Նա առաջարկում է դեռ նետել դիվանագիտությունն ու քաղաքական հանգամանքները եւ «...սկսել գործունեություն եւ այն էլ քանդող, ատերող, հրդեհող, կոտորող...»²⁸։ Այդ գաղափարները պաշտպանելով հանդերձ՝ Հ. Յուսուֆյանի իր հերթին կոչ էր անում հրաժարվել թուրք զանգվածի նկատմամբ զուսպ քաղաքականություն վարելու, նրա «չեզոքացման» նախկին մարտավարությունից եւ վերջինիս հանդեպ վարել ավելի կոշտ քաղաքականություն։ «Ըստ իս եթե մեր կողմեն ատերուին, կործանուին, թալանուին... թուրք քանի մը գիւղեր, - գրում է Հ. Յուսուֆյանը, - այդ ատելի շուտով կը չեզոքացնէ քան թէ առաջուան տակտիկան, որ... այժմ... թէ՛ սխալ եւ թէ՛ վնասակար է։ Թուրքին երբ ձեռես, քո բարեկամը, քո շունը կը դառնայ... հետեւաբար մեր հայդ, խմբերը պիտի յարձակուեն թուրք գիւղերի վրա, ատերեն, կործանեն, այրեն եւ սարսափահար անեն թուրք ազգաբնակիցները, հրդեհեն կառավարական հիմնարկությունները... այս ձեռքը ըստ իս նախընտրելի է... ուղղակի պիտի սկսել եւ կատաղի, յարատեւ, անընդհատ կերպով... Եթե ձեր տրամադրութեան տակ ուժեր ունիք պատրաստի, առանց ուշացնելու թող արշաւեն թուրքիս եւ հանդիպած թուրք



Հոնան Դավթյան

²⁵ Նույն տեղում, էջ 202։

²⁶ Նույն տեղում, հ. 1, էջ 210։

²⁷ Հոնան Դավթյան, Ա. հատոր, Արեւիք, 1988, էջ 173։

²⁸ Դիան Հ. Յ. Դաշնակցության, հ. 1, էջ 266-267։

գիտերը աւերեն, հրդեհեն... եւ այս ամենից լաւ ու ազդու դասը կը լինի»²⁹:

Ակտիվ ու կտրուկ գործողությունների հարց դնելով՝ ՀՅԴ ղեկավար գործիչները դրանց հետ լուրջ քաղաքական ակնկալիքներ էին կապում: Նրանք համակարծիք էին, որ գործի դրվելիք ծայրահեղ միջոցառումների գերազույն նպատակը պետք է լինի արտաքին միջամտության առաջ բերումը: 1895թ. նոյեմբերին գրված նամակում Ս. Չավարյանն, անդրադառնալով այդ խնդրին, գրում է. «...մեր գլխատըր անելիքը չպիտի մոռանանք, թէ չէ հարցը եթէ հիմա չլուծուեց – ամեն ինչ տարուած է: Պիտի առաջ բերել միջամտութիւն (կոնֆերենցիա) կամ պատերազմ եւ մինչէն իրականացնելը (նահանգների գրաւելը ուրիշ տերութեան զօրքերով – ինձ թուած է առանց գրաւումի խաղաղութիւնը դժուար թէ կը վերականգնուի) գործը անպատճառ շարունակել, քանի մենք աւելի գործ, ոյժ ցոյց տանք, այնքան աւելի գրաւական կայ որ մեր ձայնը աւելի լսուած կը լինի»³⁰: Իրենց հերթին Հ. Դավթյանը եւ Հ. Յուսուֆյանը որպէս միջազգային միջամտության հնարավոր հետեւանքներ քննարկում են նաեւ Օսմանյան կայսրության բաժան–բաժան արվելու, կամ որպէս հայերի համար ընդունելի համեմատաբար վատթար տարբերակ՝ Արեւմտյան Հայաստանը Ռուսաստանի կողմից ռազմակալման ենթարկվելու հնարավորությունները³¹: Դա վկայում է, որ ազատագրական պայքարի ղեկավարներն, անշուշտ, որոշակի պատկերացում ունեին դիվանագիտական կուլիսներում ընթացող պայքարի եւ անգլիական, մեր կողմից արդեն հիշատակված, առաջարկների մասին:

Նույն նամակում՝ գործնականում արտահայտելով ՀՅԴ բյուրոյի կարծիքը, Ս. Չավարյանը որոշակիացնում է միջազգային միջամտություն առաջ բերելու նպատակով ձեռնարկվելիք քայլերը: Որպէս այդպիսիք նշվում են.

1. Գործունեության կտրուկ ակտիվացումը Կ. Պոլսում:

2. Հայրուկային նոր, մեծաքանակ խմբերի ստեղծումը եւ դրանց անհապաղ ուղարկումը Արեւմտյան Հայաստան: Մասնավորապէս առաջ է քաշվում Կարսի շրջանից՝ Էրզրումի, իսկ Պարսկաստանի տարածքից՝ Վասպուրականի ուղղություններով արշավախմբեր ուղարկելու գաղափարը³²:

Փաստորեն նշված առաջարկներով ուրվագծվում է պայքարի մարտավարությունը 1896թ. համար: Ծիշտ է, հետագա ամիսներին դրա շուրջ տեղի են ունենում նոր, ակտիվ քննարկումներ, որոնք իրենց արտացոլումն են գտնում ՀՅԴ Բյուրոյի, «Դրոշակի» խմբագրության եւ ՀՅԴ Կ. Պոլսի ու Պարսկաստանի կազմակերպությունների ղեկավար գործիչների նամակագրության մեջ, բայց այդ քննարկումներն ավելի շատ վերաբերում էին հասցվելիք հարվածների որոշակիացման, դրանց նախապատրաստական աշխատանքներին, իրականացման ժամկետներին, հարվածներն իրար հետ զուգակցելու խնդիրներին եւ այլն: Անդրադառնալով այդ շրջանում «Դրոշակի» խմբագրության պատասխանատուներ Հ. Դավթյանի եւ Հ. Յուսուֆյանի հետ իր հանդիպմանը, Արմեն Գարոն (Գ. Փաստրմաճյան) նույնպէս վկայում է 1895թ. նոյեմբեր – դեկտեմբերին վերը նշված մարտավարության ձեւավորված լինելու մասին³³:

1896թ. համար ծրագրված մարտավարության հստակ ձեւակերպումը տալիս է Ս. Վրացյանը: «Մի շաքք գրատըր եւ բանատըր խորհրդակցութիւններից յետոյ, – գրում է նա, – Հ.Յ.Դ. Բիւրոյի, Երկրի եւ Պարսկաստանի մարմինների ու գործիչների միջեւ, որոշում է 1896–ին, միաժամանակ, Պոլսում եւ Երկրի ներսը՝ Պարսկաստանից ու Կարսի շրջանից կատարել ընդհանուր յեղափոխական ձեռնարկներ, որոնց բնոյթը թողնում էր որոշել տեղական մարմիններին. Կովկասեան մարմինները պիտի բերէին ի-

²⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 268:

³⁰ Նույն տեղում, էջ 211:

³¹ Տե՛ս նույն տեղում, էջ 267-268:

³² Տե՛ս նույն տեղում, էջ 211-212:

³³ Տե՛ս Արմեն Գարո, Ապրում օրեր, Բոստոն, 1948, էջ 104-105:

րենց նիթական եւ բարոյական աջակցութիւնը»³⁴:

Դրանով հանդերձ, ճշտված չէին հիմնական անելիքները Կ. Պոլսում՝ դրանց ընտրութիւնը թողնելով տեղական մարմիններին: Երկարատև փնտրութից հետո՝ միայն ամիսներ անց, հստակ դարձավ Օսմանյան դրամատան գրավման եւ դրան զուգահեռ մյուս ձեռնարկների իրականացման գաղափարը: Իսկ մինչ այդ, քննության առարկա էր դարձել Կ. Պոլսում անհատական խոշոր ահաբեկչության նախապատրաստման հարցը: Որպէս թիրախներ նկատի էին առնվել ոստիկանության նախարար Նազըմը, նրա գործակից Հյուսնին, ապա սուլթան Աբդուլ Համիդ 2-րդը: Հայկական ջարդերից անմիջապէս հետո նման թիրախների ընտրությունն առաջին հերթին վրիժառոտյան նպատակ էր հետապնդում: Օսմանյան դրամատան գրավման ձեռնարկի կազմակերպիչ Բաբկեն Սյունին (Պետրոս Փարյան) դեռեւս 1895թ. դեկտեմբերին ժնե՝ Հ. Յուսուֆյանին գրած նամակում առաջարկում է. «Թող Նանսիի մեր բարեկամներ (նկատի ունեն Արմեն Գարոյին եւ նրա ընկերներին՝ Հ. Գ.) եթէ անկեղծ հայրենասէրներ են, հոս գան ի միացած ուժերով մեր վրէժ լուծենք գազան Համիտէն, որու մասին անկասկած են որ յաջողութիւննիս մեծ պիտի ըլլայ...»³⁵:

ՀՅԴ Կ. Պոլսի կազմակերպութեան ղեկավարներից Ա. Վռամյանը նույնպէս 1896թ. փետրվարին որոշակիորեն անդրադառնում է Աբդուլ Համիդի ահաբեկման ծրագրին: «Գալով տեղական գործերուն, - գրում է նա «Դրոշակի» խմբագրութեանը, - Հիւսնիի խնդիրը յետաձգեցինք Սուլթանին համար, բայց հիմա ալ տարածայնութիւն կայ մեր մէջ, մեր ընկերները կը պնդեն թէ շատ անխոհեմ գործ է այդ, որովհետեւ իսկոյն կը կրկնուին կոտորածները... Չէ՞ որ ամէն պարագայի մէջ խալիֆէն որուն դէմ պիտի ըլլայ այդ փորձը, նոյնիսկ այն վախները, որ հիմա կը գուպեն, իրենք այս անգամ առաջին նշանը չպիտի՞ տան նոր ջարդերուն:

Ենթադրենք թէ մինչեւ իսկ Ելուպ, զօրքը գրաւեալ քաղաքը, բայց մինչեւ այդ ըլլալը, մինչեւ նորի մը գահակալութիւնը... ո՞վ պիտի գապե խուժանը... Այդ առարկութիւններն անտեղի չեն, եւ իրաւ որ ես ինքս ալ հակուած եմ այդ կարծիքին, թէ եւ գեղեցիկ առիթ մը փախցուցած կ'ըլլանք, խնդիրը փակուած չէ, վերջին անգամ մեր ընկերներուն վճռին պիտի ձգենք...»³⁶:



Բաբկեն Սյունի (Արտաշես Ինչյան)

Ավելի ուշ՝ 1896թ. հունիսին՝ կրկին անդրադառնալով այդ հարցին, որպէս անցյալի, Ա. Վռամյանը հիշում է, որ «Նոյնիսկ երեք հոգիի յանձնարարուած էր՝ Բաբգէնին, Եգիպտացիին եւ Չարեհին ուսումնասիրել հրէշին անցնելու ճամբան Ռամազանի մէջ»³⁷: Փաստերը ցույց են տալիս, որ 1896թ. Ռամազան 15-ին սուլթանից վրէժխնդիր լինելու բոլոր պատրաստութիւնները տեսնված էին: Բայց, ինչպէս վկայում է Հոնան Դավթյանը, թեւ որոշված էր «...Մեծ-Շանը (Աբդուլ Համիդին՝ Հ.Գ.) սատկեցնել աղօթքի գնալուց... բայց հէնց վերջին օրը հրաժարուած են ընդհանուր կոտորածից վախենալով»³⁸:



Ա. Վռամյան (Օսնիկ Էրծակյան)

Գնալով տիրապետող է դառնում Կ. Պոլսում մասշտաբներով վիթխարի հարված հասցնելու գաղափարը: Կ. Պոլսի գործիչներին հատկապէս մեծ վստահություն է հաղորդում տեղում՝ սեփական ուժերով ռումբերի պատրաստման գործի յուրացումը, որը հնարավորություն է տալիս ձեռքի տակ ունենալ մեծ քանակութեամբ ռումբեր եւ որի մասին 1896թ. ապրիլին ոգեւորութեամբ ՀՅԴ ղեկավար մարմիններին տեղեկացնում էր Ա. Վռամյանը³⁹:

34 Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, 1890-1950, Բոստոն, 1950, էջ 280-281:
35 Դրան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 229:

36 Նույն տեղում, էջ 274-275:
37 Նույն տեղում, էջ 383:
38 Նույն տեղում, էջ 388:
39 Նույն տեղում, էջ 350:

Քայլ առ քայլ գնալով մեծամասշտաբ ձեռնարկի կազմակերպմանը, Կ. Պոլսի գործիչները մերժում են հապճեպ եւ լավ չնախապատրաստված ձեռնարկներ կատարելու ՀՅԴ Բյուրոյի ու «Դրոշակի» խմբագրության համառ առաջարկները: Լուրջ կասկած հայտնելով մնան քայլի արդյունավետության ու հետեւանքների մասին, Ա. Վռամյանը 1896թ. հունիսի 2(14)–ին գրած նամակում ներկայացնում է խնդրի վերաբերյալ իր նկատառումները: «...Ձեր ստիպումները հարսանիքի (նկատի ունի ձեռնարկը՝ Հ.Գ.) մասին քիչ մը անտեղի կը գտնեմ,–գրում է նա,– ...խելքերնիս գլուխնիս ժողվելու եւ ահարկու բան մը ընելու ենք: Ի՞նչ օգուտ մէկ–երկու հատ մը գործածել (խոսքը ռումբերի մասին է՝ Հ. Գ.), երբ անոր անմիջական հետեւանքը պիտի ըլլայ բազմաթիւ ձերբակալութիւններ եւ միջոցներ, որոնք արգելք պիտի ըլլան երկրորդելու մեր փորձը... ինչո՞ւ... վտանգենք, ժամանակի պզտիկ հաճոյքին զոհենք աւելի տեսականը եւ հոյակապը: Յորչափ այս անհամերաշխութիւնը կը տիրէ եւրոպ. դիւանագիտութեան մէջ, ուշ չէ: Այն ատեն այդ մարդիկ մատերնին պիտի զարնեն, երբ տեսական ահարկու գործողութիւն մը վեր ու վար ընէ մայրաքաղաքը... Ընելու է, բայց խոշոր, ջախջախիչ գործ մը...»



Սարգիս Միննայան

Այս բոլորին մէջ իմ ցաւս այն է, որ գործ մը կը կատարենք, առանց իրարմէ տեղեկութիւն ունենալու: Վանի դէպքը եթէ վերջացած սեպենք, անօգուտ գործ մը եղաւ: ...Գալով մեզ... առանց հիմնաւոր պատրաստութեան խենթութիւն է, եւ իմացէք, որ այստեղի մեր անյաջողութիւնը... թերեւս իսպառ անհնարին դարձնէ նորի մը կրկնութիւնը... Ձգենք զգացումները եւ խելքով շարժինք»⁴⁰:

Թեւ 1896 հունիսի 13(25)–ի նամակում Ա. Վռամյանը հայտնում է, թէ «...արդեն Հիւսնին եւ Նազըմը ճամբելու ո-

40 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 374-375:

րոշումը տուած ենք եւ սկսած ենք...»⁴¹ սակայն ակնհայտ է, որ նրա վերը նշված նկատառումների համապատկերի վրա Նազըմի եւ Հյուսնիի ահաբեկման գաղափարն արդեն չէր կարող նախկին հմայքն ունենալ: Որոնումները կրկին շարունակվում են: ՀՅԴ Կ. Պոլսի գործիչներից Սարգիս Միննայանը Բաբկեն Սյունուն նվիրված հոդվածում վկայում է, որ վերջինս էր, որ «...ամբողջ Պոլիսը վառելու խորհուրդը յղացավ. թէւ մերժվեցավ իբր անագորոյն գործողութիւն մը...»: Ի վերջո, նույն Բաբկեն Սյունին էր, որ առաջարկում է Օսմանյան դրամատան գրավման գաղափարը, որը դրվում է Կ. Պոլսում գործադրվելիք ձեռնարկների առանցքում⁴²:



Խասմատ (Մանիսան Չոքյան)

Մինչ Կ. Պոլսում որոնումներ էին կատարվում եւ ծրագրեր մշակվում, ՀՅԴ Պարսկաստանի եւ Կովկասյան դեկավար մարմիններն իրենց հերթին նախապատրաստում էին մյուս հարվածները: Ըստ որում, արդեն 1895թ. կեսերից նկատվում է պայքարը կոորդինացնելու, գործողությունները փոխադարձ համաձայնեցնելու եւ ուժերն առանձին շրջաններում կենտրոնացնելու միտումներ: Զննադատաբար մտտենալով նախորդ տարիների գործունեությանը, 1895թ. ամռանը «Դրոշակին» ուղղված նամակում Ռոստոմը գրում է. «Մեր առաջին եւ ամենամեծ սխալը նրանում է, որ մենք ամբողջ Տաճկահայաստանը միանգամից ցանկացանք ոտքի կանգնեցնել. մենք չկարողացանք ընտրել մի կէտ եւ կենտրոնացնել այնտեղ մեր ուժերը: Իսկ ցրելով մեր ուժերը՝ մենք դարձեալ անկարող եղանք ընտրել համապատասխան գործունեութեան եղանակ»: Շարունակելով իր միտքը, նա առաջարկում էր լուռ ու մուսջ աշխատել, որոշակի կետեր տեղափոխել անհրաժեշտ ուժեր եւ նոր միայն ընդհանուր ծրագրով սկ-

41 Նույն տեղում, էջ 383:
42 Տե՛ս «Դրոշակ», 1896, N 27, 30 նոյեմբերի: Նույնը՝ Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան, Ա. հ., Արէնք, 1990, էջ 328:

սել այս կամ այն գործը⁴³։ Որպես նման մտածողության գործնականացման օրինակ 1895թ. ամռանը Կարսի գծով Երկիր են մտնում Հրայրի(Ա.Ղազարյան) երկու, Աղբյուր Սերոբի (Ս. Վարդանյան) եւ Թաթուլի (Արամ Արամյան) խմբերը։ Դրանցից Աղբյուր Սերոբի խումբն անցնում է Ախլաթ, իսկ Հրայրի եւ Արամ Արամյանի խմբերը կենտրոնանում են Բասենում՝ խնդիր ունենալով Կարինի, Ալաշկերտի ու Խնուսի երիտասարդության կազմակերպումն ու զինումը⁴⁴։ Նույն ամիսներին Ռոստոմի գաղա-



Հրայր
(Արմենակ Ղազարյան)

փարներով ներշնչված երկիր են մտնում նաեւ ՀՅԴ մի քանի այլ փորձված գործիչներ՝ Դուրբախը (Խնուս), Աբրոն, Կառնենու Սկրտիչը (Մուշ) եւ այլն։ Ինքը՝ Ռոստոմը, հասնում է Էրզրում⁴⁵։ Միաժամանակ, Կարսի մարզի սահմանամերձ հայկական գյուղերում ստեղծվել էին զենքի պահեստներ ու հավաքվել մարտական խմբեր՝ Երկիր մտնելու եւ այնտեղ գտնվող ուժերի հետ համատեղ գործողություններ սկսելու համար։ Նմանատիպ պատրաստություններ տեսնվել էին նաեւ Պարսկաստանում։ 1896թ. փետրվարին՝ «Դրոշակի» խմբագրությանը տեղյակ պահելով Կովկասյան մարմինների ծավալված գործունեության մասին, Ա. Վռամյանը գրում է, թե «...մոտ երկու հազար հայդուկ կը պատրաստուին Խնուս եւ Վասպուրական արշաւել»⁴⁶։ Թեեւ հետագա իրադարձությունները չհաստատեցին այդ տեղեկավորության բացարձակ ճշմարտություն լինելը, այնուհանդերձ, այն որոշակի պատկերացում է տալիս ՀՅԴ Կովկասյան ու Պարսկաստանի մարմինների ծավալված գործունեության մասին։

Արշավանքի հմայքը մեծացնելու նպատակով ՀՅԴ

43 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 183:

44 Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 281:

45 Տե՛ս Լուսէն, Հայ յիղափոխականի մը յիշատակները, հ. 3, Երեւան, 1990, էջ 149:

Նաեւ՝ Կարո Սասունի, Պատմութիւն Տարսնի աշխարհի, ՊԼՅոթ, 1956, էջ 583-585:

46 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 1, էջ 274:

Երեսանի Կոմիտեն բանակցություններ է սկսում Բաֆֆու նշանավոր վեպի հերոս Խենթի (Մամսոն Տեր-Պողոսյան) հետ՝ արշավանքին վերջինիս մասնակցությունն ապահովելու ակնկալիքով։ Այդ բանակցություններն ավարտվում են 1896 թ. ապրիլի 10-ին։ Խենթը պարտավորվում է իր խմբով անցնել Արեւմտյան Հայաստան ու զինված պայքար սկսել, իսկ Դաշնակցությունը պարտավորվում է նրան տրամադրել 100 հրացան՝ 200-ական փամփուշտով եւ հոգալ նրա զիննագիայում սովորող որդու ուսման ծախսը⁴⁷։ Չնայած 1896թ. համար ծրագրված արշավանքների ձախողումից հետո էլ Խենթի հետ բանակցությունները շարունակվում են, սակայն ինչ-ինչ պատճառներով չի հաջողվում ապահովել նրա մասնակցությունը 1897թ. իրականացված ձեռնարկներին՝ մասնավորապես Խանասորի արշավանքին։



Վյոտ-Տարոյ
(Արամ Արամյան)

Սակայն, նախապատրաստական աշխատանքները տրամաբանական ավարտին հասցնել չի հաջողվում։ Թուրքական իշխանությունների գործողություններն էլ թույլ չեն տալիս ժամանակի առումով զուգակցել Կ. Պոլսի եւ Երկրի ձեռնարկները։ 1896թ. հունիսին հայ երեք քաղաքական կուսակցությունների համատեղ ուժերով կազմակերպված Վանի ինքնապաշտպանության ձախողումը եւ Պարսկաստանի ուղղությամբ նահանջող ինքնապաշտպանական հիմնական ուժերի ոչնչացումն արմատապես փոխում են իրավիճակը՝ անհնարին ու նաեւ ոչ ցանկալի դարձնելով նախատեսված արշավանքների իրականացումը։

Վանի դեպքերից անմիջապես հետո՝ 1896թ. հունիսի 22-ին Կարսում կայացած ՀՅԴ զինվորական խորհուրդը, որին մասնակցում էին ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Ս. Չավարյանը, ՀՅԴ այդ տարիների աչքի ընկնող զինվորական գործիչներ Հրայրը, Արամ Արամյանը, Արիս-

47 Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 282-283:



Վարտ
(Արիստակես Չորյան)

տակես Չորյանը (Վարտ), Երվանդ Բաբերյանը (Չալաղ), Հայկ Մելիք-Դադայանը (Աբա-Մելիք), Բարսեղ Տեր-Գրիգորյանը (Ղարա-Մելիք) եւ Վարսի գործիչները, քննության ենթարկելով միջազգային իրավիճակի, Կ. Պոլսի ու Երկրի իրադրության, ճանապարհների անցանելիության, ուժերի կենտրոնացման եւ այլ խնդիրներ՝ կայացնում է հետևյալ որոշումը. «Մինչեւ 20 օր պատրաստ լինել անցնելու. եթէ վանի դեպքերը, սպանությունները մեծ չափով եղած լինեն, այդ քսան օրից յետոյ չանցնել. եթէ փոքր չափով եղած լինեն, անցնել յարձակում գործելով»⁴⁸:

Դեպքերի հետագա ընթացքը, սակայն, չարդարացրեց սպասելիքները: Վանի ջարդերը սպառնալից ավելի մեծամասշտաբ էին: Մեծ կորուստներ էին կրել նաեւ տեղի ռազմունակ ուժերը՝ հատկապես արմենականները: Մասնավորապես, գրեթէ լիովին բնաջնջվել էին վանից դեպի Պարսկաստան հեռացող ինքնապաշտպանական ուժերը: Մյուս կողմից՝ 1896թ. հուլիսի 2-ին Բասենի Քյոփրիքյոյ գյուղում ձերբակալվել էին Բասենի եւ Կարինի հայդուկային խմբերի ղեկավարներ Հրայրը եւ Արամ Արամյանը՝ առանց ղեկավարի թողնելով տեղի ուժերին: Իրենց հերթին, ռուսական իշխանություններն ուժեղացնում են խստությունները Կարսի եւ Երեւանի սահմանամերձ շրջաններում՝ կատարելով նաեւ ձերբակալություններ:

«Մեր ծրագիրը մեծ մասամբ խորտակուեց. — հուլիսի 10-ին «Դրոշակի» խմբագրությանը գրված նամակում դառնությամբ արձանագրում է Ս. Չավարյանը. — Ի՞նչ

48 Տե՛ս Նիփեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. Բ. հատոր, էջ 26-28:

դրութիւն է ներսը (նկատի ունի վանը՝ Հ.Գ.) դժուար է գիտենալ: Ի՞նչ ենք անելու, էլի չգիտեմ: Պարզ է, որ երբ հարկաւոր էր օգնութեան գնալ, մենք պատրաստ չէինք:

Չալլի (Չալլաղի՝ Հ.Գ.) ձեռնարկութիւնը (նկատի ունի Կարսից կատարվելիք արշավանքը՝ Հ.Գ.) նոյնպես անորոշ դրութեան մէջ է. ներկայ պարագաներում դժուար նրանք համարձակուեն որոշ բան անել... Միակ յոյսը Պոլիսն է... Մեծ յուսահատութիւն է: Գլուխս շատ խառն է, չգիտեմ ինչ կը լինի...»⁴⁹:

Հետագա իրադարձությունները ցույց տվեցին, որ Ս. Չավարյանի մտավախությունն անտեղի չէր: Հուլիսի 21-ին Կարսում գումարված զինվորական գործիչների նոր ժողովը, քննարկելով Արեւմտյան Հայաստանում շարժումներ առաջ բերելու հարցը, աննպատակահարմար է համարում արշավանքը՝ ելնելով այն միաձայն համոզմունքից, որ «...խմբի անցնելը անպատճառ առաջ պիտի բերէ կոտորած, որ թաքուն, լուռ անցնելը անհնարին է համարում, ընդհարումը անխուսափելի է եւ այլն...»⁵⁰: Երկու օր անց՝ ստանալով նաեւ ՀՅԴ Բյուրոյի պատասխանը, որը Ս. Չավարյանի վկայությամբ այդ հարցում միասնական կարծիք չուներ, Կարսի ժողովը միաձայն որոշում է ցրել տեղի խումբը՝ հրաժարվելով արշավանքի գաղափարից⁵¹:

Այսպիսով, 1896թ. համար նախատեսված երեք խոշոր ձեռնարկներից երկուսից հարկ եղավ հրաժարվել: Ստեղծված իրավիճակում հնարավոր եղավ գործի դնել միայն Կ. Պոլսի մը:

Պատմագիտության մեջ անճշտություններ կան Օսմանյան դրամատան գրավման գաղափարի հղացման ժամանակի վերաբերյալ: Հաճախ այն շփոթում են Կ.

49 Դիսան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 256:

50 Նիփեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար. Բ. հատոր, էջ 29:

Դիսան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 257-258:

51 Տե՛ս նոյն տեղում:



Չալլաղ
(Չավարյան)



Իսրայել Աղայան
(Պետրոս Փարթյան)

Պոլսում հզոր ձեռնարկի կազմակերպման վերաբերյալ ընդունված որոշման հետ: Ելնելով դրանից, մի դեպքում Օսմանյան դրամատան գրավման ծրագրի հղացումը վերագրվում է 1895թ. աշնանը⁵², այլ դեպքում՝ խոսվում արդեն 1896թ. փետրվար-մարտից դրա նախապատրաստական աշխատանքները սկսելու մասին⁵³: Մինչդեռ վերը շարադրված

նյութն անառարկելիորեն վկայում է, որ անգամ 1896թ. հունիսի կեսերին չՅԴ Կ. Պոլսի ղեկավար գործիչները դեռևս չէին որոշակիացրել հասցվելիք հարվածը:

Այնուհանդերձ, դա չխանգարեց, որ ամիսներ շարունակ տեճերահին աշխատանքներ տարվեին ռուսների ու զինամթերքի պաշարներ կուտակելու եւ դրսից Կ. Պոլիս կազմակերպչական ունակություններ ունեցող մտավորական գործիչներ փոխադրելու ուղղությամբ: Աստիճանաբար Կ. Պոլիս են թափանցում չՅԴ Բյուրոյի կողմից գործուղված Հակոբ Վարդ-Պատրիկյանը (Վարդո), Սմբատ Խաչատրյանը (Բորիս), «Դրոշակի» խմբագրության կողմից ուղարկված՝ տակավին երիտասարդ ուսանողներ Արմեն Գարոն, Հայկ Թիրաքյանը (Հրաչ), Լեւոն Ներուզը: Իսկ Կ. Պոլսում մինչ այդ արդեն ձեռավորվել էր գաղափարական ու նվիրված երիտասարդների մի կորիզ՝ ի դեմս Ա. Վռամյանի, Բարկեն Սյունու, Արտաշես Դեյանի (Եգիպտացի), Արտաշես Անդրեասյանի, Խաչիկ Գնունու (Շահեն), Արտաշես Միսաքյանի եւ ուրիշների:

Աստիճանաբար ուրվագծվում ու ավարտական տեսք է ստանում ձեռնարկը՝ իր առջեւ դր-



Արմեն Գարո
(Գարեգին Փաստրմաճյան)

52 Տե՛ս Լ. Հ. Սկրտչյան, Օսմանյան բանկի գրավման գործողությունը 1896 թվականին, «Բանկեր Երեսնի համալսարանի», 1994, N 3, էջ 69:
53 Տե՛ս Յուշարատում Հ. Յ. Դաշնակյուրեան, էջ 286:

ված քաղաքական որոշակի նպատակադրումներով եւ իրականացման տեխնիկական մանրամասներով: Դրա առանցքում դրվում է Օսմանյան դրամատան գրավման խնդիրը: Լինելով միջազգային՝ գլխավորապես ֆրանսանգլիական կապիտալի շահերի հետ կապված հաստատություն, Օսմանյան դրամատունը, ձեռնարկը մտահղացողների կարծիքով, լիովին հարմար էր եվրոպական շահերը հարվածի տակ դնելու եւ Հայկական հարցի դրական լուծման հեռանկարով միջազգային ցանկալի միջամտություն ապահովելու համար: Ձեռնարկը հղացողների մտածելակերպի եւ սպասելիքների մասին ուշագրավ վկայություններ է տալիս Արմեն Գարոն: «... եթե մեր յուսացածին պես ձեռնարկը հաջող դուրս գար, 24 ժամէն Պոլիսը գրաւած կը լինէր եւրոպական զինուորներով, եւ Հայկական հարցը կը ստանար իր ցանկալի լուծումը, - գրում է նա, - Չէ՞ որ նոյն տարին, Մայիս ամսին, եւրոպական մեծ պետութեանց դեսպանները պաշտօնապես յայտարարած էին Սուլթանին, որ առաջին առթիւ, երբ Պոլսոյ մէջ նորէն խառնակութիւններ ծագեին, իրենք իրենց 12 մարտանաւերու զինուորները ցամաք պիտի հանէին կարգը վերահաստատելու համար: Եւ այդ իսկ նպատակաւ մենք ընտրեք էինք Բանկ Օթոմանի գրաւումը, իբրեւ միջոց ստեղծելու դեսպանները իրենց սպառնալիքը ի գործ դնելու»⁵⁴: Թեւ Արմեն Գարոն նման մտածելակերպի պատասխանատվությունը կապում է Հակոբ Վարդ-Պատրիկյանի հետ⁵⁵, սակայն կասկածից վեր է, եւ մեր կողմից արդեն բերված փաստերն էլ վկայում են, որ վերջինս, իր անձնական կարծիքն արտահայտելով հանդերձ, հանդես էր գալիս որպես չՅԴ Բյուրոյի եւ ղեկավար գործիչների ընդհանուր տեսակետի արտահայտիչ: 1896թ. համար մշակված



Հրաչ
(Հայկ Թիրաքյան)

54 Արմեն Գարո, Ապրտած օրեր, էջ 108:
55 Տե՛ս նոյն տեղում, էջ 119-120:

մարտավարության հարցում վերջիններիս շրջանում էական տարակարծություններ չկային:

Կ. Պոլսում հասցվելիք հարվածի թափը գորացնելու եւ այն ավելի մասշտաբային դարձնելու նկատառումով Օսմանյան դրամատան գրավմանը զուգահեռ նախատեսվում էին նաեւ գրեթե հավասարաբժեք այլ հարվածներ: Նախատեսվում էր հայ մարտիկների ռմբային հարձակում Սամաթիայի գորանոցի վրա. Ղալաթիայի կամրջի վրա վարչապետի կառքի ոչնչացում եւ ռմբային հարվածներ դեպի դրամատուն շարժվող գորքերին⁵⁶: Դրանց տեխնիկական հստակ իրականացումը սպառնում էր հանգեցնել ավերիչ հետեւանքների եւ քառսային իրավիճակ ստեղծել կայսրության մայրաքաղաքում:

Օսմանյան դրամատան գրավման ձեռնարկի ղեկավարությունը ստանձնում է Բաբկեն Սյունին՝ օգնականներ ունենալով Արմեն Գարոյին եւ Հայկ Թիրաքյանին: Սամաթիայի գործողությունը պետք է ղեկավարեին Խաչիկ Գնունին, Արտաշես Անդրեասյանը եւ Արտաշես Միսաքյանը:

Ամբողջությամբ վերցրած՝ մտահղացումը վիթխարի ցուցական-ահաբեկչական ձեռնարկ էր, որը դուրս գալով դավադրության եւ ահաբեկչության այն ժամանակ ընկալելի շրջանակներից, ավելի շատ մարտի դաշտում երկու բանակների բախում էր հիշեցնում, թեւս ակնհայտորեն անհավասար էին բախվող ուժերի իրական հնարավորությունները: Երկրում հասցվելիք միաժամանակյա հարվածների հետ զուգակցվելու դեպքում, որը ցավոք չստացվեց, այն իսկապես կարող էր տպավորիչ լինել: Թեւեւ Կ. Պոլսում առաջին անգամ մեծաքանակ ռումբերի եւ ուժանակի օգտագործման հանգամանքն արդեն իսկ մեծապես նպաստում է հարկ եղած տպավորության ապահովմանը:

Մասշտաբայնության ու մեծաթիվ մարդկանց ներգրավվածության պայմաններում նախապատրաստված ձեռնարկը չէր կարող մինչեւ վերջին պահն աննկատ մնալ ոստիկանության եւ ամենուր վիստացող լրտեսների աչ-

քից: Մասնավորապես աչքի է զարնում Սամաթիայում տիրող եռուզեռը: Տեղի հայ բնակչության կասկածելի պահվածքը, շատ հայերի՝ Սամաթիայից հեռանալու ձգտումը, վկայությունն էին այն բանի, որ ընդհանուր ձեռնարկի՝ Սամաթիային վերաբերող մասն, ըստ երեսույթին, գաղտնիք չէր մնացել: Իշխանություններն իրենք այստեղ նախահարձակ եղան՝ կատարելով խուզարկություններ ու ձերբակալություններ: Դրանց հետեւանքով իրադարձությունները Սամաթիայում ի սկզբանե ընթացան այլ սցենարով: Այստեղ կռվողները, Խ. Գնունու, Ա. Անդրեասյանի եւ Ա. Միսաքյանի գլխավորությամբ, հարձակողական գործողության փոխարեն ստիպված բավարարվեցին շուրջ 18 ժամ տեւած ռմբահարումներով եւ, թեւս հերոսական, բայց ինքնապաշտպանական կռիվներով:

Սամաթիայի իրադարձությունները հիմք են տալիս կասկածի տակ դնելու նաեւ շրջանառության մեջ դրված այն թեզը, թե իբր թուրքական իշխանությունները նախապես տեղյակ էին Օսմանյան դրամատան գրավման ծրագրին եւ այն չկանխեցին, որպեսզի դրամատան գրավումն օգտագործեն Կ. Պոլսում հայկական նախապես պատրաստված ջարդեր իրականացնելու համար⁵⁷: Առաջին հայացքից դրա օգտին է վկայում նաեւ «Դրոշակը» դեպքերից գրեթե անմիջապես հետո՝ 1896թ. սեպտեմբերին, իր էջերում գետեղելով հետեւյալ տեղեկատվությունը. «Սեպտեմբերի 5-ին Դեսպանները սուլթանի դեմ արտասովոր խիստ լեզու են բանացնում. առաւել որ հավատացնում են՝ որ սուլթանի պալատում իմանում են եղել հայերի խլրտման մասին նախօրոք...»⁵⁸: Նման տեղեկատվության աղբյուրը հիմնականում դիվանագիտական՝ մասնավորապես անգլիական, շրջանակներն են եւ այն կարող էր աղճատված ու ոչ ամբողջական լինել: Անշուշտ, Կ. Պոլսում հայկական ջարդերը իշխանությունների կողմից նախապես պատրաստված վի-

57 Տե՛ս Արշակ Օ. Սարգիսեան, Հայոց հարցը իննսնական բականներում (ըստ ամերիկեան պատմագրի), «ԱՄՆ», 1938, N 3, էջ 82: Նաեւ՝ Լ. Հ. Սկրտչյան, նշված աշխատ., էջ 72:

58. «Դրոշակ», 1896, N 21, 15 սեպտեմբերի:

նելու մասին տեսակետն անառարկելի է: Բայց, կարծում ենք, որ Սամաթիայի իրադարձությունները, որպես առիթ, ինքնին լիովին բավարար կարող էին լինել այդ ջարդերը սկսելու համար: Իրադարձությունների վերլուծությունը սույց է տալիս, որ իշխանությունների ունեցած տեղեկատվությունը վերաբերում էր հենց Սամաթիային, որտեղ նրանք անմիջապես փորձեցին չեզոքացնել հայ հեղափոխականներին եւ դեպքերը տանել իրենց հարմար սցենարով՝ ապահովելով նաեւ կատարվելիք ջարդերի «արդարացումը»: Նման պայմաններում դրամատան գրավումը թույլ տալը, եթե դրա վերաբերյալ իսկապես կար տեղեկատվություն, անհասկանալի եւ անտրամաբանական էր: Թուրքական իշխանությունները ջարդերը սկսելու համար որպես առիթ կարող էին օգտագործել նաեւ դրամատունը գրավելու փորձի ի սկզբանե չեզոքացումը եւ ոչ թե թույլ տալ վերջինիս գրավումը, որը, ինչպես սույց տվեցին հետագա դեպքերը, լուրջ գլխացավանք դարձավ սուլթանի համար: Բացի այդ, դրամատունը գրավողների վերաբերյալ հստակ ու ճշգրիտ տեղեկատվության չտիրապետելու հանգամանքը (որեւէ պատկերացում չկար նրանց թվաքանակի, ով լինելու, զինվածության աստիճանի մասին եւ այլն) նույնպես վկայում է ընդհանուր ձեռնարկի գոնե այդ կողմին իշխանությունների անտեղյակության մասին:

Թեեւ ծրագրված հարվածն ամբողջությամբ չի հաջողվում կյանքի կոչել, իսկ արդարությունն էլ պահանջում է արձանագրել, որ գրեթե անհնարին է նմանատիպ ձեռնարկները մինչեւ վերջին մանրամասնությունը գործադրելը, այնուհանդերձ, Կ.Պոլսում առանցքային հարվածը հաջողվում է հասցնել: Բաբկեն Սյունու գլխավորությամբ 26 վրիժառուներ՝ ատրճանակներով եւ 200 ռումբերով զինված, 1896թ. օգոստոսի 14-ին գրոհում են Օսմանյան դրամատան վրա, գրավում այն՝ կռիվների ընթացքում մեծ կորուստներ պատճառելով զորքերին, ոստիկանությանն ու խուժանին: Դրամատունը 13 ժամ գտնվում էր հայ մարտիկների ձեռքում: Այստեղ գտնվող

157 աշխատակիցներ ու հաճախորդներ հայտնվում են պատանդի կարգավիճակում: Դրամատունը գրավելու պահին գոհվում է ձեռնարկի անմիջական կազմակերպիչ Բաբկեն Սյունին եւ դեկավարությունն անցնում է մինչ այդ հեղափոխական պայքարի մեծ փորձ չունեցող Արմեն Գարոյին ու Հայկ Թիրաքյանին:

Նույն օրը Կ.Պոլսում տարածվում է թուրք ժողովրդին ուղղված՝ թուրքերեն լեզվով գրված բռուցիկը, իսկ Բեռլինի դաշնագիրը ստորագրած վեց տերությունների դեսպաններին է ներկայացվում ՀՅԳ Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեի հայերեն, թուրքերեն ու ֆրանսերեն լեզուներով գրված շրջաբերականը:

Թուրք ժողովրդին ուղղված դիմումում շեշտվում էր այն գաղափարը, որ հայ հեղափոխականների կռիվը ոչ թե թուրք ժողովրդի, այլ նրա կառավարության դեմ է⁵⁹: Նման դիմումն, անշուշտ, վկայում էր հայ գործիչների քաղաքական միամտության մասին: Չանգվածային ջարդերից հետո էլ նրանք շարունակում էին որոշակի հույսեր կապել թուրք զանգվածի չեզոքության հետ, անտեսելով այն ակնհայտ փաստը, որ այդ զանգվածը միանշանակ գտնվում էր մահմեդական հոգեւորականության ֆանատիկ գաղափարների ազդեցության ներքո: Մյուս կողմից, դիմումի անմիջական հասցեատերը՝ թուրք ժողովուրդը, իր ճնշող մեծամասնությամբ անգամ տառաճանաչ չէր: Դիմումի բովանդակությունը նրան կարող էր հասցվել միայն այն մարդկանց միջոցով, ովքեր մեծավ մասամբ իրենք էին ամբոխին հրահրում ջարդերի:

Մեծ տերությունների դեսպաններին ներկայացված շրջաբերականում հիմնավորվում էին նման ծայրահեղ քայլի դիմելու հանգամանքները եւ ներկայացվում հայկական պահանջները: «Մեր արիւնով սրբագործուած մեր պահանջներուն կուգայ հիմա միանալու եւ սրբազան վրէժի սեւեռուն գաղափարը, որը սեւ ուրուականի պէս արձանացած է մեր աչքերուն առջեւ, - մասնավորապէս ասվում էր նրանում, - Դիւանագիտական խաղերու ժա-

մանակն ա՛լ անցած է:

Մեր հարիւր-հազար նահատակներուն քափած արիւնը մեզի իրաւունք կուտայ ազատութիւն պահանջելու»⁶⁰:

Պահանջվում էր Արեւմտյան Հայաստանում անմիջապէս գործադրել խոստացած բարենորոգումները, հայերին վերադարձնել նրանցից թալանված ունեցվածքն ու անշարժ կայքը, թույլ տալ գաղթականների անարգել վերադարձը, ազատել հայ քաղաքական բանտարկյալներին եւ այլն: Մեկ անգամ եւս հավաստելով հայ հեղափոխականների վճռականութիւնը, շրջաբերականն ավարտվում էր հետեւյալ խոսքերով. «Կը կրկնենք, ո՛չ մէկ գոհողութեան առջեւ կանգ պիտի առնենք մեր նպատակին հասնելու համար:

Այսուհետեւ ազատ կը համարինք ինքզինքնիս ամեն պատասխանատուութենէ...

Մենք կը մեռնինք, գիտենք, բայց յեղափոխութիւնը, որ հայ ժողովրդի մինչեւ ոսկրները թափանցած է, պիտի շարունակէ սպառնալ Սուլթաններու գահին, ցորչափ մեր մարդկային իրաւունքները ձեռք չբերենք եւ ցորչափ կենդանի մնայ վերջին հայը»⁶¹:

Դրամատունը գրավողները, իրենց հերթին, բանակցութիւններ սկսելով իշխանութիւնների հետ եւ աչքի առաջ ունենալով Կ. Պոլսում սկսված ջարդերը, ներկայացնում են հետեւյալ պահանջները.

1. Միջազգային միջամտությամբ ապահովել ամբողջ երկրի խաղաղութիւնը:
 2. Ընդունել բարենորոգումների վերաբերյալ ՀՅԴ Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեի բոլոր պահանջները:
 3. Ուժ չգործադրել դրամատունը գրավողների դէմ:
 4. Կյանքի լիակատար ապահովություն տալ ինչպէս դրամատանը գտնվողներին, այնպէս էլ Կ. Պոլսի այլ մասերում ընթացող կռիւների բոլոր մասնակիցներին:
- Խոստանալով մինչեւ իրենց պահանջների կատարումն անվնաս պահել դրամատան կայքը, դրամը, պա-

⁶⁰ «Դրօշակ», 1896, N 20, 3 սեպտեմբերի:
⁶¹ Նույն տեղում:

տանդ վիճակում գտնվող 157 ծառայողներին, հայ վրիժառուները հակառակ պարագայում սպառնում էին պայթեցնել Օսմանյան դրամատունը՝ իրենց հետ փլատակների տակ թողնելով ամեն ինչ⁶²:

Սպառնալիքն ավելի քան ազդեցիկ էր, եւ ի վերջո, ինչպէս եւ սպասվում էր, գործին միջամտում է միջազգային դիվանագիտությունը՝ ի դէմս Կ. Պոլսի ռուսական դեսպանատան առաջին քարգման Ն. Մաքսիմովի: Միջամտում է ոչ թէ Հայկական հարցին լուծում տալու, այլ Արդուլ Համիդին մեկ անգամ եւս ծանր վիճակից հանելու համար:

Հայտնի է, որ դրամատան գրավման լուրը ստանալով, սուլթանն, առանց երկար մտածելու, հրամայում է քնդանոթներով ուղարկո՞ւմ դրամատան շէնքը: Միայն վերջին պահին վրա հասած Ն. Մաքսիմովն է, որ նրան ետ է պահում այդ քայլից՝ դեսպանների անունից հայտարարելով, որ դրամատանը պատանդ հայտնված եվրոպացիներից որեւէ մեկին փորձանք պատահելու դեպքում տերությունների ռազմանավերը կոմբակո՞ծեն սուլթանի պալատը: Ուշքի եկած սուլթանը ռուս դիվանագետին է թողնում հարցի խաղաղ կարգավորումը⁶³: Վերջինս գործադրում է բոլոր կարողություններն իր պետության համար խիստ անցանկալի ու պայթյունավտանգ իրավիճակը լիցքաթափելու եւ գրեթէ իրականանալի դարձած միջազգային միջամտությունը կանխելու համար:

Իսկ թէ որքանով էին Օսմանյան դրամատան գրավումը եւ Կ. Պոլսի իրադարձություններն անցանկալի ռուսական դիվանագիտության համար, վկայում է այն փաստը, որ Ռուսաստանի արտգործնախարար Ա. Լոբանով-Ռոստովսկին Վիեննայից Պետերբուրգ վերադառնալու ճանապարհին՝ գնացքում, ստանալով Օսմանյան դրամատան գրավման մասին հեռագրալուրը, սրտի կաթվածից հանկարծամահ է լինում⁶⁴: Ուշագրավ է նաեւ, որ այդ օրերին հենց ռուսական կառավարությունն իր սպառնա-

⁶² Տե՛ս նույն տեղում, N 21, 15 սեպտեմբերի:

⁶³ Տե՛ս Արմէն Գաբո, նշված աշխատ., էջ 158-159:

⁶⁴ Տե՛ս Յուշապատում Հ. Յ. Դաշնակցութեան, էջ 300: Նաեւ Արշակ Օ. Սարգիսեան, նշված աշխատ., «Ամ», 1938, N 3, էջ 82:

լիքներով թույլ չտվեց անգլիական նավատորմի մուտքը սեծովյան նեղուցներ՝ հոգուտ հայերի Օսմանյան կայսրության վրա ճնշում գործադրելու նպատակով:

Նման պայմաններում հայ վրիժառուները ռուսական միջնորդից լավ սպասելիքներ չէին կարող ունենալ: Մաքսիմովը նրանցից չի էլ թաքցնում իր երկրի կառավարության ժխտական դիրքորոշումը կատարվածի նկատմամբ եւ հասկացնում, որ անիմաստ են միջազգային միջամտության սպասելիքները: Խուսափողական դիրք գրավելով բարենորոգումների հարցում, Մաքսիմովը հայտարարում է, որ առանց իր եվրոպացի պաշտոնակիցների համաձայնության նման խոստումներ տալ չի կարող: Դրամատունը չթողնելու եւ այն պայթեցնելու դեպքում նա հայ հեղափոխականներին սպառնում է նույն գիշերն իսկ Կ. Պոլսում սկսվելիք հայկական ջարդերով եւ Հայկական հարցի հանդեպ Եվրոպայի մինչ այդ ունեցած բարյացակամ վերաբերմունքի փոփոխությամբ: Ջարդերի սպառնալիքն ազդու էր եւ այդ հարցում խիստ զգայուն հեղափոխականներն ի վերջո տեղի են տալիս: Բավարարվելով Մաքսիմովի՝ բարենորոգումների հարցով գրադվելու եւ Կ. Պոլսում ջարդերը կանխելու ոչնչով չերաշխավորված խոստումներով, հայ վրիժառուները թողնում են դրամատան շենքը եւ փոխադրվում օտարերկրյա նավերից մեկը: Հաջորդ օրը նրանց այցելած ռուս, անգլիացի եւ հատկապես ֆրանսիացի դիվանագետներն արդեն միանգամայն այլ լեզվով էին խոսում՝ մոռանալով նախորդ օրն իրենց անունից Մաքսիմովի տված խոստումների մասին:

Հայ հեղափոխականները դառը հուսախաբության թուլեներ են ապրում: Ամեն ինչ անդառնալիորեն կորած էր, եւ նույն օրն իսկ ֆրանսիական «Ժիրոնդ» շոգենավը նրանց հեռացնում է Կ. Պոլսից: Շուրջ 18-ժամյա հերոսական պայքարից հետո դադա-



Խայկի Կ. Գ. (Հովհաննիս)

րում են նաեւ Սամաթիայի ռումբային կռիվները եւ բախումները Կ. Պոլսի առանձին վայրերում՝ հայ հեղափոխականների փաղանգից խելով Խ. Գևուհու, Ա. Անդրեասյանի, Ա. Միսաքյանի պես հերոսական նոր անուններ, բայց ոչինչ չավելացնելով Հայկական հարցի լուծման գործնականին: Ինչ վերաբերում է Կ. Պոլսում նախապես ծրագրված մյուս ձեռնարկներին, ապա դրանք ընդհանրապես մնում են անկատար: Իսկ որպես այդ ամենին պատասխան, քաղաքակիրք Եվրոպայի աչքի առաջ, Կ. Պոլիսը նորից ականատեսը դարձավ հազարավոր հայերի մինչ այդ խնամքով նախապատրաստված ու սուլթանի կողմից հրահրված ջարդերին:

Ի՞նչը դրդեց դրամատունը գրաված մարտիկներին այդքան հեշտությամբ զիջել դիրքերը, խաբվել դիվանագիտական խաղերին եւ հրաժարվել դրամատունը պայթեցնելու նախնական սպառնալիքից: Այդ հարցի պատասխանն այսօր էլ միանշանակ չէ: Ժամանակին անգլիական դեսպանի տեղակալը հեղափոխականների նման քայլը բացատրել է սովի սպառնալիքով, քանի որ, համոզված լինելով եվրոպական տերությունների անհապաղ միջամտության հարցում, նրանք ուտելիքի պաշարներ չէին վերցրել իրենց հետ⁶⁵: Հայկ թիրաքյանը դեպքերից անմիջապես հետո, «Դրոշակում» տպագրված իր հուշերում, դրամատան շենքն արագ թողնելը բացատրում է Կ. Պոլսում սկսվելիք ջարդերի պատասխանատվությունն իրենց վրա չառնելու ձգտմամբ⁶⁶: Ամերիկյան պատմաբան Ուիլյամ Լենգրը «Իմպերիալիզմի դիվանագիտությունը» աշխատության մեջ դա բացատրում է Բարկեն Սյունու գոհվելով: Նա գրում է, որ «երբ խումբին ամենէն կարեւոր անձը (Բարկեն Սյունին՝ Հ.Գ.) սպանւեցավ, մնացեալները ուժասպառ եղան եւ քաջութիւնը



Մրտաշեն Անդրեասյան

65 Տե՛ս Լ.Նո. Թիրքասայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը. հ. Բ., էջ 27:
66 Տե՛ս «Դրոշակ», 1896, N 21, 15 սեպտեմբերի:



Արամյան Միսաքյան

չունեցան իրենց ծրագիրը գործադրելու»⁶⁷։ Կատարվածին գրեթե նույն գնահատականն է տալիս նաև նախորդ դարասկզբի հայ պահպանողական մտայնությունը ներկայացնող Եղիշե քահանա Գեղամյանցը. «Եթե «Դաշնակցութեան» հերոսները յարձակելով այդ հիմնարկութեան վրայ ուզում էին բանկի տերերի,- Եւրոպացիների,- ուշադրությունը Տաճկահայաստանի վրայ հրաւիրել, կամ նրանց սպառնալ...

Նրանք պարտաւոր էին անշուշտ յօդս ցնդեցնել բանկը. ընչաքաղց եւ շահանդ Եւրոպացիների գրպանին եւ անձին խփել փոքր ինչ...

Սակայն «Դաշնակցութեան» հսկաները այդ չարին... Մաքսիմովին անսալով նրանք՝ յանկարծ մի-մի գաճաճ դարձան, գէնքերը վար դրին, վատաբար յետ դարձան ե՛ւ... ե՛ւ... շոգեմաւ նստելով Եւրոպայ, Մաքսիլիա փախան»⁶⁸։

Թե՛ Ռ. Լենգրի, թե՛ Ե. Գեղամյանցի տեսակետներն ընդունելի չեն։

Դրամատունը գրաված մարտիկներին դասալքության ու վախկոտության մեջ մեղադրելը տեղին չէ, քանի որ նրանցից շատերն իրենց հետագա գործունեությամբ ապացուցել են, որ դրամատան դեպքը պատահականություն չէր իրենց կենսագրության մեջ։

Միանգամայն հնարավոր համարելով Հայկ Թիրաքյանի բացատրությունը, այնուհանդերձ, կարծում ենք, որ ընշված հարցում ճշմարտությանը երելի թե ավելի մոտ է Արմեն Գարոն, որը խոստովանում է, թե դրամատունը գրավողները չեն ունեցել բավարար քանակությամբ ուժանակ՝ իրենց սպառնալիքն իրագործելու համար։ Թեեւ դեպքերի թարմ տպավորության տակ գրված հուշերում

67 Արշակ Օ. Մարգիսեան. *Նշված աշխատ.*, «ԷՃ», 1938, N 3, էջ 82:
68 Եղիշե Ա. - Բ. Գեղամյանց, *Ռուս փրօսիրատիան եւ հայերը (Մտորումներ)*, Բագու, 1917, էջ 82:

Հայկ Թիրաքյանը պնդում է իր մոտ մեծ քանակությամբ ուժանակ ունենալու մասին, սակայն կարծում ենք, որ նա այն ժամանակ կարող էր եւ հասկանալիորեն պետք է շրջանցեր ուժանակի սակավության պարագան։ Շատ ավելի ուշ գրելով իր հուշերը, Արմեն Գարոն այդ հանգամանքը ծածկելու անհրաժեշտությունը չուներ։ Նա վկայում է, որ ուժանակի հիմնական պաշարներն օգտագործվել էին ռումբեր պատրաստելու համար։ Չեռնարկի կազմակերպիչներն այնքան վստահ էին միջազգային միջամտության խնդրում, որ անգամ բավարար չափով ուժանակ չէին թողել իրադարձություններն ոչ իրենց ծրագրածով ընթանալու պարագայում՝ դրամատան շենքը պայթեցնելու սպառնալիքն իրականացնելու համար։ Արմեն Գարոյի վկայությամբ դրամատունը գրաված հայ մարտիկների մոտ կար ընդամենը 1.5կգ (այլ տարբերակով՝ 2.5կգ) ուժանակ, որն, անշուշտ, բավարար չէր իրենց սպառնալիքն ի կատար ածելու համար։ Վերջին պահին ընդամենը 18 ռումբ եւ 50-ական փամփուշտով 17 ատրճանակ ունեցող վրիժառուները, բնականաբար, այլընտրանքի մեծ հնարավորություններ չունեին⁶⁹։ Եվ այդ առումով ամերիկյան պատմաբանի եւ Ե. Գեղամյանի կողմից նրանց հասցեագրված դասալքության ու անվճարականության մասին մեղադրանքները միանգամայն անհիմն են։

Ընդամենը մի քանի ժամվա ընթացքում դաժան իրականությունը ճշգրտում եւ սրբագրում էր հայ հեղափոխականների համար անխախտ ճշմարտություն համարվող գաղափարները։ Օսմանյան դրամատունը գրավող հերոսները եւ նրանց հետ հայ ազատագրական շարժումը ստանում էին ծանր դասեր։ Այդ համապատկերի վրա սոսկ բարոյական սփոփանք պետք է համարել հայ վրիժառուների անձնվիրության, խիզախության ու ազնվության վերաբերյալ այն մի քանի հայանպաստ հողվածները, որոնք տպագրվեցին եվրոպական մամուլի տարբեր

69 Տե՛ս Արմեն Գարո. *Նշված աշխատ.*, էջ 134, 138: Նաե՛ւ՝ Մ. Վարսանդեան, Հ. 3. *Դաշնակցութեան սրատմութիւն*, Երևան, 1992, էջ 135:

օրգաններում: Դրանք գալիս էին ճշմարտությունն ասելու Կ. Պոլսի դեպքերի մասին, բայց էական ոչինչ չէին ավելացնում Հայկական հարցի լուծման գործնականին:

Իրենց առջեւ դրված ռազմավարական խնդիրները չլուծելով հանդերձ, Օսմանյան դրամատան գրավումը եւ Սամաթիայի իրադարձություններն ունեցան գործնական որոշ հետեւանքներ:

Չնայած կռիվների ընթացքում թշնամին կարողացավ չեզոքացնել մայրաքաղաքի տարբեր մասերում բռնկված հայկական դիմադրության օջախները, սակայն նրա ունեցած կորուստներն ավելի քան նշանակալի էին: «Նյու-Յորք Հերալդը» սպանված թուրք զինվորների թիվը հաշվում էր 450, «Դեյլի Նյուսը»՝ 400, իսկ «Թանի» թղթակցի վկայությամբ Կ. Պոլսի դեպքերից հետո միայն զինվորական հիվանդանոցներում հայտնված վիրավոր զինվորների թիվը հասնում էր 500-ի: Հայկական աղբյուրները թուրքերի կորուստը հաշվում են շուրջ 1500 սպանված, որի մի զգալի մասն, անշուշտ, կարող էր բաժին ընկնել թուրք խուժանին⁷⁰: (1895թ. սուկայի ջարդերին եւ հատկապես Վանի 1896թ. ինքնապաշտպանության ձախողմանը հաջորդած ծանր պայմաններում հայ վրիժառուքյան այդ հուժկու հարվածները եւ դրանց արդյունքում Օսմանյան դրամատան առջեւ, Սամաթիայում ու Կ. Պոլսի այլ վայրերում վառված թուրք զինվորների ու խուժանի հարյուրավոր դիակները գալիս էին մեկ անգամ եւս ի լուր ամենքի ազդարարելու, որ հայ ազատագրական շարժումը մարած չէ, որ հայությունը նորից պայքարում է իր հարցի դրական լուծման համար: Հանգամանք, որը չէին կարող անտեսել ո՛չ տերությունները, ո՛չ էլ Օսմանյան իշխանությունները:

Օսմանյան դրամատան գրավումը որոշակի փոփոխություններ է մտցնում տերությունների վերաբերմունքի մեջ: Ըստերը հակված էին կատարվածը միայն նախերգանքը համարել այն դեպքերի, որոնք սպառնում էին ցնցել Կ. Պոլսիսը: Անգամ լուրեր էին տարածվել մեծ տերություն-

ների Կ. Պոլսի դեսպանատները պայթեցնելու ծրագրի գոյության մասին: Չնայած ՀՅԴ Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեն հատուկ հայտարարությամբ հերքում է այդ լուրերը, բայց դրանք անհետեւանք չեն մնում: Ավելի կոշտ ու վճռական է դառնում տերությունների դիրքորոշումն Աբդուլ Համիդի նկատմամբ: Դեսպանները հրաժարվում են տոնել սուլթանի գահակալության տարեդարձը, որը նախկինում նշվում էր մեծ շուքով⁷¹: Իր հերթին կրկին ավելոծվում է եվրոպական հասարակական կարծիքը՝ որոշակի ճնշում գործադրելով տերությունների գործելակերպի վրա: Այս անգամ եւս նախաձեռնությունն իր ձեռքն է վերցնում անգլիական դիվանագիտությունը: Օսմանյան դրամատան դեպքերից կարճ ժամանակ անց՝ 1896թ. հոկտեմբերին Անգլիան կրկին առաջարկում է գումարել եվրոպական տերությունների դեսպանաժողով եւ քննարկել բարենորոգումների հարցը⁷²: Միաժամանակ, Անգլիայի կողմից տերություններին արվում է Թուրքիայի դեմ համատեղ ու կտրուկ գործողությունների դիմելու առաջարկ՝ ընդհուպ մինչեւ Աբդուլ Համիդի գահազրկումը: Բրիտանական պրեմիեր Սոլսբերին Նիկոլայ 2-րդ ցարի հետ հանդիպման ժամանակ կոչ է անում չվախենալ Օսմանյան կայսրության փլուզումից: Նա համաձայնվում է որոշակի պայմանների դեպքում նեղուցների հարցում հանդես չգալ Ռուսաստանի հավակնությունների դեմ: Նիկոլայ 2-րդը սուլթանի գահընկեցության հարցում տալիս է իր նախնական համաձայնությունը, բայց մեկ օր անց, դեսպան Ե. Ստասլի խորհրդով, հրաժարվում է դրանից: Այնուհանդերձ, ցարն ընդունում է անգլիական առաջարկը, համաձայն որի տերությունների Կ. Պոլսի դեսպաններին պետք է հանձնարարվեր մշակելու բարենորոգումների ծրագիր ոչ միայն հայկական վիլայեթների, այլեւ ամբողջ կայսրության համար: Անգլիան առաջարկում էր սուլթանին հարկադրել ընդունելու այդ ծրագիրը՝

71 *Sbu U. Վարսնդիան, նշված աշխատ., էջ 144:*

72 *Sbu H. C. Княгиня, В. А. Георгиев, М. Т. Пинченко, В. Шеремет, Восточный вопрос: по внешнеи политике России (конец XVIII - начало XX вв.), Москва, 1978, с. 268.*

70 *Sbu «Դրոշակ», 1896, N 21, 15 սեպտեմբերի:*

հարկ եղած դեպքում անգամ գնալով պարտադրանքի:

Օսմանյան դրամատան գրավմանը հաջորդած ամիսներին ուժեղանում է տերությունների ռազմական ակտիվությունը Միջերկրական ծովի արեւելյան շրջանում և նեղուցների մերձակայքում: Տերությունների ռազմական վերի՝ Դարդանելի նեղուց կամ Կ. Պոլիս մտնելու հնարավոր տարբերակներն օրակարգում դնում են Վերին Բոսֆորի շրջանը ռուսական դեսանտի կողմից գրավելու հարցը: Նման տարբերակն անգամ քննարկվում է ռուսական կառավարող շրջանների կողմից: Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպան Նելիդովը համամիտ չէր Ա. Լոբանով-Ռոստովսկու մինչ այդ վարած թուրքական քաղաքականության հետ և թուրքիայում ռուսական ակտիվության մեծացման կողմնակից էր: Դա հատկապես ակնհայտորեն դրսևորվում է Ա. Լոբանով-Ռոստովսկու մահվանից հետո: 1896թ. նոյեմբերի 18-ին Նելիդովը ցարին ներկայացնում է մի գրություն, որում, մատնանշելով թուրքիայում տիրող անիշխանությունը, հնարավոր նոր ելույթները և արտաքին միջամտության իրական սպառնալիքը, առաջարկում էր անսպասելի դեսանտ իջեցնել Բոսֆորի երկու ավերին: Այդ հարցը քննարկման է դրվում հատուկ խորհրդակցությունում: Բուռն քննարկումից հետո որոշվում է Վերին Բոսֆորը Ռուսաստանի կողմից գրավելու պայմանով միայն համաձայնություն տալ տերությունների նավերի ռազմա-ծովային ցույցին Դարդանելում կամ էլ Կ. Պոլիս մտնելուն՝ այնտեղ քառասյին վիճակ ստեղծվելու դեպքում քրիստոնյաներին ու եվրոպացիներին պաշտպանելու համար⁷³:

Եվրոպական էսկադրան, սակայն, չմտավ Դարդանել, իսկ Բոսֆորում դեսանտ իջեցնելու նախապատրաստական աշխատանքները Ռուսաստանի համար ի հայտ բերեցին լուրջ խնդիրներ: Ուշագրավ է, որ 1912թ. Նիկոլայ 2-րդին գրած զեկուցագրում, հետին թվով անդրադառնալով կատարվածին, Ռուսաստանի արտգործնախարար

73 Մանրամասն տե՛ս В. А. Емен, А. В. Игнатев и др., История внешней политики России (конец XIX – начало XX века), стр. 105-108.

Պ. Սազոնովը փորձում է լույս սփռել այդ իրադարձությունների վրա՝ գրելով հետևյալ տողերը. «Հայկական կոտորածների միջոցին, երբ մենք կարող էինք գրաւել Պոլիսը Անգլիայի հաւանութեամբ, ստիպւած եղանք հրաժարել այդ բանից, որովհետեւ մեր փոխադրական միջոցները պակաս էին և ցամաքային ուժերի զօրաշարժի պայմանները՝ անբաւարար»⁷⁴:

Այնուհանդերձ, տերությունների Կ. Պոլսի դեսպանները մշակում են բարենորոգումների նախագիծ, բայց վերջինս անգամ չի ներկայացվում սուլթանին: Նախորդ ամիսներին վատթարացած հույն-թուրքական հարաբերությունները հասնում են իրենց ծայրակետին և պայթում է հունական ապստամբությունը Կրետեում: Վերջինս մերձավորարեւելյան ճգնաժամի առաջին պլան է մղում Կրետի խնդիրը՝ սովերում թողնելով նախորդ տարիներին չարչրկված Հայկական հարցը:

Եթե տերությունների վճռականությունը մինչեւ վերջ չհերիքեց բարենորոգումների մշակված ծրագիրը գործադրել տալու համար, ապա նրանց կողմից ձեռնարկված քայլերը Օսմանյան դրամատան գրավմանը հաջորդած ամիսներին զգուշացրին սուլթանին: Վերջինս հարկադրված էր հրաժարվել նոր զանգվածային ջարդերի կազմակերպումից: Մինչեւ Ադանայի 1909թ. դեպքերը հայկական զանգվածային ջարդեր այլևս տեղի չեն ունենում: Չնայած դրանց համար առիթների պակաս սուլթանն, անշուշտ, չէր զգում:

Օսմանյան դրամատան գրավումը, 1894-1896թթ. մյուս խոշոր իրադարձությունների (Սասունի ու Չեթունի ապստամբություններ, Վանի ինքնապաշտպանություն և այլն) հետ միասին, 1890-ական թվականների հայ ազատագրական զինված պայքարի բարձրակետն էին: Եթե տերությունների վրա դրանք սպասված ազդեցությունը չունեցան և չհանգեցրին միջազգային միջամտության, ապա թուրքական պաշտոնական շրջանների և

74 Ա. Մանդելշտամ, Ռուսաստանի քաղաքականությունը թուրքահայաստանում մեծ պատերազմի նախօրեակին, «Վէստ», 1935, N 1, էջ 8:

հակահամախոսական ընդդիմադիր ուժերի համար ակնհայտ դարձավ, որ Օսմանյան կայսրությունում հայ ազատագրական շարժումը վերածվել է ռազմաքաղաքական լուրջ գործոնի, որը հնարավոր չէ անտեսել: Դա հարկադրում է Աբդուլ Համիդին՝ իր կառավարման ողջ ընթացքում թերևս միակ անգամ, բանակցություններ սկսել հայ ազգային կուսակցությունների հետ: Օսմանյան դրամատան դեպքից շատ չանցած՝ 1896թ. աշնանը, սուլթանի գիտությամբ Եվրոպա ուղարկված պատվիրակը հայկական նահանգներում բարենորոգումներ մտցնելու խոստումներ է տալիս՝ զինված պայքարը դադարեցնելու պայմանով: Անդրադառնալով դրան, «Դրոշակը» 1896թ. հոկտեմբերի 7-ի համարում գրում է. «Թիւրք կառավարութիւնը որոշել է՝ հայ յեղափոխականներուն հետ բանակցութեան մտնել, խոստանալով Ասիոյ բոլոր նահանգներուն մէջ բարենորոգումներ մտցնել, միայն թէ ռումբերու գործածումը դադարեցնեն: Ասոր համար Տիրան-պէյ Տատեան, Արթին փաշայի տղան, տաճիկ կառավարութեան կողմէ յատուկ պաշտօնով կը մեկնի Եւրոպա յեղափոխականներուն հետ համաձայնութեան մը յանգելու համար: Բարով, հազար բարի երթայ...»⁷⁵:

Հետագա իրադարձություններն եկան հաստատելու «Դրոշակի» տեղեկատվությունը: Սուլթանի եւ հայ քաղաքական ուժերի միջեւ միջոցորդի դերակատարությունն իր վրա է վերցնում Թուրքիայի արտգործախարարության առանցքային պաշտոնյաներից մեկը՝ Հարություն(Արթին) փաշա Տատյանը: Վայելելով սուլթանի բարեհաճությունը, նա աշխատում էր վերջինիս հաշտեցնել հայերի հետ: Արա անունից Ժնևում ՀՅԴ հետ բանակցություններ են վարում իր որդի Տիրան բեյ Տատյանը (1896թ. հոկտեմբեր), ապա Վաղինակ Աճեմյանը (1897թ. փետրվար) եւ ի վերջո Հարություն փաշայի եղբորորդի Տրդատ բեյ Տատյանը (1897թ. հոկտեմբեր): Վերջինիս հետ բանակցությունները շարունակվում են նաեւ հետագայում: Միայն 1899թ. մարտին, այլևս անիմաստ համա-

րելով դրանց հետագա շարունակումը, ՀՅԴ-ն հատուկ ծանուցագրով ազդարարում է դրանց խզումը: Գրեթե միաժամանակ՝ 1897-1898թթ., Փարիզում բանակցություններ էին վարվում նաեւ վերակազմյալ հնչակյան կուսակցության հետ, որը տվյալ պահին, ՀՅԴ-ից հետո, իր ազդեցությամբ հայ քաղաքական երկրորդ ուժն էր Օսմանյան կայսրությունում: Այդ բանակցությունների մասնաձևերը պատմագիտական գրականության մեջ արդեն լուսաբանված են⁷⁶: Պարզապես հարկ ենք համարում անդրադառնալ դրանց միայն մի կողմին՝ կապված Կ. Պոլսում ՀՅԴ ակտիվության, մասնավորապես Օսմանյան դրամատան գրավման եւ դրա հետ առնչվող դեպքերի, առաջին հերթին ռումբերի ու ուժանակի օգտագործման, թողած ազդեցության հետ:

Բանակցությունների ընթացքում տալով բարենորոգումներ անցկացնելու խոստումներ, Արթին փաշայի պատվիրակները համառորեն առաջ էին քաշում ակտիվ, հարձակողական մարտավարությունից հրաժարվելու եւ հատկապես Կ. Պոլսում նման քայլեր չձեռնարկելու պահանջներ: Մասնավորապես պնդում էին, որ հայ հեղափոխականները հրաժարվեն ռումբերի եւ ուժանակի գործածությունից: ՀՅԴ կոմիտեներին 1898թ. հունվարին ուղարկված շրջաբերականում «Դրոշակի» խմբագրությունն այդ կապակցությամբ գրում է. «Տրդատ պէյը Յարութին փաշայի կողմէն կուզար խնդրելու մեզ դադարեցնել ռմբաձգութիւնները Պոլսի մէջ եւ ընդհանրապես ամէն կարգի բռնական գործեր, դիրացնելու համար փաշային ջանքերը հաշտարար քաղաքականութեան մը շնորհիւ բարութելու Թուրքիոյ հայոց վիճակը»⁷⁷: Իր՝ Հարություն փաշայի նաճակներն էլ վկայում են, թե նրա, իսկ դա նշանակում է հենց սուլթանի, համար որքան կարեւորություն ուներ հայ հեղափոխական կոմիտեների հանդարտությունը եւ ապստամբական ձեռնարկներ կատա-

76 Մանրամասն տե՛ս Մ. Կոչար, *Армяно турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX-начале XX веков*, Ереван, 1988, с. 41-72.

77 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 131:

75 «Դրոշակ», 1896, N 23, 7 հոկտեմբերի:

րելուց ձեռնպահ մնալը⁷⁸:

Հատկանշական է, որ ՀՅԳ-ին արված բանակցությունների դիմումները կամ անմիջապես հաջորդել են Կ. Պոլսում ռուսերի եւ ուժանակի գործածությանը, կամ էլ նախորդել դրանց օգտագործման հնարավոր սպառնալիքին: Եթե Տիրան բեյ Տատյանի դիմումն անմիջապես հաջորդում է Օսմանյան դրամատան գրավմանը, իսկ Տրդատ բեյ Տատյանինը՝ Բաբ Ալիի ռուսերի պայթեցմանն ու Խանասորի արշավանքին, որոնց կանդրադառնանք ստորեւ, ապա Վաղինակ Աճեմյանի դիմումը նախորդում է մահմեդականների համար սրբազան համարվող Ռամազանի 1897թ. տոնին, երբ սուլթանն առավել խոցելի կլիներ եւ վտանգ կար, որ այդ հանգամանքը հեղափոխականները կօգտագործեն Աբդուլ Համիդից վրեժխնդիր լինելու համար⁷⁹:

Իսկ որ նման սպառնալիքն իրական էր, այդ մասին սուլթանին պարբերաբար հիշեցնում էին մամուլից եւ այլ աղբյուրներից քաղված տեղեկությունները: Մասնավորապես, 1898թ. հոկտեմբերին գրած նամակում Հարություն փաշա Տատյանը տեղեկացնում է, որ Կ. Պոլսում լուրեր են տարածվել Գերմանիայի կայսեր այցի օրը դաշնակցականների կողմից սուլթանի կառքի ռմբահարման մտադրության մասին⁸⁰: Անգամ հերքվելով, նման լուրերն, անշուշտ, մշտական լարվածության մեջ էին պահում իշխանություններին, առաջին հերթին՝ սուլթանին:

Այսպիսով, իր գլխավոր նպատակին՝ միջազգային միջամտության ապահովմանը չհասնելով հանդերձ, Օսմանյան դրամատան գրավման ձեռնարկը լուրջ կռվան դարձավ հայոց ազատամարտի համար: Օսմանյան իշխանություններն որեւէ երաշխիք չունեին, որ նման, գուցե եւ ավելի մասշտաբային, ձեռնարկներ հետագայում էլ չեն ցնցի կայսրության մայրաքաղաքը՝ ունենալով անկանխատեսելի, ինչու չէ, նաեւ աղետալի հետեւանքներ: Դա

լուրջ գործոն էր, որի չեզոքացման խնդիրը դարձավ սուլթանի մտահոգություններից մեկը եւ որը նա մինչեւ վերջ էլ չկարողացավ լուծել: Թեեւ պետք է արձանագրել, որ հայ ազատագրական շարժումն էլ, իր հերթին, չկարողացավ ավելի արդյունավետ օգտագործել այդ կռվանը, քանզի հետագայում հասցված հարվածները մի կողմից հազվադեպ էին, մյուս կողմից՝ ցավոք աչքի չընկան դիպուկությամբ:

78 Տե՛ս նույն տեղում, հ. 2, էջ 144, 149:

79 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1941, N 3, էջ 160, 1944, N 3, էջ 105:

80 Տե՛ս Դիսան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 179:

2. Նոր մարտավարության որոնման ուղիներում

Սուլթանի ներկայացուցչի հետ բանակցությունները 1896թ. աշնանից առերեույթ կիսազինադադարային իրավիճակ էին ստեղծել, որի ընթացքում ազատագրական ուժերը միառժամանակ, կարծես, հրաժարվել էին ակտիվ գործողություններից: Սակայն, դա երեսույթի սուկ արտաքին քողն էր, պայքարը շարունակվում էր: Ըստ որում, 1896թ. ստեղծված իրավիճակն իր որոշակի կնիքն էր դնում ազատագրական ուժերի հետագա գործելակերպի վրա: Հայկական բարենորոգումների շուրջ բանակցությունները, ինչպես տեսանք, 1896թ. աշնանը դեռևս շարունակվում էին: Չնայած Կրետեի խիստ սրված հարցն աստիճանաբար երկրորդ պլան էր մղում հայկականը, սակայն, հայ քաղաքական շրջանակներում շարունակում էին կենսունակ մնալ միջազգային միջամտության հույսերը: Ստեղծված պայմաններում ազատագրական ուժերը մի կողմից ուշադրության կենտրոնում էին պահում Կ.Պոլիսը, որտեղ նախորդ ամիսներին հասցված հարվածի արդյունավետությունն առանձնապես վիճարկելի չէր համարվում, մյուս կողմից՝ իրականացնում էրկրում ուժեր կենտրոնացնելուն նպատակամղված քայլեր: Վերը նշված հանգամանքները, բնականաբար, իրենց կնիքը պետք է թողնեին 1897թ. համար մշակված մարտավարության վրա:

Եթե 1896թ. պայքարի մարտավարությունը, ինչպես վերը տեսանք, հիմնականում ձեւավորվում է ՀՅԴ Բյուրոյի, «Դորոշակի» խմբագրության, ՀՅԴ Կ.Պոլսի ու Պարսկաստանի ղեկավար մարմինների միջեւ գրագրության արդյունքում՝ ընդհանուր նպատակադրումներից աստիճանաբար անցնելով իրագործվելիք քայլերի որոշակիացմանը, ապա 1897թ. մարտավարության մշակման գործում առանցքային դեր է խաղում ՀՅԴ 1896-1897թթ. «ընդհանուր» ռայոնական ժողովը: Չնայած դրան ընդհանուր ժողովի կարգավիճակ տալու փոր-

ծը ձախողվեց, բայց եւ այնպես, իր ընդունած որոշումներով այն ընդհանուր ժողովի նշանակություն ունեցավ:

Այդ ժողովում քննարկման դրված հարցերից առանցքայինը մարտավարության խնդիրն էր: Ժողովի պահպանված արձանագրությունները թեւ խիստ սեղմ են եւ հաճախ այս կամ այն հարցի քննարկման համառոտ ամփոփագիր են ներկայացնում, բայց եւ այնպես, հիմնականում արտացոլում են այն բուռն պայքարը, որն ընթացել է ազատագրական պայքարի հետագա քայլերի ընտրության վերաբերյալ: Ըստ որում, ընդունված որոշումներն էլ հանդիսանում են յուրատեսակ փոխզիջում նախկին եւ ավելի ուշ՝ ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովում ընդունված, նոր մարտավարությունների միջեւ: Շրջանային ժողովը, միաձայն մերժելով ցուցական գործունեությունը դադարեցնելու եւ միայն խաղաղ նախապատրաստությամբ զբաղվելու հարցադրումը, «որոշեց շարունակել կենդանի յեղափոխական գործունեութիւնը...»⁸¹: Անընդունելի է համարվում նաեւ երկրի ներքին նահանգներում ակտիվ գործունեությունը դադարեցնելու եւ բոլոր ուժերը եվրոպական Թուրքիայում՝ գլխավորապես Կ.Պոլսում, կենտրոնացնելու առաջարկը: Նման դիրքորոշումը հիմնավորվում է այն բանով, որ «Յեղափոխական գործը բուն ժողովրդական մի գործ է, ուստի եւ վնասակար եւ նոյնիսկ անհնարին է հեռանալ ժողովրդից եւ բաւականաւ միայն եւրոպական Տաճկաստանով»: Ընդունելով հանդերձ եվրոպական Թուրքիայի եւ Կ.Պոլսի կարեւոր դերակատարությունը՝ Հայկական հարցի լուծման համար պայքարում, ժողովը, միաժամանակ, արձանագրում է, որ «Հայկական Յեղափոխութիւնը բուն էրկրում առաջ է եկել որոշ պայմաններից եւ քանի որ այդ պայմանները ոչ թէ վերացել, այլ աւելի եւս վատթարացել են, ուստի խօսք անգամ չի կարող լինել ներքին նահանգների գործունեութիւնը դադարեցնելու մասին»⁸²: Ելնելով վերը նշված հարցադրումներից, ժողովը որոշում է «մեծ ուշադ-

81 Տես Նիսիեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ. հատոր, էջ 29-30:
82 Նույն տեղում, էջ 30:

րութիւն դարձնել Կոռածաղիկի (Կ.Պոլսի՝ Հ.Գ.) վրայ, քայց միեւնոյն ժամանակ շարունակել ակտի գործունէութիւնը եւ ներքին նահանգներում»⁸³:

Ընդունված որոշումը նշանակում էր, որ առաջիկայում եւս Կ.Պոլիսը շարունակելու էր մնալ հայոց ազատամարտի կարեւոր թատերաբեմ՝ պահպանելով առանցքային դերերից մեկը նրա մարտավարության մէջ:

Ժողովն ի հայտ է բերում մոտեցումների ակնհայտ տարբերություն հատկապէս Արեւմտյան Հայաստանում գործադրվելիք մարտավարության հարցում: Վերջինս բուն վիճաբանությունների եւ երկարատեւ բննարկումների առարկա դարձավ: Մի դեպքում առաջ էր քաշվում երկրում հայդուկային մանր խմբերի գործունէությամբ քավարարվելու, մեկ այլ դեպքում՝ մանր խմբերով Վասպուրականում ուժերը կենտրոնացնելու, այնտեղ մեծ գործ սկսելու, երրորդ դեպքում՝ ուժերը Սասունում կենտրոնացնելու, այլ պարագայում՝ Պարսկաստանից վրեժխնդրական մեծ արշավանք կազմակերպելու եւ այլ առաջարկներ: Առաջին առաջարկը միաձայն մերժվում է այն պատճառաբանությամբ, որ «հայկական յեղափոխութիւնը արդէն անցուցել է զուտ հայդուկային գործունէութեան շրջանը, որ այդ խմբերը իրանց մանր մունր յարձակումներով ու աղմուկներով չեն կարող Եւրոպայի ուշադրութիւնը գրաւել, չեն կարող ժողովրդից հեռու մնալ եւ կոտորածների ու բռնութիւնների առիթ չտալ, վերջապէս ամեն տեղ չկան լեռնային ապաստարաններ, ուր այդ խմբերը իրանց գոյութիւնը պահպանել կարողանան»: Դրանով հանդերձ որոշվում է. «Երկրի այս կամ այն գաւառում արդէն կազմակերպուած հայդուկային խմբերը չոչնչացնել, որովհետեւ, ինչպէս անցեալում, այնպէս էլ ապագայում կարող են որոշ պաշտպանութիւն ցոյց տալ ժողովրդին»⁸⁴:

Մյուս առաջարկությունների կապակցությամբ ընդունվում են հետեւյալ որոշումները.

83 Նույն տեղում:

84 Նույն տեղում, էջ 31:

«ա). Խանարագի, Բերդիկի ռայոնում (խոսքը Կարսի ու հարակից սահմանամերձ շրջանի մասին է՝ Հ.Գ.) եղած ուժերը կենտրոնացնել Բարձրաւանդակ (Սասուն՝ Հ.Գ.), թէկուզ գէնքը տեղացիներին յանձնելով:

բ). Վրէժստանում (Ատրպատական՝ Հ.Գ.) պատրաստի ոյժ (գէնք եւ մարդիկ) պահել եւ յարմար դէպքում մեծ արշաւանք գործել սահմանից:

գ). Վրէժստանում արշաւանքի անհրաժեշտ պատրաստութիւնները տեսնելուց յետոյ, արեւացած գէնքը մի կերպ Շամ (Վասպուրական՝ Հ.Գ.) ուղարկել գոնէ տեղացիների ձեռքով»⁸⁵:

Այսպիսով, ընդունված որոշումներն ակնհայտորեն փոխգիջումային էին: Մի կողմից անցած փուլ էր համարվում հայդուկային գործունէությունը, մյուս կողմից պահպանվում էին մինչ այդ ստեղծված հայդուկային խմբերը: Մի դեպքում սկզբունքային որոշում էր ընդունվում Սասունում եւ Վասպուրականում ուժերի կենտրոնացման վերաբերյալ, որի ուղղությամբ հետագա ամիսներից գործնական քայլեր կատարվեցին, այլ պարագայում՝ վճիռ կայացվում նախորդ տարվա հարձակողական գործելակերպը շարունակելու օգտին՝ ի դեմս վրեժխնդրական մեծ արշավանքի եւ Կ.Պոլսում ակտիվ ցուցական գործունէության: Ըստ որում, ակնհայտ էր, որ առաջիկա ամիսներին վճռորոշը պետք է լինեին հենց հարձակողական բնույթի ձեռնարկները, որոնք միտված էին երկու կարեւոր խնդիրների լուծման.

1. Հայկական հարցի նկատմամբ պահպանել միջազգային դիվանագիտության ուշադրությունն ու հետաքրքրությունը՝ հնարավորության դեպքում ապահովելով միջամտություն:

2. Չնայած կիսազինադադարային այն իրավիճակին, որն առաջ էր եկել սուլթանի ներկայացուցիչների հետ սկսած բանակցությունների հետեւանքով, այդ ձեռնարկները նպատակ ունեին բանակցությունների տեղապտույտի կամ անարդյունավետության դեպքում հակառակոր-

85 Նույն տեղում:

դի վրա ճնշում գործադրելու միջոց հանդիսանալ՝ վերջինիս հարկադրելով գնալ զիջումների: Նամանավանդ, ինչպես վերը տեսանք, թուրքական կողմը համառորեն պնդում էր, որ հայ հեղափոխականները հրաժարվեն նմանատիպ քայլերից:

Ռաշտրակյան ժողովի մասնակից Նիկոլ Դումանը (Ն. Տեր-Հովհաննիսյան), որն արշավանքի ամենաեռանդուն ջատագովն ու կազմակերպիչն էր, ժողովից անմիջապես հետո՝ 1897թ. փետրվարի 8-ին ՀՅԴ Թավրիզի կոմիտեին գրված նամակում ահա ինչպես է ներկայացնում 1897թ. համար ընդունված մարտավարությունը.

«Միտելիք,

Առաջ ու առաջ՝ խուդաֆիս, առիալը շարիֆ...

Որոշում է ուժեղ գործունեություն երոպական Տաճկաստանում եւ արշաւանք մեր կողմից (ընդգծումը մերն է՝ Հ.Գ.): Առաջինը այն պատճառով, որ երոպական դիպլոմատիան բուռն կերպով միջամտում է իր շահերը վնասուելուց յետոյ: Իսկ իր շահերը կենտրոնացած են երոպ. Տաճկաստանում եւ ոչ թէ խուլ անկլիններում: Եւ որովհետեւ դիպլոմատիայի լուրջ ուշադրութեան գրաւումը առայժմ ընդունում է իբրեւ առանցք մեր գործունեութեան, պետք է այնպիսի ձեւ տալ, որ լինի ուժեղ, ցնցող, սահմանի վրայ, որ մօտիկ լինի Սալ-



Նիկոլ Դուման
(Ն. Տեր-Հովհաննիսյան)

մաստին, որպէսզի **յատուկ թղթակցի** (որ պիտի գայ) միջոցով կարելի լինի տեղեկութիւնները թարմ-թարմ եւ ուռցրած Երոպա հասցնել»⁸⁶:

Պատմագիտական գրականության մեջ Խանասորի արշավանքը գրեթէ միշտ ներկայացվել է որպես կազմակերպական առումով ինքնուրույն եւ մեկուսի ռազմական գործողություն եւ գլխավորապես շեշտվել է նրա վրեժխնդրական ու պատժիչ կողմը: Մինչդեռ արշավանքի կազմակերպչի՝ Նիկոլ Դումանի, վերը բերված խոսքերը

վկայում են, որ այն պետք է լուծեր ոչ միայն, եւ ոչ այնքան, վրիժառուական ու պատժիչ խնդիրներ, որքան՝ փորձեր իր նպաստը բերել Հայկական հարցի դրական լուծմանը: Կ.Պոլսի ձեռնարկների հետ միասին այն «անցումային» կամ «գուգակցված հարվածների» մարտավարության կողմերից մեկն էր:

Միաժամանակ, նախատեսվող արշավանքն, ըստ էության, նախորդ տարվա համար ծրագրավորված վրեժխնդրական գործողությունը տրամաբանական ավարտին հասցնելու նպատակը պետք է հետապնդեր: Վանի 1896թ. ինքնապաշտպանության ճախողումից եւ Հրայրի ու Արամ Արամյանի ձերբակալությունից հետո այդ ձեռնարկը մնացել էր չիրականացված, իսկ այդ նպատակով հատկապես Պարսկաստանում կուտակված միջոցները (զենք, զինամթերք, կովող ուժեր) հիմնականում պահպանվել էին: Ըստ որում, եթե 1896թ. արշավախմբերի առջեւ դրվում էին մահմեդական զանգվածը զսպելու եւ «դաստիարակչական» խնդիրներ, ապա Վանի իրադարձություններից հետո Պարսկաստանից կատարվելիք արշավանքը ստանում էր ավելի որոշակի եւ նպատակային ուղղվածություն: Թեեւ ռաշտրակյան ժողովն արշավանքի հետ կապված մանրամասնությունների որոշումը թողել էր տեղական կոմիտեներին, բայց նույն ժողովում արշավանքի կողմնակիցները գտնում էին, որ դրա «...նպատակն է լինելու վրէժ լուծել քիւրդ մահմեդականներից եւ տաճիկ գօրքից, ցոյց տալ, որ հայ ժողովուրդն էլ ոյժ ունի, իր թշնամիներին պատժելու եւ բարեկամներին խնայելու, դրանով վերականգնեցնել վիատում հայերի բարոյական ոգին, առաջ բերել մեծ խլրտում, եւ վերջապէս գրաւել դիպլոմատիայի ուշադրութիւնը»⁸⁷:

Այսպիսով, արշավանքի հիմնական թիրախ պետք է հանդիսանար Պարսկաստանի հետ սահմանամերձ շրջանների քրդությունը, մասնավորապես Շարաֆ բեկի գլխավորած մագրիկ ցեղը, որն իր վճռական դերակատարությունն էր ունեցել Վանի 1896թ. ինքնապաշտպանու-

86 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 365-366:

87 Նիկոլ Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ. հատոր, էջ 31:

թյան ձախողումից հետո այնտեղից Պարսկաստան նահանջող հայկական ուժերը ոչնչացնելու գործում եւ, բացի այդ, Ադրակի հայության ջարդերի իրականացնողն էր: Չնայած ռայոնական ժողովի արձանագրություններում ապագա արշավանքի վերաբերյալ այլ մանրամասնություններ արտացոլված չեն, այնուհանդերձ, դրա վերաբերյալ որոշակի լրացուցիչ տեղեկատվություն տալիս է Նիկոլ Դումանի՝ Թավրիզի կոմիտեին գրած եւ մեր կողմից արդեն հիշատակված նամակը: Տեղեկացնելով, որ արշավանքի մասնակիցների թիվը նախատեսված է 300, որն ինքնին աննախադեպ երեսույթ կլիներ հայոց ազատամարտի համար, Նիկոլ Դումանը միաժամանակ հայտնում էր, որ արշավանքի վերաբերյալ որոշումը կփոխվի, եթե ՀՅԴ Վասպուրականի եւ Ատրպատականի Կենտրոնական կոմիտեները կարողանան համոզիչ փաստերով ապացուցել, որ հնարավոր է Վասպուրականի որեւէ վայրում կենտրոնանալ եւ տեւական դիմադրություն ցույց տալ թշնամուն⁸⁸: Վերը նշված տողերից պարզ երեւում է, իսկ հետագա իրադարձություններն էլ ակնհայտ ցույց տվեցին, որ 1897թ. համար նախատեսված մարտավարության խնդրում կային էական տարածայնություններ ՀՅԴ Բյուրոյի եւ Ատրպատականի ու Վասպուրականի Կենտրոնական կոմիտեների միջեւ: Վերջիններս դեմ էին այդ տարվա մարտավարության առանցքային գաղափարներից մեկին՝ արշավանքի իրականացմանը: Նրանք ուժերը Երկրում՝ տվյալ պարագայում Վասպուրականում, կենտրոնացնելու կողմնակիցներ էին: Նման պայմաններում Նիկոլ Դումանին ու նրա գաղափարակիցներին վիճակված էր հաղթահարել լուրջ խոչնդոտներ արշավանքի նախապատրաստման եւ իրականացման ճանապարհին:

Հետագա դեպքերն ակներեւ են դարձնում կարծիքների միասնության բացակայությունը նաեւ Կ.Պոլսում իրականացվելիք ձեռնարկների հարցում: «Դրոշակի» խմբագրությունը, որը ՀՅԴ 1896-1897թթ. ռայոնական ժողո-

⁸⁸ Տես Ղիսն Հ. Յ. Դաշնակցության. հ. 2, էջ 366:

վի որոշմամբ ստանում էր Բյուրոյի իրավասություններ եւ որի ներկայացուցիչը չէր մասնակցել այդ ժողովին, հետագայում լուրջ առարկություններ է ներկայացնում ինչպես 1897թ. համար ծրագրված պայքարի մարտավարության մեջ Կ.Պոլսի դերի, այնպես էլ այնտեղ նախատեսված ձեռնարկների իրագործման ժամկետի, դրանց տեխնիկական կողմի ու կազմակերպիչների վերաբերյալ: Փաստորեն, մարտավարության հարցում ՀՅԴ ղեկավար գործիչների կարծիքների միասնությունը, որն առկա էր 1896թ., բացակայում էր 1897թ.:

Այդ առումով հատկանշական է հատկապես Ս. Չավարյանի եւ Ռոստոմի կարծիքների էական տարբերությունը Կ.Պոլսի դերի եւ, ընդհանրապես, մարտավարության խնդրում, քանի որ նրանցից առաջինը ներկայացնում էր ՀՅԴ Բյուրոյի, իսկ երկրորդը՝ «Դրոշակի» խմբագրության տեսակետը: «Դրոշակի» խմբագրությանը գրած նամակներում Ս. Չավարյանը կոչ էր անում «գործերը թարմ պահել Պոլսի կողմերում» եւ գտնում, որ «ամենապատասխանատու դերը այսօր Պոլսոյ վրայ է ընկած...»⁸⁹: Մինչդեռ Ռոստոմն այդ



Վազգեն
(Տիգրան Տիգրյան)

հարցում ուներ միանգամայն այլ տեսակետ: ՀՅԴ Վասպուրականի կազմակերպության ղեկավար Վազգենին (Տ. Տիգրյան) 1896թ. դեկտեմբերին գրած նամակում նա հստակ ներկայացնում է իր դիրքորոշումը հայոց ազատամարտի, նրա խնդիրների ու հետագա անելիքների վերաբերյալ: Նկատի ունենալով մեզ հետաքրքրող հարցի համար Ռոստոմի նամակում առկա մտքերի կարեւորությունը, այն բերում ենք ամբողջությամբ՝ առանց կրճատումների: «Պետք է ասել, որ վերջին ժամանակներս մեր գործունեութիւնը բաժանում է երկուսի,- գրում է նա,- առաջինը՝ ներքին նահանգներում ժողովրդի մեջ յեղափոխական մեծ ոյժ պատրաստելն է, որի համար անհրա-

⁸⁹ Տես նույն տեղում, էջ 291:

ժեշտ են հայրուկային կոմիտեի գործերը, ժողովրդին զենք մատակարարելը, իսկ երկրորդը՝ մեր հարցը դիպլոմատիայի սեղանի վրայ միշտ պահելն է, որի համար եռանդուն գործ պետք է սկսել այն տեղերում, ուր երոպացիք մեծ շահեր ունին: Մեր գործունեությունը գլխատրապետ ամփոփուած էր ներքին նահանգներում մինչեւ Պոլսոյ կռիվը (նկատի ունի Օսմանյան դրամատան գրավումը՝ չ.Գ.): Մեր գործունեությունը չէր փայլում, ճիշդ է, բայց նա բուն կեանքի մէջ ոյժ էր գոյացնում: Մինչդեռ Պոլսոյ կռիւլը յեղափոխական ուժի տեսակետից անելի թոյլ լինելով, քան թէ օրինակ, Վանայ կռիւները, դիպլոմատիայի Եւրոպայի Տաճկաստանից դուրս գտնուող հայերի համար անհամեմատ անելի մեծ նշանակութիւն ունեցաւ: Այժմ շատերը հաւանական է հրապուրուին այս յաջողութիւններով եւ աշխատին Պոլսոյ նման կենտրոններում ամփոփել մեր գործունեութիւնը: Բայց մեր կարծիքով, որովհետեւ ներկայ շարժումը գլխատրապետ հարկատր է ներքին նահանգներում ապրողների համար եւ որովհետեւ դրքա ամէն բոպէ ենթակայ են ահռելի վտանգների, պէտք է պնդել միշտ, որ ներքին նահանգներում գործունեութիւնը թուլացնելու մասին մտածելն անգամ անելորդ է»⁹⁰:

Այնուամենայնիվ, սկզբունքային տարածայնություններով հանդերձ, առաջիկա տարվա մարտավարության վերաբերյալ վճիռը կայացված էր, եւ հետագա ամիսներին ՀՅԴ Ատրպատականի եւ Կ.Պոլսի ղեկավար մարմինները ձեռնամուխ են լինում նախատեսված ձեռնարկների կազմակերպմանը՝ փորձելով նաեւ հնարավորության դեպքում հասցնել միաժամանակյա հարվածներ:

Կյանքը ցույց տվեց, սակայն, որ միաժամանակյա հաջող հարվածներ հասցնելն անհնարին էր: ՀՅԴ Կ.Պոլսի եւ Ատրպատականի կազմակերպությունները ձեռնամուխ են լինում դրանց իրագործմանը ստարտային անհավասար պայմաններում: Եթե Ատրպատականում տեղական իշխանությունների համեմատաբար լոյալության

պայմաններում հայ հեղափոխականները քիչ թե շատ ազատ գործելու հնարավորություն ունեին եւ դեռեւս նախորդ տարվանից այնտեղ կուտակվել էին անհրաժեշտ կովող ուժեր, զենք ու զինամթերք, եւ պարզապէս մնում էր ավարտին հասցնել նախապատրաստական աշխատանքները, ապա Կ.Պոլսում իրավիճակը միանգամայն այլ էր: Օսմանյան դրամատան գրավման դեպքից հետո այստեղ չափից ավելի խստացել էր հսկողությունը: Այդ հանգամանքը գրեթե անհնարին էր դարձնում պայթուցիկ նյութերի ու զինամթերքի մուտքը Կ.Պոլիս: Մյուս կողմից, դրամատան գրավման եւ Սամաթիայի կռիվների արդյունքում տեղի գաղափարական ու ռազմունակ ուժերի մի զգալի մասը զոհվել էր, որոշները ֆրանսիական «Ժիրոնդ» նավով Կ.Պոլսից անվտանգ հեռացել էին, իսկ երրորդներն էլ անվտանգության նկատառումներով այն լքել էին հետագա ամիսների ընթացքում: Կ.Պոլիսը հարկադրված էր թողնել նաեւ ՀՅԴ տեղի կառույցի ղեկավար Ա. Վռամյանը, որն ընդգրկվում է «Դրոշակի» խմբագրության կազմում: Անհրաժեշտ էր տեսական ժամանակ այդ կորուստների հետեւանքները վերացնելու, կազմակերպությունը նոր՝ կարող ու նվիրված ուժերով համալրելու եւ կրկին զորեղացնելու համար: Բայց տեղի ուժերը չեն կարողանում, եւ դրա համար անհրաժեշտ ժամանակն էլ չունեին, զոհվածներին ու հեռացածներին փոխարինել վճռականություն, կամք ու փորձառություն ունեցող բավարար թվով գործիչներով: Նման պարագայում Վարդգեսի (Գիսակ, չ. Սերենգույան) նման



Վարդես
(Չ. Սերենգույան)

գործիչը պարզապէս եզակի բացառություն էր: Մյուս կողմից հնարավոր չեղավ դրսից արագորեն Կ.Պոլիս ուղարկել փորձված գործիչներ: Հոնան Դավթյանի Կ. Պոլսում հաստատվելու եւ գործունեություն ծավալելու փորձն ընտանեկան ինչ-ինչ խնդիրների պատճառով հաջողություն չի ունենում: Թեեւ, ինչպէս 1896թ., այս անգամ եւս,

⁹⁰ Նույն տեղում, էջ 320: Նույնը՝ Ռոստոմ. մահուան վարսունամեակին առիթ, Բեյրութ, 1979, էջ 123-124:

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցչի կարգավիճակով Կ.Պոլիս է մտնում Սմբատ Խաչատրյանը (Բորիս), բայց նրա անձնական ունակությունների ու կարողությունների մասին լուրջ, եւ ինչպես հետագա իրադարձությունները ցույց տվեցին, ոչ անհիմն, առարկություններ ուներ հասկապես «Դրոշակի» խմբագրությունը:

«Դրոշակի» խմբագրությունը մեր կողմից վերը նշված հանգամանքները նկատի ուներ, երբ Ատրպատականի գործիչներին 1897թ. մայիսի 8-ին ուղղված նամակում բացառում էր Կ.Պոլսում եւ Ատրպատականում միաժամանակ գործելու հնարավորությունը: «Կռուածաղկի (Կ.Պոլսի՝ Հ.Գ.) հետ միաժամանակ գործելու գաղափարը իրագործել չի կարելի. – ասվում էր այդ նամակում, – Գ-նն մօտիկ ապագայում, որովհետեւ դեռ պատրաստ չեն»⁹¹:



Քրիստափոր Միքայելյան

Դրան հակառակ, ՀՅԴ Բյուրոն եւ Ատրպատականի Կենտրոնական կոմիտեն պնդում էին միաժամանակյա կամ մեկը մյուսին հաջորդող հարվածներ հասցնելու վրա: Նույն օրերին Ռոստոմին գրած նամակում Քրիստափոր Միքայելյանը, ներկայացնելով իր՝ բնականաբար նաեւ ՀՅԴ Բյուրոյի, տեսակետն այդ հարցում, գրում է. «Կռուածաղկի մեր ընկերներին գրեցինք, որ հնար եղածի չափ շտապեցնեն իրանց անելիքը, որովհետեւ ներկայ կրիստիկական բուստն (նկատի ունի հույն-թուրքական պատերազմի հետեւանքով ստեղծված իրավիճակը՝ Հ.Գ.) անենայարմարն է մեր նպատակների համար եւ այսօրուայ նոյնիսկ փոքրիկ ձեռնարկը կարող է անելի մեծ ազդեցութիւն ունենալ, անելի լաւ հետեւանք առաջացնել, քան թէ ապագայի մեծ նախապատրաստած գործը: Բացի դրանից, կարծում ենք, որ անհրաժեշտ է Վրէժտանի արշաւանքը եւ Կռուածաղկի ձեռնարկը միմեանց հետ կապել, այսինքն՝ այնպէս ա-

91 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 419: Նույնը՝ «Հայրենիք» ամսագիր, 1941, N 8, էջ 166-167:

նել, որ մեկը միսին հետեւի»⁹²: Տեղյակ պահելով, որ արշավանքի նախապատրաստական աշխատանքները գրեթե ավարտված են եւ որ այն կիրականացվի մայիսի վերջին կամ հունիսի սկզբին, Քրիստափորը «Դրոշակի» խմբագրությանն առաջարկում էր, որ վերջինս իր կողմից դիմի Կ.Պոլսի գործիչներին՝ այնտեղ նախատեսված ձեռնարկն արագացնելու համար⁹³: Մինչդեռ, ինչպես տեսանք, «Դրոշակի» խմբագրությունն այդ հարցում միանգամայն այլ կարծիքի էր: Հետագա իրադարձություններն էլ ակնհայտորեն ցույց տվեցին, որ հույն-թուրքական առնակատման հետեւանքներն ամենեւին էլ բարենպաստ չէին Հայկական հարցի հետագա վերաբարձման համար:



Բուրարացի Պետտ (Պետրոս Սերեմճյան)

Արշավանքի իրագործման ժամկետի հարցում Քրիստափոր Միքայելյանի լավատեսությունը, սակայն, չի արդարանում: Գ-ա բացատրվում է երկու հանգամանքներով: Նախ, ՀՅԴ Ատրպատականի մարմինները որոշակիորեն ձգձգում են դրա իրականացումը՝ հույս ունենալով արշավանքը զուգակ-

ցել Կ.Պոլսում նախատեսված ձեռնարկների հետ: Մյուս կողմից, չնայած Ատրպատականում նախապատրաստական աշխատանքների ավարտին, ռալոնական ժողովի որոշումից հետո էլ արշավանքի նպատակահարմարության հարցում շարունակում էին պահպանվել էական տարածայնություններ Ատրպատականի եւ Վասպուրականի ղեկավար գործիչների շրջանում: Նրանցից ոմանք (Վազգեն, Վարդան (Ս.Մեհրաբյան), Պետրոս Սերեմճյան (Բուրարացի Պետտ), Գուրգեն (Բ. Մայան) եւ ուրիշներ) դեմ էին արշավանքին եւ առաջար-



Միքայիլ (Քրիստափոր Օհանյան)

92 Դիւան Հ. Յ. Դաշնակցութեան, հ. 2, էջ 420: «Հայրենիք» ամսագիր, 1941, N 8, էջ 167:

93 Տե՛ս նույն տեղում:

կում էին եղած ուժերը խումբ-խումբ փոխադրել Վասպուրական, ամրանալ որեւէ վայրում, օրինակ՝ Շատախում եւ պայքար ծավալել թշնամու դեմ, մինչդեռ մյուսները (Նիկոլ Դուման, Քրիստափոր Օհանյան, Գալուստ Ալոյան, Սարգիս Օհանջանյան (Ֆարհատ) եւ ուրիշներ)՝ ընդհակառակը, արշավանքն իրականացնելու կողմնակիցներ էին։ Նրանց միջեւ առաջացած առճակատումը վերացնելու եւ արշավանքին ընթացք տալու նպատակով 1897թ. հուլիսին, որպէս ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ, Մալմաստ է ժամանում Հարություն Շահրիկյանը։ Նրա ջանքերով տարակարծությունները հարթվում են եւ վերջնական վճիռ է կայացվում արշավանքի օգտին։ Դրանով հանդերձ, մասամբ բավարարվում է նաեւ Վասպուրակա-



Գալուստ Ալոյան



Խանասորի դաշտը եւ արշավանքի ուղիների հատակագիծը

նի գործիչների պահանջը, եւ նախքան արշավանքը 25 (այլ տարբերակով 35) հոգանոց զինված խմբով Վան են վերադառնում Վազգենը եւ Գուրգենը։ Վերջինս ՀՅԴ լիազոր ներկայացուցչի իրավասություններով շուտով անցնում է Ախլաթ, ապա Տարոն- Մասունի շրջան⁹⁴։

94 Մանրամասն տես՝ Մ. Վարսևիչան, *Նշված աշխատ.*, էջ 149-152: Նաեւ՝ *Ռուբեն. Հայ յեղափոխականի մը յիշատակները*, հ. 2, Երևան, 1990, էջ 38-40, հ. 3, 156-161: Էդուարդ Տարսնյան, *Արիմոտ եւ արեւոտ Էջեր (դրուագներ Հ.Յ.Դ. գործունեութենէն)*, Պէյրոս, 1934, էջ 10-18:

Գաշնակցական 253 մարտիկներից բաղկացած արշավախումբը 1897թ. հուլիսի 24-ի լույս 25-ի գիշերը Վարդանի (արշավախմբի հրամանատար), Իշխանի (փոխհրամանատար), Նիկոլ Դումանի (արշավանքի կազմակերպիչ) ու այլոց հրամանատարությամբ Ատրպատականի տերիտորիայից անցնում է պարսկա-թուրքական սահմանը եւ Արաուլ լեռան փեշերին՝ Խանասորի դաշտում վաղ առավոտյան հարվածում Շարաֆ բեկի գլխավորած քրդական մագրիկ ցեղախմբին։ Աղեղնածե շրջապատելով մագրիկցիների 250 վրանները, որոնց կենտրոնում գտնվում էին Շարաֆ բեկի երեք սպիտակ վրանները, հայ մարտիկները գնդակոծում են հակառակորդին՝ նրան պատճառելով մեծ կորուստներ։ Շատերն, այդ թվում նաեւ Շարաֆ բեկը, իրենց կյանքը փրկում են փախուստի դիմելով։ Գրավելով հարմար դիրքեր, հայ վրիժառուները հուլիսի 25-ին ետ են մղում մագրիկցիներին օգնության եկած հարեւան քրդական ցեղերի, ինչպէս նաեւ կառավարական բազմահազար ուժերի զորհները՝ կռիվների ընթացքում տալով 19 հերոս նահատակներ։ Ի վերջո, դիմելով նահանջի՝ արշավախումբը վերադառնում է Պարսկաստան՝ պահպանելով իր հիմնական մարտական ուժը, զենքն ու հանդերձանքը։



Նիգրո
(Հարություն Շահրիկյան)

Խանասորի արշավանք աննախադեպ երեւոյթ էր հայոց ազատամարտի համար։ Այն ցուցադրեց հայ հայդուկի հոգու վեհությունը, նրան բնորոշ մարդասիրությունը եւ ընդհանրապէս հայ ազատագրական շարժման բարոյական բարձր նկարագիրը։ Այդ տարիներին ժողովրդի միջավայրում ստեղծված եւ Խանասորի վրիժառու հայ հայդուկին նվիրված երգի «Կնոջն երբեք ձեռք տալու չէ վրեժխնդիր քաջ ֆիդան» պատվիրանի իմաստ ունեցող տողը հայ ազատագրական շարժման անխախտելի կանոններից մեկը դարձավ։

Լինելով մեծամասշտաբ արշավանքներից առաջինը եւ



Արշակ
(Մարգիս Ասիաբաբյան)

նաեւ հետագա տարիներին կազմակերպվածներից ամենաբազմամարդը, Խանասորի արշավանքը շահեկանորեն տարբերվում է մյուս բոլոր արշավանքներից, որոնք, որպէս կանոն, ավարտվում էին մարդկային ու ռազմական ռեսուրսների մեծ կորուստներով: Իր բովանդակությամբ եւ նախնական ծրագրմամբ այն պատմիչ-վրեժխնդրական ձեռնարկ էր եւ հարձակողական մարտավարության դրսեւորում: Չնայած նրա առջեւ դրված գլխավոր ռազմական խնդիրը՝ մագրիկ ցեղի բնաջնջումը, չի իրագործվում, այնուհանդերձ, այն լիցք է հաղորդում հայ ազատագրական շարժմանը՝ կրկին ցուցադրելով պայքարը շարունակելու վճռականությունը: Մյուս կողմից, այն,



Իշխան
(Հովսեփ Արդուրյան)

անկասկած, որոշակի զսպող ազդեցություն է ունենում նաեւ թուրք-պարսկական սահմանի շրջակայքում բնակվող քրդական այլ ցեղերի համար: Նրանք սկսում են ընկալել, որ հարկ եղած դեպքում հայն էլ կարող է իրենից մարտական ուժ ներկայացնել եւ վրեժխնդիր լինել իրեն կոտորողներից: Հիշյալ հանգամանքը սահմանամերձ շրջանների քրդերի մի մասին դրդում է կամ առանձին դեպքերում բարեկամանալ հայերի հետ, կամ գոնե չեզոք դիրք գրավել նրանց նկատմամբ⁹⁵: Դա կարեւոր հանգամանք էր, եւ հետագա տարիներին իր որոշակի նպաստն է բերում Պարսկաստանից Վասպուրական գեների փոխադրման գործի նոր ձեւով կազմակերպմանը եւ այսպէս կոչված «ծծման» եղանակի հաջող կիրառմանը: Ուշագրավ է, որ տարիներ անց ինքը՝ մագրիկցիների ցեղապետ Շարաֆ բեկն էլ փնտրում էր դաշնակցության բարեկամությունը⁹⁶: Այդ մա-

սին ուշագրավ վկայություն է թողել Համբարձում Երամյանը, որին ամենեւին էլ չի կարելի «մեղադրել» դաշնակցականամետ լինելու մեջ: Նա գրում է. «Դաշնակցութիւնը, սակայն, պիտի յաջողէր ի վերջոյ Շէրէֆ պէյը իւր ձեռքին մէջ իլու կամակատար գործիք մը դարձնել ու նոյն իսկ անոր ուղղակի եւ անուղղակի օժանդակութեամբ գէնք փոխադրել մինչեւ Վան ու շրջակաները»⁹⁷: Բայց եւ այնպէս, հանուն ճշմարտության, պետք է արձանագրել, որ Խանասորի արշավանքը չկարողացավ եւ չէր էլ կարող իրագործել արմատական շրջադարձ հայ-քրդական հարաբերություններում: Ազգային, կրոնական, սոցիալ-տնտեսական ու քաղաքական բազմազան հանգամանքների պատճառով դրանք հետագա տարիներին էլ մեծամասամբ շարունակում էին մնալ թշնամական:



Խանասորի արշավանքի իրապատմական կազմը

Պատմիչ-վրեժխնդրական հարցեր լուծելով հանդերձ, Խանասորի արշավանքը, ինչպէս վերը տեսանք, հայոց զինյալ ազատամարտի 1897թ. համար նախանշված մարտավարության մաս էր կազմում եւ ուներ նաեւ Հայկական հարցի վրա դիվանագիտության ուշադրությունը հրավիրելու խնդիր: Ճիշտ է, այդ բնագավառում նրա արդյունքները շոշափելի չէին եւ միջազգային արձագանքներն էլ սպասվածից փոքր, բայց դրանք ավելի շատ

95 Տե՛ս Ռոբէն, նշված աշխատ., հ. 2, էջ 43-45:
96 Տե՛ս Նիկիթր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Դ, հատոր, Բէյրութ, 1982թ. էջ 326-327: Նաե՛ւ Ա. Ամուրեան, Հ. Յ. Դաշնակցութիւնը Պարսկաստանում 1890-1918, Թեհրան, 1950, էջ 76:

97 Համբարձում Երամյան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հ. Բ., Աղեքսանդրիա, 1929, էջ 5:

պայմանավորված էին ոչ թե արշավանքի անարդյունավետությամբ, այլ այդ ամիսներին ստեղծված միջազգային որոշակի իրավիճակով, մասամբ նաեւ Կ.Պոլսում Խանասորի արշավանքին զուգահեռ իրականացվելիք ձեռնարկների գրեթե լիակատար ձախողմամբ:

Արշավանքն իրականացվեց մերձավորարեւելյան ճգնաժամի եզրափակիչ փուլում՝ Հայկական հարցի համար ստեղծված խիստ անբարենպաստ պայմաններում: Կրետեում 1897թ. սկսված հակաթուրքական ապստամբությունը մարելու ջանքերն ապարդյուն են անցնում եւ նույն տարվա ապրիլին բռնկվում է հույն-թուրքական պատերազմը: Դրա ընթացքն անհաջող էր հունական կողմի համար, եւ տերությունների միջնորդությամբ մայիսին կնքվում է զինադադար, իսկ սեպտեմբերին՝ հաշտության պայմանագիր: Դրանով Օսմանյան կայսրությունը ձեւականորեն պահպանում էր իր տարածքային ամբողջականությունը, բայց՝ ի հաշիվ Կրետեին տրված վարչական ինքնավարության՝ քրիստոնյա գեներալ-նահանգապետի գլխավորությամբ:

Ռուսաստանի, Անգլիայի, Ֆրանսիայի եւ Իտալիայի մանդատը ստանալով այդ պաշտոնը ստանձնում է հունական արքայազն Գեորգը⁹⁸: Կրետեի խնդիրն այնքան առանցքային էր մերձավորարեւելյան քաղաքականության մեջ, որ այդ ամիսներին իր վրա էր բեռեռել միջազգային դիվանագիտության ուշադրությունը՝ տեսադաշտից դուրս թողնելով եւ երկրորդական դարձնելով Հայկական հարցը: Դա ի դերեւ է հանում հայ ազատագրական պայքարի գլուխ կանգնած առանձին գործիչների այն սպասելիքները, թե Կրետեի խնդրի ակտիվացումը լրացուցիչ լիցք կհաղորդի տերությունների գործունեությանը նաեւ Հայկական հարցում: Հույսերը, թե արշավանքն ու Կ.Պոլսի ձեռնարկները կրկին առաջին պլան կմղեն այն, չեն արդարանում:

Յավոք, շոշափելի ու պատշաճ արդյունքներ չեն ունենում նաեւ Կ. Պոլսի համար նախատեսված ձեռնարկներ:

րը: Կ.Պոլիս բավարար քանակությամբ ուժանակ, ռումբեր եւ փորձված գործիչներ մտցնելու մի քանի ամսվա ջանքերն ապարդյուն են անցնում: Հնարավոր չի լինում ապահովել նաեւ տեղական ուժերի այն մասշտաբով մասնակցությունը ձեռնարկներին, որպիսին առկա էր 1896թ.: Մի կողմից այդ հանգամանքը, մյուս կողմից՝ Խանասորի արշավանքին եւ Օսմանյան դրամատան գրավման տարեկիցին անպայման արձագանքելու ցանկությունը, ՀՅԴ Կ.Պոլսի ղեկավար գործիչներին հարկադրում են չնչին ուժերով գնալ ամենեւին էլ լավ չնախապատրաստված ձեռնարկների իրականացման: Դանկատի ուներ Հոնան Դավթյանը, երբ ՀՅԴ Ատրպատականի կոմիտեին 1897թ. օգոստոսի 7-ին ուղարկված նամակում գրում էր հետեւյալ տողերը. «Կռուածաղիկի գործերը դանդաղ են գնում, շնորհիւ այն հանգամանքին, որ մինչեւ օրս բոլոր մտածուած միջոցները (իդ ներմուծելու) ապարդիւն են անցել, եւ այժմ կանգ են առել մի ձեւի վրայ, որը յոյս է ներշնչում թէ կարելի կը լինի շուտ ժամանակում մի բան սկսել: Նախնական պատրաստութիւնները լաւ են, եւ միանգամայն յուսալի»⁹⁹:

Սակայն, այդ նամակը գրելուց մեկ օր առաջ Կ.Պոլսում տեղի ունեցած դեպքերը, որոնց մասին նամակը գրելիս բնականաբար դեռեւս տեղյակ չէր Հոնան Դավթյանը, ակնհայտորեն ցույց տվեցին, որ վերը նշված տողերում առկա լավատեսության համար առանձնակի հիմքեր չկային:

Նախորդ տարվա ձեռնարկների փորձից ելնելով վճիռ էր կայացվել այս անգամ եւս Կ.Պոլսում միաժամանակ իրականացնել մի քանի հարվածներ: Որպես գլխավոր քիրախ ընտրված էր Օսմանյան կառավարության նստավայր Բաբ Ալին: Նախատեսվում էր կառավարության նիստի ժամանակ այդ շենքում հզոր ռումբ պայթեցնել՝ կառավարությունը ոչնչացնելու նպատակով: Ճիշտ նույն ժամին մեկ այլ վրիժառու, իր ձեռքում ունենալով ուժանակով ծրար, պետք է թափանցեր Օսմանյան դրամա-

98 Մանրամասն տե՛ս В. А. Емел, А. В. Игнатен и др., *նշված աշխատ.*, էջ 108-110:

99 «Հայրենիք» ամսագիր, 1942, N 5, էջ 108:

տուն եւ պայթեցներ այն: Եւ երկու հայ մարտիկներ, այդ պահին ռումբեր նետելով Ղալաթա-Սարայի վրա, պետք է ոչնչացնէին այնտեղ գտնվող զինվորներին ու ոստիկաններին: Թեւ նախատեսված հարվածները չունէին նախորդ տարվա ձեռնարկների մասշտաբայնությունը, բայց դրանց կազմակերպիչները հույս էին փայփայում հաջողության պարագայում խառնաշփոթ իրավիճակ ստեղծել կայսրության մայրաքաղաքում:

Ձեռնարկների իրագործման օրը՝ 1897թ. օգոստոսի 6-ին Բեռլինի դաշնագիրը ստորագրած 6 տերությունների Կ.Պոլսի դեսպաններին է ներկայացվում ՀՅԳ Կ.Պոլսի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունը: Դրանում հիշեցվում էր հայ ժողովրդի ծանր վիճակը եւ շեշտվում, որ 1896թ. օգոստոսի 14-ից հետո անցած մեկ տարում որեւէ դրական փոփոխություն չի արձանագրվել նրա կյանքում: Հայտարարությունն ավարտվում էր հետեւյալ խոսքերով. «Մենք կը պահանջենք ինչ որ անհրաժեշտ է լոկ իբրեւ մարդ ապրելու համար եւ երբեք չպիտի դադրինք գործելէ, մինչեւ չիրականանան մեր այս արդար, իրաւացի եւ մեր նահատակ եղբայրներու արիւնով նուիրագործուած պահանջները»¹⁰⁰:

Կ.Պոլսում կազմակերպված ձեռնարկներից երկուսն ի սկզբանէ ձախողվում են: Օսմանյան դրամատուն մտած եւ Ղալաթա-Սարայի վրա ռումբեր պայթեցնելու փորձ կատարած մարտիկներն անմիջապէս ձերբակալվում են, այդպէս էլ չհասցնելով կատարել իրենց վրա դրված առաջադրանքները: Թեւ զլխավոր թիրախի՝ Բաբ Ալիի համար նախատեսված ռումբը պայթում է, իսկ այն իրականացնողներն էլ գերժ են մնում ձերբակալությունից, այնուհանդերձ, սխալ հաշվարկի եւ տեխնիկական անճշտության պատճառով պայթյունի հետեւանքներն ավելի քան համեստ էին¹⁰¹:

Այսպիսով, Կ. Պոլսում հասցված հարվածներն ան-

բողջության մեջ անարդյունավետ էին եւ չեն կարողանում լուծել իրենց առջեւ դրված խնդիրները: Մասամբ այդ պատճառով, մասամբ էլ միջազգային նոր արձագանքների առիթ չստեղծելու մտահոգությամբ, սուլթանն այս անգամ գերադասում է լռությամբ կոչ տալ վիրավորանքը: Այլ պարագայում նա գուցէ չէր հրաժարվի նոր ջարդերի իրականացումից, բայց Կրետեի խնդրի սատեցման գործընթացում նրան ձեռնտու չէր հայկականի վերարժարծումը: Թերեւս դա նկատի ուներ գերմանական «Քյոլնի-շե Ցայտունգ» թերթը՝ այդ օրերին գրելով հետեւյալ տողերը. «Բ. Դրան պայթիւնը քաղքին մէջ մեծ գրգռում պատճառեց: Կառավարութիւնը առաջին անգամ ծածկեց եղելութիւնը, յետոյ հաստատեցաւ, որ Մեծ-Վեզիրին քարտուղարներէ մեկը, Չիա պէյ, եւ ուրիշ չորս պաշտօնեաներ սպաննուած են, քանի հոգի ալ վնասուած»¹⁰²:

Թեւ ամբողջության մեջ 1897թ. համար ծրագրված մարտավարությունը չի հասնում իր նպատակին, այնուհանդերձ, Խանասորի արշավանքը եւ Կ.Պոլսի թեկուզ եւ ձախողված ձեռնարկները հարկադրում են Արդուլ Համիդ 2-րդին վերսկսելու ՀՅԳ հետ ընդհատված բանակցությունները: Այդ դեպքերից հետո եւ դրանց անմիջական ազդեցությամբ էր, որ Տրդատ բեյ Տատյանը մեկնում է Ժնև եւ այնտեղ ամիսներ շարունակ վարում արդեն վերը հիշատակված բանակցությունները: Ինչ վերաբերում է Խանասորի արշավանքի եւ Կ.Պոլսի ձեռնարկների միջազգային արձագանքներին, ապա «Կ.Պոլսի հորիզոնի վրա սեւ ամպեր նշմարվելու» եւ Կ.Պոլսի դեսպանատներն ու սուլթանի պալատը ֆրանսիացի ու ռուս զինվորների միջոցով պահպանվելու մասին եվրոպական մամուլում հայտնված լուրերը մնացին սոսկ օրվա ասեկոսներ¹⁰³: 1897թ. աշնանն ակնհայտորեն թուլացած էր, եթէ չասենք բացակայում էր, հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ:

100 Նիսեր չ. 3. Դաշնակցութեան սրտմտրեան համար, Ա. հատոր, Բէյրութ, 1972, էջ 170-171:

101 Տես նույն տեղում, էջ 169:

102 Հայաստանի Հանրապետության Հասարակական Բարոյական Կազմակերպությունների Փաստաթղթերի Կենտրոնական Պետական Արխիվ, ֆ. 4047, ց. 1, գ. 6, ք. 1:

103 Տես նույն տեղում:

3. ՀՅԳ 2-րդ ընդհանուր ժողովը. ազատագրական պայքարի նոր մարտավարության մշակումը

Հայ զինյալ պայքարի 1897թ. համար ծրագրված հարվածները հարկ եղած արդյունավետությունը չունեցան: Չհաջողվեց ապահովել նաեւ դրանց միասնականությունը՝ միաժամանակյա լինելու կամ մեկը մյուսին հաջորդելու առումով: Այնուհանդերձ, «զուգակցված հարվածների» կամ հարձակողական մարտավարության ձախողումը պայմանավորված էր ոչ այնքան հեղափոխական ուժերից կախված սուբյեկտիվ հանգամանքներով, որքան արտաքին բաղաբաղական գործոններով: Մերձավոր Արեւելքում տերությունների շահերի ընդգծված հակադրությունը բացառեց նրանց միասնական գործողությունները Հայկական հարցում:

Հատկապես Ռուսաստանի կողմից Օսմանյան կայսրության տարածքային ամբողջականությունը պահպանելուն նպատակամղված վճռական գործողությունները բացառեցին որեւէ դրական արդյունք այդ բնագավառում: Իսկ դա նշանակում էր, որ միջազգային միջամտության ճանապարհով Հայկական հարցին դրական լուծում ապահովելուն միտված, հարձակողական բովանդակություն ունեցող «զուգակցված հարվածների» մարտավարությունը, որը 1895թ. վերջերից ընկած էր հայոց ազատամարտը գլխավորող ՀՅԳ գործունեության հիմքում, չարդարացրեց ու սպառեց իրեն եւ հետագայի համար այլեւս չէր կարող կիրառելի լինել: Եթե դեռեւս 1896թ. վերջերին հայ ազատագրական պայքարը կազմակերպող ու ղեկավարող գործիչների մի մասի շրջանում այդ խնդրում կային լուրջ կասկածներ, ապա 1897թ. աշնանը, հատկապես Կ.Պոլսի ձեռնարկների տապալումից հետո, կիրառվող մարտավարության հասցեին բարձրաձայն հնչեցին լուրջ քննադատության խոսքեր:

Արդեն 1897թ. օգոստոսին ՀՅԳ Բալկանյան կոմիտեների ընդհանուր ժողովում դրվում է Կ.Պոլսում իրակա-

նացված վերջին ձեռնարկների նպատակահարմարության հարցադրումը: Ուշադրություն է հրավիրվում դրանց անժամանակ ու լավ նախապատրաստված չլինելու վրա եւ առաջադրվում է բուն երկրում ժողովրդին զինելու ու պատրաստելու հարցը¹⁰⁴:

Հետագա ամիսներին դժգոհությունները հասնում են այն աստիճանի, որ «Դրոշակի» խմբագրությունը, ի դեմս Ռոստոմի ու Ա. Վռամյանի, շտապում է ամենուրեք հղված նամակներով լուսաբանել տեղի ունեցած իրադարձությունները, հանդարտեցնել մտքերը եւ ներկայացնել սեփական նկատառումները կատարվածի վերաբերյալ¹⁰⁵: Այդ նկատառումների հակիրճ ամփոփումը կարելի է տեսնել 1897թ. սեպտեմբերի 20-ին գրված նամակում, որում մասնավորապես ասվում է. «Պոլսի վերջին դեպքերու մասին հարկաւ տեղեկութիւններ ստացած եք ցարդ: Գործը յաջող ալ անցներ, եթէ անդարմանելի կորուստներ ալ չունենայինք – տեղական Սիւնիք կոմիտէն (լուսագոյնը) փճացած է. Փարիզցիւն եւ իր ընկերը ձերբակալուած, – Կեդր. կոմիտէն չուած (Բորիսը, Գիսակը, Սիւնին դէպքէն առաջ մեկնած) ալ չըլլար, բայց անժամանակ էր. ի գուր է կարծել թէ Պոլսի մէջ մեր խնդրով կարող էին զբաղիլ, յունական հաշտութիւնը չկնքած, Կրետէի խնդիրը չկարգադրած: Շատ ծախք, մեծամեծ կորուստ եւ քիչ գործ ու արդիւնք: Շատ դժուար է, եթէ միայն անկարելի չըլլայ, բան մը պատրաստել Պոլսի մէջ այն վճռական վայրկեանին համար, երբ բարենորոգումներու խնդիրը երեւան գայ: Բոլոր կոմիտեներն ալ դժգոհութիւն կը յայտնեն. գրեթէ ցարդ մեր ստացած նամակները այդ ոգով գրուած են»¹⁰⁶:

Հիմնականում ճիշտ հարցադրումներով հանդերձ, այդ նամակներում հնչում են նաեւ անարդարացի քննադատական խոսքեր Կ.Պոլսի ձեռնարկների անմիջական կազմակերպիչների հասցեին: Նրանք մեղադրվում էին

104 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1943, N 2, էջ 109-110:

105 Տե՛ս նույն տեղում, էջ 112, 1943, N 4, էջ 108-111, N 5, էջ 107, 1944, N 2, էջ 106:

106 Նույն տեղում, 1943, N 4, էջ 112:

ինքնագլուխ գործունեության մեջ: Մասնավորապես, 1897թ. դեկտեմբերի 11-ին Հ. Յուսուֆյանին հղված նամակում Ա. Վռամյանը մատնանշում է այն հանգամանքը, որ «արտասահմանի ո՛չ մէկ մարմնի հասանութիւն առնուած էր կատարելիքի մասին եւ ո՛չ մէկուն հաղորդուած պատրաստուող ցոյցին **հանգամանքը**: Բաւական չէ այդ տեղացոց ընդդիմութիւնը կոտրելու համար արտասահմանի ընկերներու **անունով** գործած են»¹⁰⁷: Նման մեղադրանքը տեղին չէր, քանզի, ինչպես վերը տեսանք, Կ. Պոլսի ձեռնարկների մասին կար ՀՅԴ 1896–1897թթ. ռայոնական ժողովի որոշումը, իսկ ՀՅԴ Բյուրոն էլ պնդում էր, որ այդ ձեռնարկները զուգակցվեն արշավանքի հետ, մի հանգամանք, որը ՀՅԴ Կ. Պոլսի Կենտրոնական կոմիտեն փորձեց իրականացնել ստեղծված անչափ դժվարին պայմաններում: Եվ եթե նրա կողմից կար ինքնագլուխ գործելու պահ, ապա դա կարող էր լինել սոսկ իրականացվելիք ձեռնարկների որոշակիության եւ դրանց տեխնիկական նախապատրաստության հարցերում: Մինչդեռ դրանք չունեցան եւ չէին էլ կարող ունենալ վճռորոշ դերակատարություն ընդհանուր մարտավարության ձախողման գործում: Այդ առումով երեսույթին ավելի իրատեսորեն էր մոտենում Ռոստոմը, երբ 1897թ. հոկտեմբերի 10–ին ՀՅԴ Բյուրոյին գրած նամակում վերջինիս հասցեին էր ուղղում հետեւյալ քննադատական տողերը. «Իսկ թէ ինչ է եղել Պոլսում, ինչ գանգատներ են տեղում, այս բոլորի մասին գրաւոր փաստեր են կուտակվում: Այս բոլորի պատասխանատուութիւնը ձեզ վրայ է քարդում, դուք եղաք բոլորի պատճառը»¹⁰⁸: Գիտենալով ՀՅԴ Բյուրոյի առանցքային գործիչների սկզբունքային դիրքորոշումն այդ հարցերի վերաբերյալ, չի կարելի չհամաձայնել Ռոստոմի այդ քննադատության հետ:

Այսպիսով, Կ. Պոլսի ձեռնարկների ձախողումը եւ հատկապես միջազգային փոփոխված իրադրությունը լուրջ տարակուսանքներ են առաջ բերում ազատագրա-

107 Նույն տեղում, 1943, N 4, էջ 108:

108 Նույն տեղում, 1944, N 1, էջ 106:

կան պայքարի մինչ այդ կիրառվող մարտավարության արդյունավետության ու ճշտության վերաբերյալ: ՀՅԴ Կ. Պոլսի կազմակերպության մեծ կորուստները եւ կայսրության մայրաքաղաքում հսկողության էլ ավելի խստացումն ակնհայտ են դարձնում, որ Կ. Պոլիսը տեսական ժամանակով այլեւ ի վիճակի չի լինելու ակտիվ մասնակցություն բերել սուլթանական բռնապետության դեմ մղվող գործնական պայքարին: Ազատագրական պայքարի ակտիվության կենտրոնն անխուսափելիորեն դառնում էր բուն Արեւմտյան Հայաստանը: Վերջինս, իր հերթին, նախորդ տարիների պայքարից թուլացած եւ զանգվածային ջարդերի արդյունքում ուժասպառ, ի վիճակի չէր շարունակելու ակտիվ ու հարձակողական բնույթի զինված պայքարը: Ստեղծված իրավիճակում, քնակաւնաբար, գերիշխող պետք է դառնար հարձակողական մարտավարությունից հրաժարվելու, գալիք կռիվների համար Երկրի ուժերը համախմբելու եւ լուռ, համբերատար աշխատանքով ժողովրդին զինելու մտայնությունը: Նման մտայնությունը քաղաքական գծի վերածելու եւ ժողովրդին ընդհանուր ապստամբության նախապատրաստելու գաղափարն ազատագրական պայքարի մարտավարության առանցքում դնելու գործում վճռորոշ դեր խաղաց 1898թ. ապրիլ–հուլիս ամիսներին տեղի ունեցած ՀՅԴ երկրորդ ընդհանուր ժողովը: Հանուն ճշմարտության պետք է արձանագրել, որ վերջինիս կողմից մարտավարության վերաբերյալ ընդունված բոլոր սկզբունքային որոշումները նախապես ստացել էին ՀՅԴ Կովկասյան մարմինների 1897–1898թթ. տարեկան շրջանային ժողովի հավանությունը¹⁰⁹:

Թե ազատագրական պայքարի մարտավարությունը ճշգրտելու եւ հստակեցնելու հարցը որքան հրատապ ու կարեւոր էր ՀՅԴ համար, վկայում է այն փաստը, որ ընդհանուր ժողովը դրա քննարկմանը տրամադրում է 15 երկարատեւ նիստեր: Ըստ որում, չնայած ընդհանուր ժողո-

109 Տե՛ս Նիսեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Բ. հատոր, էջ 39-41:

վր տեղի էր ունենում Հայկական հարցի համար ստեղծված միջազգային միանգամայն աննպաստ պայմաններում՝ կապված Կրետեի հարցի լուծումից հետո մերձավորարևելյան խնդիրների նկատմամբ տերությունների ուշադրության ժամանակավոր թուլացման հետ, այնուհանդերձ, հարկ է համարվում մարտավարության խնդիրները քննարկելուց առաջ վերաբերմունք արտահայտել Հայկական հարցի լուծման գործում արտաքին գործոնի դերի վերաբերյալ: ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը «սկզբունքով միաձայն ընդունեց, թէ առանց երուպական միջամտութեան անկարող ենք մեր ժողովուրդի ազատութեան գործը գլուխ բերել, հետեւաբար, գործունէութեան եղանակը որոշելու ատեն ի նկատի պիտի ունենալ այդ միջամտութիւնը յառաջ բերելու բոլոր հնարատրութիւնները»¹¹⁰: Այդ որոշմամբ, ելնելով նախորդ տարիների փորձից, ՀՅԴ-ն սկզբունքով հրաժարվում էր Հայկական հարցն ինքնուրույն՝ միայն հայ ժողովրդի ուժերով լուծելու, իր գործունէության առաջին շրջանին բնորոշ, մտայնությունից:

Ընդհանուր ժողովի կողմից որդեգրվելիք մարտավարության խնդրում ուրվագծվում են երեք հիմնական մոտեցումներ, որոնք արտացոլում էին դեռեւս նախորդ ամիսներին նկատվող տրամադրությունները:

Որոշ պատվիրակներ ստեղծված իրավիճակում անկարելի ու վնասակար էին համարում բուն Արեւմտյան Հայաստանում զինյալ պայքարի շարունակումը, առաջարկում դադարեցնել այն, ամբողջ ուժը գործադրել Թուրքիայի ծովեզրյա կետերի վրա, որտեղ կազմակերպված ցուցական ելույթներով կարելի կլիներ շոշափել Եվրոպական շահերը, վառ պահել ուշադրությունը Հայկական հարցի նկատմամբ եւ Եվրոպայի օգնությամբ հասնել խոստացված բարենորոգումների իրականացմանը: Ինչպես վերը տեսանք, հենց նման մտայնությունն էր, որ խիստ վտանգավոր ու անցանկալի էր համարում Ռոստոմը:

Ընդհանուր ժողովում, թեկուզ թույլ, բայց եւ այնպես դրսեւորվում է նաեւ նախկին մարտավարությանը բնորոշ ցույցը եւ ֆիդայական-պարտիզանական կռիվը զուգակցելու մտայնությունը: Չնայած վերջինիս կողմնակիցների թիվը չնչին էր:

Վերը նշված երկու մտայնություններին հակադրվում է երրորդ մոտեցումը, որին վիճակված էր գերակշռող դառնալ ժողովականների շրջանում: Մերժելով զուտ ցուցական գործունէությամբ սահմանափակվելու առաջարկը, ժողովականների մեծամասնությունն անընդունելի էր համարում երկրում գործելու անհնարինության, դրամական միջոցների սակավության եւ նմանատիպ այլ փաստարկները: Նրանք պնդում էին, որ ազատագրական շարժման բուն արմատները Արեւմտյան Հայաստանում են, ուստի ՀՅԴ գործունէության սառեցումն այնտեղ չի հանգեցնի պայքարի դադարեցմանը: Երկրում իրենց գոյությունը պահպանող եւ օրեցօր ասպարեզ իջնող նոր ուժերին անդէկ թողնելը, նրանց կարծիքով, կարող էր հանգեցնել ծանր ու աղետալի հետեւանքների: Առարկելով ցուցական ելույթների դերի ու հետեւանքների գերազնահատման մտայնությանը, նրանք գտնում էին, որ նման ելույթները արդյունավետ կարող են լինել սոսկ այնքանով, որքանով կշաղկապվեն բուն երկրում կատարվող դեպքերի հետ եւ որ պաշտոնական Եվրոպան ու հանրային կարծիքն այն ժամանակ միայն կմիջամտեն Հայկական դատին, «եւր հայ ժողովուրդի հզօր բողոքը լսեն իր իսկ օճախին մոտ...»: Դրանով հանդերձ, նրանց կողմից մերժվում էին նաեւ պարտիզանական-ֆիդայական կռիվները, որոնք, ինչպես նախորդ տարիների փորձն էր ցույց տվել, դրական արդյունքներ չունենալով, կարող էին պարզապես ջարդերի առիթ հանդիսանալ:

Որպես այլընտրանք առաջ էր քաշվում Երկրում ուժերի կենտրոնացման գաղափարը: Այն մի կողմից թույլ կտար ժողովրդին պատրաստել ապագա ընդհանուր շարժման համար, այլ պարագայում՝ ինքնապաշտպանության անհրաժեշտ միջոցներ կընձեռներ նրան, ի վեր-

¹¹⁰ Նույն տեղում, էջ 56:

ջո՝ բարենպաստ արտաքին հանգամանքների դեպքում, մարտի դաշտ հանելով պատրաստի ռազմական ուժեր՝ դրական լուծում կապահովեր Հայկական հարցին: Լիովին չբացառելով ցուցական ելույթները, դրանց կիրառման միակ ընդունելի վայր համարվում էր Կ.Պոլիսը՝ նկատի ունենալով վերջինիս արեւմտահայ կենտրոն լինելու հանգամանքը, անցյալի փորձը եւ այնտեղ միջազգային միջամտություն ապահովելու մեծ հավանականությունը: Իբրեւ վերը նշվածի ամբողջացում, առաջարկվում էր երկարատեւ դիմադրության համար բոլոր ուժերը կենտրոնացնել Երկրի մի քանի ամուր եւ հարմար կետերում, նույն ժամանակ Կ.Պոլսում նախապատրաստել գործող ցույց եւ այն իրագործել, երբ որոշված կետերը կլինեն ապստամբած կամ ապստամբության պատրաստ վիճակում¹¹¹:

Վերոհիշյալ բոլոր մոտեցումներն երկարատեւ քննարկումների ենթարկելով, ընդհանուր ժողովը «...ստուար մեծամասնութեամբ (2 ձայն դէմ) սկզբունքով ընդունեց **ուժերու կեդրոնացումը** երկրին մէջ, **ցոյցը** Պոլիս եւ ծովեզերեայ քաղաքները, եւ մերժելով ֆետայական ասպատակային գործունէութիւնը՝ ընդունեց **մարտական-զինամարզական** խումբեր կազմակերպելու ծրագիրը»¹¹²: Ավելի ուշ՝ ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովը (1904թ.) վերահաստատում է ցույց-կենտրոնացումի վերաբերյալ վերը նշված որոշումը՝ միաժամանակ խիստ որոշակիացնելով «կենտրոնացում» հասկացությունը: «Կեդրոնացում, – ասվում էր այդ որոշման մէջ, – կը նշանակէ համախմբում ռազմական, դրամական եւ կազմակերպող ուժերու՝ աշխարհագրական եւ ազգաբնակչական տեսակետով նպաստաւոր պայմաններ ներկայացնող սահմանափակ վայրերու մէջ՝ իրենց անհրաժեշտ շրջանակներու հետ»¹¹³:

Այսպիսով, հայ ամենաազդեցիկ քաղաքական կուսակ-

111 Տե՛ս Նիսիք չ. 3. Դաշնակցութեան պատմութեան համար. Բ. հատոր, էջ 56–58:

112 Նույն տեղում, էջ 58–59:

113 Նույն տեղում, էջ 110:

ցությունը, որի ձեռքում 1896թ. ի վեր գտնվում էր ազատագրական պայքարի դէկը, Երկրի տարածքում սկզբունքորեն հրաժարվում էր հայդուկային-պարտիզանական պայքարի մարտավարությունից եւ իր առջեւ դնում ապագա՝ ընդհանուր ու երկարատեւ ապստամբական շարժման համար ժողովրդի ուժերն աստիճանաբար համախմբելու խնդիրը: Իսկ դա նշանակում է, որ հայոց ազատամարտը ձեռքագատվում էր նաեւ հարձակողական մարտավարության այն դրսեւորումներից, որոնք նրան բնորոշ էին դեռեւս 1896թ. սկսած: Չնայած 1898–1899թթ. Արեւմտյան Հայաստանի տարածքում տեղի են ունենում մի շարք բախումներ մի կողմից Պարսկաստանից ու հատկապէս Ռուսաստանից երկիր զենք փոխադրող զինատար խմբերի, մյուս կողմից թուրքական ու քրդական կանոնավոր եւ անկանոն ուժերի միջեւ, սակայն Խաթաւիհի, Ավերակ ջաղացի, Խաստուրի, Սպահան լճի եւ այլ կռիվները, թշնամու կողմից պարտադրված լինելով չի կարելի համարել հարձակողական մարտավարության դրսեւորում: Նույն տեսանկյունից պետք է դիտարկել նաեւ Բաքչենի, Յրոնքի եւ Աղբյուր Սերոբի ու Գուրգենի վարած վերջին մյուս մարտերը: Այդ առումով կարծում ենք ճիշտ չէ Ա. Նորյանը (Ա. Միքայելյան), որը հարձակողական մարտավարության կիրառումը հասցնում է մինչեւ 1899թ. վերջերը¹¹⁴:

Քանի որ Արեւմտյան Հայաստանի աշխարհագրական պայմանները, ժողովրդագրական վիճակը եւ ազատագրական պայքարի համար անհրաժեշտ դրամական միջոցների սակավությունն անկարելի էին դարձնում այդ խնդրի լուծումը երկրի ամբողջ տարածքի համար, ուստի ուժերի կենտրոնացման համար ընտրվում էին համեմատաբար սովոր հայ բնակչություն ունեցող այն շրջանները, որոնք աշխարհագրական հարմար դիրք եւ ազատագրական զինյալ պայքարի ավանդույթներ ունեին: Ելնելով վերը նշված չափանիշներից, ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը որպէս ուժերի կենտրոնացման եւ ապս-

114 Տե՛ս Ա.Նորյան, Դրագներ չ. 3. Դաշնակցութեան գործունէութիւնից. Ա. տասնամեակ, Բօստոն, 1917, էջ ք:

տամբության նախապատրաստման շրջաններ առանձնացնում է Բարձրավանդակը (Տարոն-Սասունի շրջան) եւ Լեռնավայրը (Կիլիկիան): Միաժամանակ խնդիր է դրվում ջանքեր գործադրել Շատախ-Վասպուրականի հաշատ շրջանը զինելու եւ այնտեղ զինամարզական-մարտական խմբեր կազմելու վերաբերյալ: Այդ նպատակով, որպես առաջին քայլ, Շատախ-Վասպուրական պետք է տեղափոխվեին եւ հավասարապես բաշխվեին Խանասորի արշավանքից հետո Ատրպատականում մնացած շուրջ 300 հրացանները¹¹⁵: Ավելի ուշ՝ ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի կողմից վերը նշված շրջանը նույնպես հավասարազոր իրավունքներով առանձնացվում է որպես ուժերի կենտրոնացման երրորդ շրջան¹¹⁶:

Մերժելով հայդուկային-ասպատակային գործունեությունը, ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը վճիռ է կայացնում ամենուրեք, առաջին հերթին ուժերի կենտրոնացման շրջաններում, տեղացի երիտասարդներից մարտական-զինամարզական խմբերի կազմակերպման օգտին: Այդ խմբերի ստեղծման նպատակ էր հռչակվում տեղացիներից հեղափոխական կռվող ուժերի պատրաստումը, հարկ եղած պարագայում դրանց օգնությամբ ժողովրդի ինքնապաշտպանության ապահովումը¹¹⁷: Նման տարբերակով փորձ էր արվում հայկական հեղափոխությունը ֆիդայական պայքարի ռեյտերից փոխադրել ժողովրդական հեղափոխության ավելի ցանկալի, բնական ու արդյունավետ հարթություն:

Որդեգրելով կենտրոնացման մարտավարություն եւ նկատի ունենալով դրա համար համեմատաբար խաղաղ ու հանգիստ պայմանների ապահովման անհրաժեշտությունը, ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովը սկզբունքային որոշում է ընդունում նաեւ կենտրոնացման շրջաններում անհատական ահաբեկումների իրականացումն էապես սահմանափակելու օգտին՝ այդ հարցում վճիռների ընդունումն արտոնելով միայն համապատասխան շրջանների

115 Տե՛ս Նիսեր Չ. Դաշնակցության սրտամորթան համար, Բ. հատոր, էջ 59:

116 Տե՛ս նույն տեղում, էջ 112:

117 Տե՛ս նույն տեղում, էջ 60:

նորաստեղծ Պատասխանատու Կենտրոնական կոմիտեներին: Խստացվում էին նաեւ կենտրոնացման վայրերից դուրս՝ Երկրի այլ շրջաններում ահաբեկումների իրականացման պայմանները: Նման մոտեցումը նպատակ ուներ ահաբեկումների իրականացումը սահմանափակել ծայրահեղ անհրաժեշտության շրջանակներում եւ հնարավորինս խուսափել դրանց արդյունքում առաջ եկող անկայուն եւ պայթյունավտանգ իրավիճակներից:

Խանասորի համեմատաբար հաջող իրականացված արշավանքի հմայքը, բնականաբար, հետագայում էլ կարող էր ազատագրական ուժերի համար հրապուրիչ պահել նման ձեռնարկների իրականացման գաղափարը՝ խոչնդոտելով ուժերի կենտրոնացման բնականոն գործընթացին: Աշխատելով բացառել նման գործողությունները, ընդհանուր ժողովը վճիռ է կայացնում ուժերի կենտրոնացման ժամանակաշրջանում նոր արշավանքների կազմակերպման անցանկալիության վերաբերյալ: Միեւնույն ժամանակ արտոնվում էր, ապստամբություն սկսվելու պարագայում, Երկրից դուրս կազմված կամավորների խմբերով արշավանքներ ձեռնարկել՝ այդ եղանակով օժանդակելով երկրում սկսված շարժմանը¹¹⁸: Այդ, մասամբ էլ ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի որոշումների հիման վրա էր, որ ավելի ուշ՝ 1903-1904թթ. կազմակերպվեցին Սասունում սկսված նոր շարժմանն օժանդակելուն միտված արշավախմբերը: Ճիշտ է այդ գործընթացում դրսևորվեցին էական ու լուրջ բացթողումներ, որոնց հետեւանքով Խանասորի արշավանքից հետո կազմակերպված արշավախմբերը, գրեթե առանց բացառության, ձախողվեցին, բայց դրանց պատճառների բնարկումը դուրս է սույն հետազոտության խնդիրների շրջանակից:

Որոշակի փոխզիջման արդյունք էին ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովի որոշումները ցուցական գործունեության վերաբերյալ: Չնայած Կ. Պոլսում նախորդ տարիներին տեղի ունեցած իրադարձությունների հետեւանքները գրեթե անհնարին էին դարձնում այնտեղ մոտ ապագա-

118 Տե՛ս նույն տեղում:

յում նոր ձեռնարկների իրականացումը, այնուհանդերձ, սկզբունքով ընդունելով Կ. Պոլսում եւ Թուրքիայի ծովեզրյա քաղաքներում ցուցական գործունեությունը շարունակելու անհրաժեշտությունը, ժողովը միաձայն վճիռ է կայացնում կենտրոնացման գործին զուգընթաց Կ. Պոլսում ցույցի անհապաղ կազմակերպման օգտին: Դրանով հանդերձ, էապես սահմանափակվում եւ խիստ որոշակիացվում են ցուցական գործունեության շրջանակները: Խնդիր է դրվում Կ. Պոլսում եւ կայսրության ծովեզրյա քաղաքներում մեծ ու փոքր ցույցեր կազմակերպել միայն երկրում հայկական ապստամբություն սկսվելու պարագայում, կամ ընդհանուր ժողովների միջեւ ընկած ժամանակամիջոցում՝ ՀՅԴ բյուրոների եւ Պատասխանատու Կենտրոնական կոմիտեների ներկայացուցիչներից ստեղծված ՀՅԴ Կամքը Ներկայացնող նորաստեղծ մարմնի կողմից նպաստավոր համարված պահին: Հատկապես երկրորդ դեպքում, երբ անհնարին կլիներ ցույցի նախապատրաստումը Կ. Պոլսում, իսկ քաղաքական հանգամանքները կպահանջեին դրա անպայման իրականացումը, ՀՅԴ Կամքը Ներկայացնող Մարմինը իրավունք էր ստանում սեփական հայեցողությամբ այն կազմակերպել կայսրության ծովեզրյա որեւէ քաղաքում:

Այդ ամենով հանդերձ, նախորդ տարիների փորձից ելնելով (Տրապիզոնի 1895թ. սեպտեմբերի դեպքերը եւ այլն), աննպատակահարմար էր համարվում ցույցերի կազմակերպումը գավառական ծովափնյա քաղաքներում՝ նկատի ունենալով քաղաքական առումով դրանց ոչ շահավետությունը, հետեւանքների անկանխատեսելիությունը եւ արդյունքում՝ նոր ջարդերի հնարավորությունը:

Սահմանափակելով եւ երկրում ծավալվող շարժման խնդիրներին ենթարկեցնելով ցուցական գործունեությունը, ընդհանուր ժողովը, մյուս կողմից, միաձայն ընդունում է տիրապետող տրամաբանությունից շեղվող մի վճիռ, որն, անշուշտ, զուտ ցուցական գործունեությամբ սահմանափակվելու գործելակերպի կողմնակիցներին արված որոշակի զիջում էր: Այդ որոշմամբ խնդիր էր դրվում

Կ. Պոլսում «Անկախ ցոյց կատարել, այսինքն՝ առանց երկրի պատրաստութիւններուն սպասելու, այն պարագային միայն, երբ անպայման մեծ ու հոյակապ գործ մը յոյս կայ գլուխ բերելու»¹¹⁹:

Թեւեւ ընդհանուր ժողովի պահպանված արձանագրություններում չի հստակեցվում վերը նշված որոշման իրական բովանդակությունը, այնուհանդերձ, կարծում ենք, եւ հետագա իրադարձություններն էլ ցույց տվեցին, որ դա Մեծ Մարդասպանին՝ սուլթան Աբդուլ Համիդ 2-րդին պատուհասելու վճիռ էր: Ճիշտ է, ՀՅԴ այդ շրջանի աչքի ընկնող գործիչներից Արամ Հակոբյանը (Կարեն), որը 2-րդ ընդհանուր ժողովի պատգամավոր էր եւ վերջինիս կողմից ստեղծված Կ. Պոլսի Պատասխանատու Կենտրոնական կոմիտեի անդամ,



Կարպետի Արամյան

հետագայում՝ Ս. Վրացյանի հարցադրումներին որպես պատասխան գրած իր նամակում պնդում է, որ Կ. Պոլսի ցույցի ձեւի հստակեցումը, այն է՝ սուլթանին ոչնչացնելու մասին վճիռը, ընդունվել է ՀՅԴ Կամքը Ներկայացնող Մարմնի Ֆիլիպետում գումարված ժողովում (Բուլղարիա, 1901թ. գարուն)¹²⁰, սակայն ուշագրավ է, որ ՀՅԴ հաջորդ՝ 3-րդ ընդհանուր ժողովը գրեթե նույն ձեւակերպումն է տալիս սուլթանի ահաբեկման խնդրին: Վերը նշված որոշման հետ համեմատելու եւ ակնհայտ նույնությունը ապացուցելու համար հարկ ենք համարում բառացիորեն մեջբերել ՀՅԴ 3-րդ ընդհանուր ժողովի կողմից Ցուցական գործունեության վերաբերյալ ընդունված բանաձեւի երրորդ կետը, որը միանշանակ



Կարեն
(Արամ Հակոբյան)

119 Տե՛ս Նիսիքը Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, Բ. հատոր, էջ 59-60:

120 Տե՛ս նույն տեղում, էջ 94-95:

վերաբերում էր սուլթանին: «Երկրի շարժումներեն անկախ գործ կատարել Վիշապի մէջ այն պարագային միայն, - ասվում էր դրանում,- երբ յոյս կայ հոյակապ ձեռնարկ մը գլուխ բերելու»¹²¹: Կարծում ենք լրացուցիչ մեկնաբանություններն ավելորդ են:

Ինչ վերաբերում է Արամ Հակոբյանի վկայություններին, ապա դրանք, արված լինելով շուրջ երեք տասնամյակների հեռվից, հասկանալիորեն կարող էին ունենալ եւ իսկապես պարունակում էին մի շարք անճշտություններ ինչպես Ֆիլիպեի ժողովի գումարման ժամկետի, այնպես էլ դրանում քննարկված հարցերի վերաբերյալ: Ֆիլիպեի ժողովն, անշուշտ, անդրադարձել է ցուցական գործունեության խնդրին, բայց, ամենայն հավանականությամբ, միայն ձեռնարկի իրականացման համար անհրաժեշտ միջոցների հայթայթման հարցի հետ կապված:



Աղբյուր Սեբոբ
(Սեբոբ Կարաբանյան)

Նկատի ունենալով նոր մարտավարության իրականացման գործընթացում շրջաններից յուրաքանչյուրի յուրահատուկ դերակատարությունը, ընդհանուր ժողովը ստեղծում է Կովածաղկի (Կ.Պոլիս), Բարձրավանդակի, Լեռնավայրի եւ Վասպուրականի Պատասխանատու Կենտրոնական կոմիտեներ՝ դրանց վրա դնելով իրենց շրջանների համար նախատեսված խոշոր ձեռնարկների իրականացման ղեկավարությունը: Պատասխանատու Կենտրոնական կոմիտեների կազմը համալրվում է մինչ այդ փորձված, պայքարի բովոլ անցած գործիչներով: Մասնավորապես, Բարձրավանդակի Պատասխանատու Կենտրոնական կոմիտեն կազմվում է այնպիսի փորձված գործիչներից, ինչպիսիք էին Աղբյուր Սեբոբը, Գուրգենը, Սեւքարեցի Սարոն (Ս. Շովանյան), Վարդանը եւ Հրայրը: Միաժամանակ, անհրաժեշտ է համարվում Բարձրավանդակ եւ Վասպուրական ուղարկել կազմակերպչական ունակություններով օժտված մտավո-

¹²¹ Նույն տեղում, էջ 113:



Գուրգեն
(Գուրգեն Մանյան)

րական գործիչներ¹²²: Հատկապես այս վերջին որոշման հիման վրա էր, որ հետագա տարիներին, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցչի կարգավիճակով, Վասպուրականում իր գործունեությունը ծավալեց Վարդգեսը, իսկ Տարոն-Մասունի շրջանում՝ Վահանը (Վ. Մանվելյան): Նրանցից առաջինը նախապես ուղարկված լինելով Տարոն-Մասունում գործելու համար, հարկադրված էր մնալ Վասպուրականում՝ տեղի կազմակերպության համար Վազգենի զոհվելուց հետո (1898թ.) ստեղծված բարդ ու ծանր իրավիճակի պատճառով:

Այսպիսով, բուն երկրում կիրառվելիք մարտավարության վերաբերյալ իր որդեգրած սկզբունքային նոր դիրքորոշմամբ եւ դրա հաջող իրագործմանը միտված կազմակերպական քայլերով ՀՅԴ-ն փորձում է արմատական րեկում մտցնել հայ ազգային-ազատագրական զինյալ պայքարի ընթացքի մեջ՝ այն ուղղորդելով դեպի համաժողովրդական զինյալ պայքարի եւ ընդհանուր ապստամբության կազմակերպման բնականոն ուղին: Կարծես այլևս ոչինչ չէր կարող խոչնդոտել հստակ մշակված քաղաքական գծի կենսագործմանը: Այնուհանդերձ, կյանքը ցույց տվեց, որ տեսականորեն ճիշտ ու հստակ մարտավարական գծի նախանշումը բազմիցս ավելի դյուրին է, քան այն գործնականում կյանքի կոչելը, որ ռեալ իրականությունը, զանազան օբյեկտիվ ու սուբյեկտիվ հանգամանքներ, հաճախ պարտադրաբար իրենց սրբագրումները կարող են մտցնել դրանյութականացման գործընթացում:



Սեւքարեցի Սարո
(Սարգիս Շովանյան)



Վահան
(Վահան Մանվելյան)

¹²² Տե՛ս նույն տեղում, էջ 63, 67-68:

Վերջաբան

Օսմանյան բռնապետության դեմ ծավալված հայ ազատագրական շարժումը 1890-ական թվականների կեսերից հարկադրված էր հրաժարվել նախորդ տարիներին բնորոշ պայքարի ձևերից և էական սրբագրումներ կատարել զինյալ պայքարի մարտավարության մեջ: Եթե մինչ այդ ազատագրական պայքարը ղեկավարած հնչակյան կուսակցությունը՝ հասկապես նրա արեւմտահայ գործիչներից ձեռավորված վերակազմյալ հնչակյան թեւը, հրաժարվելով մասնակի ցույցերի ու պարտիզանական-հայդուկային կռվի մարտավարությունից, արդեն 1896թ. որդեգրում է ընդհանուր ապստամբության նախապատրաստման գիծ, ապա այդ տարիներին հայոց ազատամարտի ղեկը ստանձնած ՀՅԳ-ն միառժամանակ փորձում է կյանքի կոչել ակտիվ, հարձակողական բնույթի քայլերով Հայկական հարցին դրական լուծում ապահովող մարտավարություն:

Հայկական զանգվածային ջարդերը, այդ տարիներին Հայկական հարցի վերաբացված լինելը, հայ ազատագրական պայքարը ղեկավարող գործիչներին հույսեր էին ներշնչում, թե հնարավոր է Արեւմտյան Հայաստանում և Օսմանյան կայսրության մայրաքաղաք Կ. Պոլսում միաժամանակ հասցված ուժեղ և կտրուկ հարվածներով քառսային իրավիճակ ստեղծել կայսրությունում և միջազգային միջամտության ճանապարհով դրական լուծում տալ հարցին:

Այդ ուղղությամբ 1896-1897թթ. ձեռնարկված քայլերը, սակայն, սպասված արդյունքը չեն տալիս: Մյուս կողմից, Կրետեի հարցի կտրուկ սրումը և դրան հաջորդած հույն-թուրքական պատերազմը թուլացնում են տերությունների հետաքրքրությունը Հայկական հարցի նկատմամբ: Նման պայմաններում, հայոց ազատամարտը դե-

կավարող քաղաքական ուժը՝ ՀՅԳ-ն, 1898թ. գունարված իր 2-րդ ընդհանուր ժողովում հրաժարվում է «գուգակցված հարվածների» մարտավարությունից, և մերժելով ազատագրական պայքարում հայդուկային-ֆիդայական կռվի դերի գերազնահատման մտայնությունն ու գործելակերպը, փորձում հայոց ազատամարտը տանել ժողովրդական հեղափոխության ուղիով՝ որդեգրելով ուժերի կենտրոնացման և երկրում ընդհանուր ապստամբության նախապատրաստման քաղաքական գիծ: Դրան համապատասխան, ընդունվում են նաև Կ. Պոլսում և կայսրության ծովափնյա քաղաքներում ցուցական գործունեության վերաբերյալ որոշումներ: Սակայն, հետագա տարիների իրադարձությունները, ցավոք, հնարավորություն չեն տալիս լիարժեք կյանքի կոչել այդ որոշումները:

Սկզբնական շրջանում Պատասխանատու Կենտրոնական կոմիտեները, տարբեր պատճառներով, չեն կարողանում արդյունավետ գործունեություն ծավալել իրենց շրջանների համար նախատեսված որոշումների իրագործման ուղղությամբ: Այդ առումով հատկանշական է հատկապես Բարձրավանդակի օրինակը: Վերջինիս Պատասխանատու մարմնի անդամությունից ի սկզբանե հրաժարվում է Վարդանը, ապա թուրքական իշխանությունների կողմից Տարոնում ձեռքակալվում է Սեւբարեցի Սաբոն՝ չկարողանալով որեւէ դերակատարություն ունենալ նոր մարտավարության կյանքի կոչման գործում: Ընդհանուր ժողովի ավարտից կարճ ժամանակ անց նահատակվում են ազատագրական պայքարի Տարոն-Սասունի շրջանի աչքի ընկնող ղեկավարները՝ Գուրգենը (ապրիլ, 1899թ.) և Աղբյուր Սերոբը (հոկտեմբեր, 1899թ.)՝ Պատասխանատու մարմնի միակ գործուն անդամի՝ Հրայրի ուսերին թողնելով նոր մարտավարության կյանքի կոչման բարդ ու դժվարին խնդիրը: Վերջինս այդ ճանապարհին ստիպված էր հաղթահարել ոչ միայն թշնամու միանգամայն բնական ու հասկանալի դիմադրությունը, այլև հայդուկային մարտավարության կողմնակից-

ների բուռն ընդդիմությունը: Իսկ դա ամենեւին էլ հեշտ խնդիր չէր, եթե նկատի առնենք, որ այդ դիմադրությունը գլխավորում էին ճանաչված հայդուկապետեր Անդրանիկը (Ա. Օզանյան), Գետրոզ Չավուշը (Գ. Ադամյան), Սպաղանաց Մակարը եւ ուրիշներ, որոնք իրենց կենսագրության մեջ ունեին թշնամու դեմ մղած բազմաթիվ մեծ ու փոքր կռիվներ:

Իշխանությունների ընտրած գործելաոճն էլ ինքնին պարարտ հող էր ապահովում հայդուկային մարտավարության որոշակի կենսունակության համար: Ցանկանալով կանխել եւ դեռ սաղմում վիժեցնել հայոց ազատամարտը համաժողովրդական ապստամբության վերածելու բնական գործընթացը, իշխանությունները եւ նրանց հովանավորությունը վայելող քուրդ ցեղապետերն արեւմտահայության նոր հարստահարություններով, բռնի ու վայրագ գործողություններով, ազատագրական ուժերին դրդում էին հանպատրաստից ելույթների: Դրա արդյունքում անօգուտ վատնվում ու փոշիանում էին ընդհանուր ապստամբության համար կենտրոնացվող զինական, դրամական ու մարդկային ռեսուրսները: Մյուս կողմից հարկ էր լինում հրաժարվել հայդուկային խմբերը ցրելու կամ դրանց գործունեությունը սառեցնելու գործելակերպից, որը, բնականաբար, նույնպես չէր նպաստում նախանշված քաղաքական գծի իրականացմանը:

Մարտավարական երկու գծերի միջեւ պայքարը Տարոն-Մասունում շարունակվում է մինչեւ 1902թ. գարունը, երբ որպես ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ այստեղ է ժամանում Վահանը, որը վերջ տալով ազատագրական ուժերի երկու թեւերի միջեւ երբեմն ծայրահեղության հասնող առճակատմանը, ասպարեզ է բացում նոր մարտավարության իրականացման համար: Բայց խիստ անիրաժեշտ ժամանակն արդեն բաց էր թողնված, քանի որ ժամանակից շուտ պայթում է Սասունի նոր՝ 1904թ. ապստամբությունը՝ անավարտ թողնելով Հրայրի ծրագրերը:

Չանագան պատճառներով, ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովին հաջորդած տարիներին, ուժերի կենտրոնացման

ուղղությամբ չեն կարողանում արդյունավետ գործունեություն ծավալել նաեւ Վասպուրականի ու Լեռնավայրի Պատասխանատու Կենտրոնական կոմիտեները:

Հայ եկեղեցու գույքի բռնագրավման մասին ցարական 1903թ. հունիսի 12-ի օրենքի հրապարակումից հետո Կովկասում տեղի ունեցած բուռն իրադարձություններն էլ իրենց հերթին հայ քաղաքական կուսակցությունների ուշադրությունն էապես շեղում են դեպի կովկասյան գործերը, որն ինքնին բացասաբար է ազդում Արեւմտյան Հայաստանում ուժերի կենտրոնացման գործընթացի վրա:

Որոշակի հանգամանքների՝ ՀՅԴ Կ.Պոլսի Պատասխանատու Կենտրոնական կոմիտեի անդամ Գարեգին Խաժակի ձեռքակալության, եւ հատկապես դրամական միջոցների սղության պատճառով, ՀՅԴ 2-րդ ընդհանուր ժողովին հաջորդած տարիներին չի հաջողվում իրագործել նաեւ սուլթանի վերաբերյալ ընդունված վճիռը: Միայն «Փոթորիկ» խմբի գործունեության արդյունքում ձեռք բերելով հետագա գործունեության համար կենսական դրամական միջոցներ, ՀՅԴ-ն իր 3-րդ ընդհանուր ժողովի որոշմամբ գործնականորեն ձեռնամուխ եղավ այդ խնդրի իրագործմանը՝ դրա համար ստեղծելով Կ.Պոլսի, իր կազմով հեղինակավոր, Յուզական մարմին՝ Քրիստավոր Միքայելյանի գլխավորությամբ: Սակայն, ինչպես «Փոթորիկի» հետ առնչվող հարցերի, այնպես էլ հետագա իրադարձությունների լուսաբանումը դուրս է սույն հետազոտության խնդիրների շրջանակից:

Отдельные аспекты армянской освободительной борьбы конца 19-го века нуждаются в новом освещении. В частности, спорным является употребляемый в историко-научной литературе тезис, согласно которому стоявшие во главе армянской освободительной борьбы политические силы, изначально применив тактику, не оправдавшую себя в дальнейших событиях, не смогли проявить надлежащую гибкость и до конца остались приверженцами этой тактики. Однако, рассматривая методы действия армянских национально-политических сил на общем фоне событий середины 90-х годов 19-го века, в первую очередь, возобновления Армянского вопроса, приходим к следующим заключениям:

1. Уже в середине 90-х годов 19-го века, после восстаний в Сасуне и Зейтуне, руководящие освободительной борьбой политические силы отказываются от идеи перерастания гайдукских боев и локальных восстаний во всеобщее восстание.

2. Партия Гнчак, в особенности ее реорганизованное гнчакское крыло, в основном представляющее западное армянство, с середины 1896-го года отказавшись от прежней формы действий, переходит к тактике подготовки общего восстания.

3. Вопреки этому, после Зейтунского восстания партия Дашнакцутюн, взявшая на себя руководство борьбой, частично отказалась от прежних методов действий и в течение почти двух лет пыталась путем наступательных шагов держать Армянский вопрос в поле зрения великих держав, и посредством дипломатического вмешательства добиться осуществления реформ. В эти годы в стержне деятельности Дашнакцутюн была зало-

жена тактика нанесения одновременных или последующих сильных ударов в Западной Армении и Константинополе. Эту тактику можем охарактеризовать как "тактика комбинированных ударов".

4. Поскольку бесспорным руководителем освободительной борьбы конца 19-го века являлась партия Дашнакцутюн, тактика "комбинированных ударов" становилась типичной в освободительной борьбе 1896-1897гг. Следовательно, именно в рамках этой тактики необходимо рассматривать такие значительные эпизоды армянской освободительной борьбы, как захват Оттоманского банка в 1896г. и Ханасорский поход 1897 года. Однако, применение этой тактики, несмотря на отдельные результаты, ввиду определенных условий, не привело к решению поставленных задач.

5. После решения Критского вопроса в 1897г. временно ослаб интерес держав к ближневосточным проблемам и дальнейшее применение тактики "комбинированных ударов" стало нереальным и бесполезным для армянского освободительного движения. Созванное в этих условиях 2-ое общее собрание партии Дашнакцутюн (1898г.), разработывает и принимает новую тактику. АРФД отказывается от тактики гайдукских боев и переходит к созданию военно-тренировочных групп. Пытаясь перевести армянское освободительное движение в русло общенародного восстания, Дашнакцутюн положил в основу своей деятельности централизацию сил в наиболее благоприятных районах для организации в будущем общего восстания. С этой целью сужаются рамки собственной деятельности в Константинополе, для которой раньше были характерны методы проведения различного рода акций, ограничиваются рамки осуществляемого террора, организации походов и т.д. путем внесения в эти вопросы существенных поправок.

Some aspects of the Armenian liberation struggle of the late 19th century need to be revised. In particular, the thesis proposed in historical literature that the political forces that led the Armenian liberation struggle had, from the very beginning, adopted the tactics that was not justified by the subsequent events, and failed to show proper flexibility remaining adherent to it to the end looks quite disputable. However, considering the methods of action of the Armenian national-patriotic forces against the general background of events of the mid-1890's, and, first of all, the renewed push for the Armenian Question, we come to the following conclusions:

1. It was already after the insurrection in Sasun and Zeytun in the mid-1890's that the political forces guiding the liberation struggle abandoned the idea of forcing the transformation of the so-called tactics of hayduk combats and local insurgencies into a general uprising.

2. The Hnchak Party, especially its re-organized Hnchak wing, that mainly represented the Western Armenians, abandoned the previous form of action and took up the tactics of preparing a general uprising beginning in the middle of 1896.

3. Despite this, after the Zeytun insurrection, Dashnaktsutiu, which assumed the leadership of the struggle, partially abandoned the previous methods of action and, for about two years, was trying to keep the Armenian Question in the field of the great powers' vision by means of offensive steps and to seek to have the reforms carried out by means of diplomatic interference. During these years, the core of Dashnaktsutiu's activities was the tactics of

delivering simultaneous or consequent heavy blows in Western Armenia and Constantinople. This tactics can be characterized as a "tactics of combined blows".

4. As the Dashnak Party was unquestionably in the forefront of the liberation struggle of the late 19th century, the tactics of "combined blows" became typical for the liberation struggle of 1896-1897. Consequently, it is within the framework of this tactics that such considerable episodes of the Armenian liberation struggle as the seizure of the Ottoman Bank in 1896 and the Khanasor campaign of 1897 should be regarded. However, some results notwithstanding, the application of this tactics failed to bring about solutions to the tasks set in view of certain conditions.

5. After the resolution of the Cretan Question in 1897, the interest of the great powers in Middle East problems temporarily slacken and further application of the "combined blows" tactics became unfeasible and useless for the Armenian liberation movement. In these conditions, the second general assembly of the Dashnak Party convened in 1898 developed and adopted a new tactics. The ARF abandoned the tactics of hayduk combats, and, assuming centralization of forces in the most favorable regions of the country for the organization of a general uprising in the future as the basis of its activities, passed on to the establishment of military-training groups, trying to put the Armenian liberation struggle on the way of a popular uprising. It was with this purpose that the framework of activities in Constantinople earlier notable for methods of conducting various kinds of actions, organization of campaigns, etc. was restricted by means of introducing considerable amendments in these issues.

Աղբյուրների և գրականության ցանկ

Ա. Սկզբնաղբյուրներ

1. Հայաստանի Հանրապետության Հասարակական Քաղաքական Կազմակերպությունների Փաստաթղթերի Կենտրոնական Պետական Արխիվ. ֆ. 4047, ց. 1, գ. 6:
2. Դիան Հ. Յ. Դաշնակցության, հ. 1, Պոսթըն, 1934:
3. Դիան Հ. Յ. Դաշնակցության, հ. 2, Պոսթըն, 1935:
4. Նիսեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Ա. հատոր, Պէյրուք, 1972:
5. Նիսեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Բ. հատոր, Պէյրուք, 1985:
6. Նիսեր Հ. Յ. Դաշնակցության պատմության համար, Դ. հատոր, Պէյրուք, 1982:
7. Թեոդիկ Ամենուն տարեցույց, ԺԶ տարի, 1922:
8. Գ. Լազեան, Հայաստան և հայ դատը հայեցողու յարաբերություններու լոյսին տակ, Երեւան, 1991:
9. Օրագիր Հնչակեան Կուսակցության, Լոնդոն, 1897:
10. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923), խմբագրությամբ Ջ. Ս. Կիրակոսյանի, Երեւան, 1972:
11. Յուզամատեան Հայ Յեղափոխական Դաշնակցության, Ալբոմ-Ատլաս, Ա. հատոր, 1890-1914, Լոս Անճելես, 1992:
12. Յուզապատում Հ.Յ. Դաշնակցության, 1890-1950, Բոստոն, 1950:
13. Յոնան Դարեան, Ա. հատոր, Արէնք, 1988:
14. Պատմագրություն Հայ Յեղափոխական Դաշնակցության (քառահատոր շարք), Ա. հատոր, Արէնք, 1990:
15. Ռոստոմ, մահուան վարսունամեակին առթիւ, Պէյրուք, 1979:
16. Братская помощь пострадавшим из Турции Армянам, Москва, 1898.

Բ. Մենագրություններ, հուշագրություններ և հոդվածներ

1. Ա. Ամուրեան, Հ.Յ. Դաշնակցությունը Պարսկաստանում 1890-1918, Թեհրան, 1950:
2. Արմեն Գարո, Ապրում օրեր, Բոստոն, 1948:
3. Եղիշէ Ա.-Ք. Գեղամեանց, Ռուս բիրօկրատիան և հայերը (մտորումներ), Բագու, 1917:
4. Հ. Գրիգորյան, Ահաբեկչությունը որպես ազգային-ազատագրական պայքարի ձև (XIX դարի վերջ-XX դարի սկիզբ), «Հայոց ցեղասպանություն. պատճառներ, դասեր», մաս 2, Երեւան, 1995:

5. Գուրգեն Եազընեան, Ապտիլ Համիտ Բ. Կարմիր Սուլթանը, Պէյրուք, 1980:
6. Համբարձում Երամեան, Յուշարձան Վան-Վասպուրականի, հատոր Բ., Աղեքսանդրիա, 1929:
7. Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925:
8. Լեո, Թիւրքահայ յեղափոխության գաղափարաբանությունը, հ. Բ., Փարիզ, 1935:
9. Լ. Խորշոռյան, Հայկական հարցը, Երեւան, 1995:
10. Ա. Մանդելշտամ, Ռուսաստանի քաղաքականությունը Թուրքահայաստանում մեծ պատերազմի նախօրեակին, «Վէմ», 1935, N 1:
11. Լ. Սկրտչյան, Օսմանյան բանկի գրավման գործողությունը 1896 թվականին, «Բանբեր Երեւանի համալսարանի», 1994, N 3:
12. Ա. Նորեան, Դրագներ Հ. Յ. Դաշնակցության գործունեությունից, Բոստոն, 1917:
13. Լ. Չորմիսեան, Համապատկեր արեւմտահայոց մէկ դարու պատմության, Բ. հատոր, Պէյրուք, 1974:
14. Պատմություն Ա. Դ. Հնչակեան կուսակցության 1887-1962, Ա. հատոր, Պէյրուք, 1962:
15. Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, հհ. 2-3, Երեւան, 1990:
16. Կարօ Սասունի, Պատմություն Տարօնի աշխարհի, Պէյրուք, 1956:
17. Արշակ Օ. Սարգիսեան, Հայոց հարցը ինքնանական բախաններում (ըստ ամերիկեան պատմագրի), «Վէմ», 1938, N 3:
18. Մ. Վարանդեան, Հ. Յ. Դաշնակցության պատմություն, Երեւան, 1992:
19. Էդուարդ Տարօնեան, Արիւնոտ և արեւոտ էջեր (դրագներ Հ.Յ.Դ. գործունեութենէն), Պէյրուք, 1934:
20. В. А. Емец, А. В. Игнатиев и др., История внешней политики России. Конец XIX начало XX века, Москва, 1999.
21. Лорд Кинрос, Расцвет и упадок Османской империи, Москва, 1999.
22. П. С. Княгинина, В. А. Георгиев, М. Т. Наиченкова, В. Шеремет; Восточный вопрос во внешней политике России (конец XVIII-начало XX в.), Москва, 1978, с. 268.
23. М. Кочар, Армяно турецкие общественно-политические отношения и Армянский вопрос в конце XIX-начале XX веков, Ереван, 1988.

Գ. Մամուլ

1. «Դրօշակ», 1891, N 2, 1896, N 20, 21, 23, 27:
2. «Հայրենիք» ամսագիր, 1941, NN 3, 8, 1942, N 5, 1943, NN 2, 4, 5, 1944, NN 1, 2, 3:
3. «Վէմ», 1935, N 1, 1938, N 3:

Բովանդակություն

Ներածություն.....	3
1. «Չուգակցված հարվածներին» մարտավարությունը.....	5
2. Նոր մարտավարության որոնման ուղիներում	52
3. ՀՅԴ-2-րդ Ընդհանուր ժողովը. ազատագրական պայքարի նոր մարտավարության մշակումը	72
Վերջաբան	86
Резюме	90
Resume	92

ՀՈՎԻԿ ԲԱԲԿԵՆԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԼՅ ԱԶԼՏԱԳՐԿԵՆ ԴԼՅԲԼՐԻ
ՍԼՐՏԼՎԼՐՈՒԹՅՈՒՆԸ

1895-1898 թթ.

«Նոյյան տապան» հրատարակչություն

Հրատ. խմբագիր՝	<i>Լ. Խաչատրյան</i>
Տեխ. խմբագիր՝	<i>Գ. Գրիգորյան</i>
Մոնտաժը՝	<i>Ա. Ազարյանի</i>
Տպագրիչներ՝	<i>Ս. Չիչյան</i> <i>Ա. Ազարյան</i>

Գրքի չափսը՝ 60x84 1/16:
Թուղթ՝ օֆսեթ I կարգ:
Տառատեսակը՝ "Times Armenian":
Տպագրական մամուլ՝ 6:
Տպարանակ՝ 500:

«Նոյյան տապան» տպագրատուն
Երևան 9, Խատակյան 28
Ֆաքս/հեռ.: (3741) 52 42 79, (3741) 56 19 05
"Noyan Tapan" Publishing House
Address: Street Issahakian 28
Tel: (3741) 56 19 05
Fax: (3741) 52 42 79
E-mail: contact@noyan-tapan.am
URL: http://noyan-tapan.am